



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

491.99-8  
Ա-82

ՅՈՎ. ԱՐԱՐԱՋՆՈՆ

# ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

ԵՐԿՐՈՐԳ ՏԱՐԻ

(Պատկերներով և բերականական վարժութիւններով գրաւ ր  
աշխատութիւնների համար)

*Допущена Попечительским Советом Кавказскаго Учеб-  
наго Округа къ употребленію въ училищахъ.*

ԳԻՆԸ 30 ԿՈՊԵԿ

ԶՈՐՐՈՂ ՎՊԱԳՐՈՒՐԻՆ

ԱԼԷՔՍԵՆԴՐԱՊՈԼ

Տպարան Գէորգ Ս. Սանդեանցի

1905

20 FEB 2013

7937

04 MAY 2010

491.99-8  
u-82  
u

ՅՈՎ. ԱՐԱՐԱՋԵՆ

# Մ Ա Յ Ր Ե Ն Ի Լ Ե Զ Ո Ւ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

(Պատկերներով եւ քերականական վարժութիւններով զրատը աշխատութիւնների համար)

1006  
29332

*Допущена Попечительским Советом Кавказского Учебного Округа къ употребленію въ училищахъ.*

Գ Ի Ն Ը 30 409 Է 4

Զ Ո Ր Ր Ր Գ Ե Վ Վ Ե Ր Ի Ը Ե

ԱԼԷԿՍԱՆԴՐԱԳՕԼ  
Տպարան Գէորգ Ս. Սանդիանցի  
1905.

9105 YAM 0

1905 OCT 11

U R S S R F S S R

1905 OCT 11

Дозволено Цензурою, 11 Октября 1905 г. Г. Тифлисъ.

# ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

ԵՐԿՐՈՐԳ ՏԱՐԻ

## 1. ԾՈՅԼ ԱՀԱԿԵՐՏԸ



«Այսօր չեմ ուզում դասի գնալ. լաւ է՝  
գնամ խաղալու, — վճռեց մի փոքրիկ մա-  
նուկ և վազեց դէպի դաշտ:

Բայց շուտով նա մենակ ձանձրացաւ:  
Չորս կողմը նայեց և տեսաւ, որ մեղուն

թռչկոտում է ծաղկից ծաղիկ:

— Մեղնւ, մեղնւ, — կանչեց մանուկը, — արի, մի քիչ խաղանք:

— Չէ, — պատասխանեց մեղուն. — ես քեզ նման ծոյլ չեմ, որ  
գործս թողած, խաղն սկսեմ. խաղն մենակ:

Դրանից յետոյ մանուկը տեսաւ մի փոքրիկ թռչուն, որ կտուցով  
խոտ էր կրում իւր բունը:

— Սիրուն թռչնակ, — ասաց նրան երեխան. — մի քիչ խաղանք:

— Ի՞նչ ես ասում, ծոյլ տղայ, — բարկացաւ թռչնակը. — ես ժա-  
մանակ ունիմ խաղալու. ես գեռ պէտք է մտեղներ որսամ՝ ձագե-  
րիս կերակրեմ, բուրդ, փետուր հաւարեմ՝ բունս փափկացնեմ:

Մանուկը մտածմունքի մէջ ընկաւ: Մտածեց, մտածեց և վա-  
զեց դպրոց:

Ի՞նչ մտածեց մանուկը:

## 2. ՏԻՈՒՐ ԵՐԵԽԱՅ

Երբոր ծագեցաւ պայծառ արեգակ,  
Արլոր, ազանի, հաւ ու ծիծեռնակ,  
Ձի, ոչխար, գառնուկ, այծ, ուլ, հարթ ու կով  
Գնացին իրանց գործին շտապով:

Միայն ծոյլ տղան չգնաց դպրոց,  
Գիրքը շպրտեց ու փախաւ փողոց.  
Իրիկուն ամենք յետ դարձան ուրախ,  
Միայն տղան էր տրտում, գլխակախ:



## 3. ԶԱՆԱՍԷՐ ՄԱՆՈՒԿԸ

Ա.

Ջանասէր մանուկը լուսամուտի առաջ նստած իւր դասերն էր սովորում, իսկ փայլուն արեւը նրան դուրս էր հրաւիրում, ասելով.

— Սիրուն երեխայ, բաւական չէ կարդաս, դուրս արի, մի քիչ էլ խաղա՛:

— Ո՛չ, պայծառ արև, ես դեռ չեմ կարող խաղալ, պէտք է դասերս պատրաստեմ:

Բ.

Մանուկը կարգում ու գրում էր. յանկարծ մի փոքրիկ թռչունակ թրթռալով եկաւ, լուսամուտի առաջ նստեց և ծըլվելալով ասաց.

— Սիրուն երեխայ, հերիք է, որքան գրեցիր, դուրս արի, խաղա՛, ուրախացիր:

— Ո՛չ, սիրուն թռչնակ, — պատասխանոց մանուկը. — ես դեռ չեմ կարող խաղալ. պէտք է դասերս լաւ պատրաստեմ:

Գ.

Մանուկը շարունակում էր գրել ու կարդալ, իսկ պարտիզի միջից կարմիր կեռասը կարծես ասում էր նրան.

— Սիրուն մանկիկ, բաւական չէ աշխատես. դուրս արի, հասած պտուղներս կեր, կշտացիր:

Իսկ մանուկը մտածում է. «Ի՞նչ ախորժակով կեռաս ուտեմ, քանի որ դասերս դեռ չեմ սովորել»:

Դ.

Մանուկը գործը վերջացրեց, գրքերը հաւաքեց, ուրախ-ուրախ դուրս վազեց և համարձակ կանչեց.

— Այն սփ էր ինձ հրաւիրում. եկէք, ես պատրաստ եմ:

Այժմ արեւը նրա համար աւելի պայծառ էր փայլում, թռչունակը աւելի քաղցր էր երգում, իսկ կեռասը նրան անչափ համեղ էր թւում:

Ինչո՞ւ:

## 4. ՀՐԱՒԷՐ

Հաւը խօսեցաւ, օրը բացուեցաւ,  
Արևն էլ վաղուց ելաւ, բարձրացաւ.  
Խելճք մանուկներ, շուտ հագնուեցէք,  
Չուտով դասատուն դուք հաւաքուեցէք:

Մարդ և անասուն, գազան և թռչուն,  
Ամենքն էլ իրանց գործին են գնում.  
Մրջիւնը բերնով կերակուր տանում,  
Մեղուն ծաղկիցը հիւթեր է ծծում:

Դաշտը գոյնզգոյն ծաղկով զարդարուած,  
Մարգագետինը կանաչ հագնուած.

Անտառը ձմեռուայ քնից արթնացած,  
Իւր տերեւները շարժում է կամաց:

Չկնորսներն իրանց ուռկանն են քաշում,  
Հնձողներն իրանց մանգաղը շարժում.

Դուք էլ, մանուկներ, ձեր գրքերն առէք.  
Աստուած ծուլութիւն չի սիրում երբէք:

Գ Բ Ե Ի Ո Ր Վ Ե Ր Փ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

1. Գրեցէք բոլոր այն առարկաների անունները, որոնք դուք տեսնում էք գաստտան մէջ: Իւրաքանչիւր բառից յետոյ վերջակէտ գրէք: Սկիզբը և վերջակէտից յետոյ գլխատառ գրեցէք:

Օրինակ:—Սեղան: Աթոռ: Գիւղ... .

2. Արտագրեցէք «Տ ի ու ը եր ե ի ա յ» ոտանաւորից բոլոր շնչաւոր առարկաների անուններն իրանց սկզբնական ձևով:

Օրինակ:—Աքլար: Աղանի: Հաւ... .

3. Արտագրեցէք «Ջ ա ն ա ս էր մ ա ն ու կ ը» յօդուածից բոլոր անշունչ առարկաների անուններն իրանց սկզբնական ձևով:

Օրինակ:—Հուսամուտ: Դաս: Արեւ... .

4. Գրեցէք առանձին-առանձին շնչաւոր և անշունչ առարկաների անունները:

Թռչուն: Բու: Բալ: Թաշկինակ: Բար: Կատու: Չի: Բաղ:  
Թել: Կով: Գիւղ: Գայլ: Ծանձ: Թուղթ: Կոունկ: Հաւ: Սեղան:  
Շուն: Գիւղ: Բանալի: Պատուհան: Սենեակ: Գետ: Աշակերտ:  
Աթոռ: Կարաս: Մատ: Գլուխ: Գիւղացի: Բաղարացի:

5. ՀԱՅՐԸ ԵՒ ՈՐԴԻՔԸ

Մի մարդ երկու որդի ունէր— մեծը տասներկու տարեկան էր, իսկ փոքրը՝ տասը: Մի անգամ հարեաններն ասացին, թէ նրա որդիքը ծիծաղել են մի պառաւ կնոջ վրայ: Հայրը խիստ յանդիմանեց նրանց և երեխաները խոստացան ուղղուել: Բայց մի-

քանի ժամանակից յետոյ մանուկները մոռացան իրանց խոստումը և, մի ծերունու պատահելով, սկսեցին ծաղրել նրան: Այս բանն էլ հօր ականջին հասաւ:

Միւս օրը հօր տօնն էր: Որդիքը եկան շնորհաւորելու և երկար կեանք մաղթեցին նրան:

—Ջաւակներս,—ասաց հայրը,—ես չեմ ցանկանում երկար ապրել. վախենում եմ, որ երբ ծերանամ, չար մանուկները ծիծաղեն ինձ վրայ:

Երեխաները հասկացան, թէ ինչ է ուզում ասել հայրը և սաստիկ ամօթից չգիտէին, ինչ անեն: Այն օրից նրանք այլևս չէին ծիծաղում ծերունիների վրայ:

6. Գ Ի Ի Ղ Ի Գ Ր Ա Գ Է Տ Ը

Իւր որդուց մայրը  
Նամակ ստացաւ,  
Կարօտած սիրտը  
Վեր ու վար եղաւ:

Որդին հեռու էր,  
Օտար քաղաքում,  
Ծառայում մի տան,  
Դպրոցում սովորում:

Նայում է թղթին,  
Սիրուն նշաններ,  
Բայց այդ գրերի  
Միտքը չգիտէր:

Տղան ինչ է գրել,  
Պէտք է իմանար,  
Բայց նրա տանն էլ  
Կարդացող չկար:

Դուրս եկաւ փողոց,  
Մի քարի նստեց,  
Գիւղի տէրաէրի  
Որդուն հանդիպեց:

Եւ նրան կանչեց.  
—Տէրաէրի տղայ,  
«Մօտս եկ, ապրես,  
«Այս թուղթը կարդա՛»:

7. Ե Ղ Բ Ա Յ Ր Ն Ե Ր

Գիւղացին եօթը որդի ունէր: Հայրը միշտ պատուիրում էր նրանց, որ հաշտ ապրեն միմեանց հետ, բայց եղբայրները չէին կատարում հօր պատուէրը և իրանց օրը կոտուով էին անցկացնում:

Մի անգամ էլ հայրը հրամայեց մի ցախաւել բերել և ասաց որդոցը.

— Ձեզանից ով որ կտորէ այս ցախաւելը, հարիւր մանէթ կըստանայ ինձանից:

Եղբայրները շատ չարչարուեցին, բայց չկարողացան կտտորել:

Այն ժամանակ հայրը քանդեց ցախաւելի կապերը և բոլոր ճիւղտները ջուկ-ջուկ կտտորատեց:

— Տեսէք, — ասաց նա որդոցը. — Թող այս ցախաւելը ձեզ օրինակ լինի. եթէ դուք հաշտ ապրէք, ձեզ ոչ ոք չի կարողանայ յաղթել. իսկ եթէ իրար հետ կռուէք և միմեանց հակառակ լինէք, ձեզ ամեն մարդ էլ հեշտութեամբ ջուկ-ջուկ կըսնչացնէ:

### 8. ՈՐԲԻ ՊԱՆՏԱՆՔ

Որբ եմ անտուն, անպաշտպան,  
Տուէք, խնդրեմ, ապաստան,  
Տուէք սնունդ և ուտում,  
Ես մարդ զառնալ եմ ունում:

Ձեմ ցանկանում շրջել զուր,  
Անեործ ընկնել դռնէ-դուռ,  
Չրի մուրալ ու ապրել,  
Ողորմութեան սովորել:

Առէք ձեզ մօտ որդեգիր,  
Տուէք ձեռքս արհեստ, գիր,  
Լինիմ խելօք ու ազնիւ,  
Վայլեմ միշտ սէր, պատիւ:

### ԳՐԵՒՈՐ ՎԱՐԹՈՒԹԻՒՆՆԵՐ

5. Արտագրեցէք հետեւեալ բառերը եզակի և յոգնակի թուով:

Հաւ—հաւեր: Օր—օրեր: Գործ—գործ... Դաշտ—դաշտ...  
Քար—քար... Գոյն—գոյն... Բոյր—բոյր... Սար—սար... Բաղ—  
բաղ... Խոտ—խոտ... Յանց—ցանց... Խուչ—խաչ... Գիւղ—  
գիւղ... Աւալ—ավալ... Գունդ—գնդեր: Թուղթ—... Տուն—...  
Գիրք—... Միրգ... Մանուկ—մանուկներ: Թռչուն—թռչուն...  
Բերան—բերան... Մեղու—մեղու... Ծաղիկ—ծաղիկ...

6. Արտագրեցէք «Հայրը և որդիքը» յօդուածից բոլոր գոյական անուններն իրանց սկզբնական ձևով:

Օրինակ:—Հայր: Որդի: Մարդ:

7. Արտագրեցէք հետեւեալ նախադասութիւնները և փակագծերի մէջ հարցեր աւելացրէք: Հարցերի սակ զիծ քաշեցէք:

Կովը (ո՞վ) բառաչում է: Արեւը (ի՞նչը) ծագեց: Աշակերտը (... ) խաղում է: Անձրեւ (... ) է գալիս: Սագը (... ) լողում է: Արծիւը (... ) թռչում է: Սոխակը (... ) երգում է: Օձը (... ) սողում է: Ծառը (... ) ծաղկեց:

### 9. ՎԱՏ ԸՆԿԵՐ

Հայրը տեսաւ, որ իւր որդին վատ ընկերներէ հետ է ման դալիս:

— Ձաւակս, — ասաց նրան, — հեռու կաց դրանցից. դրանք քեզ կըփչացնեն:

— Ո՛չ, հայրիկ, — պատասխանեց մանուկը, — ճիշտ է, իմ ընկերները վատ են, բայց ես կաշխատեմ նրանց ուղղել:

Հայրը վեր առաւ մի կողով, որտեղ միքանի փչացած խրնձորներ կային և նրանց մէջ մի գեղեցիկ կարմիր խնձոր և մի մաքուր քար դնելով, ասաց որդուն.

— Թո՛ղ սրանք մնան այստեղ, տեսնենք՝ ինչ կըլինի:

Երեք օրից յետոյ հայրը որդուն բերեց կողովի մօտ. նայեցին և ինչ տեսան: Գեղեցիկ կարմիր խնձորն էլ արդէն սկսել էր նեխուել, փչանալ, իսկ քարն, իհարկէ, ամենևին չէր փոխուել:

— Տեսնում ես, — ասաց հայրը որդուն. — եթէ դու էլ այս քարի նման պինդ ես, ես քեզ չեմ արգելիլ վատ մարդկանց հետ ընկնել. իսկ եթէ թոյլ ես, ինչպէս այս խնձորը, այն ժամանակ ինքդ էլ կըփչանաս վատ ընկերների մէջ:

10. Գ Ի Ր

Կարդա՛, այ իմ խելօք մանուկ,  
Կարդա՛, զրբը դու ամեն օր.  
Գիր կարդողի խելքն է կտրուկ,  
Միտքը—պայծառ ու լուսաւոր:

Գիր կարդալով՝ դու աշխարհիս  
Կրճանաչես չարն ու բարին.  
Ո՛վ է խնդում, ո՛վ է լալիս,  
Ո՛վ է զրկում խեղճ թշուառին:

Դու կիմանաս, ինչո՞ւ մարդիկ  
Պէտք է ապրեն իրար համար.  
Ի՞նչ է մարդկանց ցան ու կարիք,  
Ի՞նչ է լոյսը, ի՞նչ է խաւար:

Կարդա՛, դու իմ խելօք մանուկ,  
Կարդա՛, զրբը դու ամեն օր.  
Գիր կարդողի խելքն է կտրուկ,  
Միտքը—պայծառ ու լուսաւոր:

11. ՈՐԿԻՍԿԱՆ ՍԷՐ

Մի երեխայ, փողոցի միջով վազելիս, ընկաւ կառքի տակ.  
անին անցաւ նրա ոտի վրայով և ջարդեց: Խեղճ երեխային  
վերցրին և տուն տարան: Նրա մայրը տանը հիւանդ պարկած  
էր և հէնց որ լսեց որդու լացուկոծը, վախից ուշաթափուեց:

Երեխան իսկոյն կտրեց ձայնը և, մինչդեռ ուղղում ու կա-  
պում էին ոտը, նա ամենևին ձայն չհանեց:

—Միթէ՞ դու ցաւ չես զգում,—հարցրեց նրան վերջապէս  
բժիշկը:

—Օ՛, սաստիկ,—հաւաչեց մանուկը,—բայց ես չեմ ուղում,  
որ մայրիկս իմանայ այդ. նա շատ կը վշտանայ:

12. ՕՐՕՐՈՑԻ ԵՐԳ

Արի, իմ սոխակ, թո՞ղ պարտէզ, մէրին,  
Տաղերով քուն բեր տղիս աչերին.  
Բայց նա լալիս է, դու, սոխակ, մի՛ գալ.  
Իմ որդին չուզէ տիրացու դառնալ:


Ե՛կ, արեղաձագ, թող արտ ու արօտ,  
Օրօրէ՛ տղիս, քնի է կարօտ.

Բայց նա լալիս է, դու, ձագճուկ, մի՛ գալ.  
Իմ որդին չուզէ արեղայ դառնալ:

Թո՞ղ դու, տատրակիկ, քո ձագն ու բունը,  
Վուվույով տղիս բեր անուշ քունը.  
Բայց նա լալիս է, տատրակիկ, մի՛ գալ.  
Իմ որդին չուզէ սգաւոր դառնալ:

Կաշաղակ ճարպիկ, գոգ, արծաթասէր,  
Չահի զրուցով որդուս քունը բեր.  
Բայց նա լալիս է, կաշաղակ, մի՛ գալ.  
Իմ որդին չուզէ սովորաբար դառնալ:

Թո՞ղ որսդ, արի, քաջասիրտ բազէ,  
Քո երգը գուցէ իմ որդին կուզէ:  
Բազէն որ եկաւ, որդիս լռեցաւ,  
Ռազմի երգերի ձայնով քնեցաւ:



ԳՐԱԻՈՐ ՎԱՐՓՈՒԹԻՆՆԵՐ

8. Արտազրեցէք «Վատ ընկեր» յօդուածից թէ շնչաւոր և թէ ան-  
շունչ առարկաների անունները եզակի և յոգնակի թուով:

Օրինակ:—Եզակի թ.—Ընկեր: Հայր: Որդի:

Յոգնակի թ.—Ընկերներ: Հայրեր: Որդիներ:

9. Գրեցէք ձեզանից մի քանի փոքրիկ նախադասութիւններ եզակի թուով:  
Իւրաքանչիւր նախադասութիւնից յետոյ վերջակէտ դրէք: Վերջակէտից յետոյ  
գլխատառ գրեցէք:

Օրինակ:—Ընկերս եկաւ ծիտը ծըլվարում է:

10. Արտագրեցէք միևնոյնը յոգնակի թուով:

Օր ի ն ա կ, — Ը ն կ ե ը ն ն եր ս ե կ ա ն:

11. Արտագրեցէք և հարցերին յարմար բառեր աւելացրէք:

Մանուկը (ո՞վ) պատասխանեց: Աստղը (ի՞նչը) փայլում է:

..... (ո՞վ) նկատ: ..... (ի՞նչը) ընկաւ: ..... (ո՞վ) սովորեցնում է:

..... (ո՞վ) երգում է: ..... (ի՞նչը) պայծառ է: ..... (ո՞վ) վերադար-

ձաւ: ..... (ո՞վ) կծում է: ..... (ի՞նչը) մաքուր է:

### 13. Հ Ր Ա Չ Ա Լ Ի Խ Ո Տ

Երկու աղախին, Աննան ու Կատարինէն, քաղաք էին գնում: Նրանցից ամեն մէկը մի կողով խնձոր էր տանում: Աննան շարունակ տրտնջում էր ու հառաչում, իսկ Կատարինէն ծիծաղում ու կատակներ էր անում:

— Ասա, խնդրեմ, ինչն է պատճառը, որ դու այդպէս ուրախ ուրախ ծիծաղում ես. — հարցրեց վերջապէս Աննան. — չէ՞ որ քո կողովն էլ իմիս պէս ծանր է և դու էլ ինձանից ուժեղ չես:

— Ճշմարիտ ես ասում, — պատասխանեց Կատարինէն. — բայց ես իմ կողովումս մի այնպիսի խոտ եմ դրել, որից ամեն բեռ թեթեւանում է:

— Մի՞թէ. այդ ինչպիսի խոտ է և որտեղից ես ճարել, — հարցրեց Աննան զարմացած:

— Թէ որտեղից եմ ճարել, այդ ես էլ չգիտեմ, — պատասխանեց Կատարինէն. — միայն անունը կարող եմ ասել. դա կոչւում է համբերութիւն, որից դու զուրկ ես, սիրելի Աննա:

Համբերութիւնը կեանք է:

### 14. Պ Ա Պ Ը Ե Ի Թ Ո Ռ Ն Ի Վ Ը

Ա.

Պապը սաստիկ ծերացել էր: Նրա աչքերը լաւ չէին տեսնում, ականջները ծանրացել էին. նրա ձեռներն ու ոտները ծե-

րութիւնից դողդողում էին, այնպէս որ՝ գրալը բերանը տանելիս՝ կերակուրը կաթկըթեցնում էր:

Այս բանը դիւր չէր գալիս նրա որդուն ու հարսին: Նրանք ծերին իրանց հետ հացի չէին նստացնում, այլ մի անկիւնում առանձին տեղ էին տալիս հաց ուտելու:

Մի անգամ, ճաշի ժամանակ, ծերի ձեռները դողդողացին, կաւէ ամանը վայր ընկաւ և կոտորուեցաւ: Աւելի ևս բարկացան հարսն ու որդին խեղճ ծերի վրայ և զրանից յետոյ փայտէ ամանով էին կերակուր տալիս նրան:

Բ.

Ծերունին մի թռռնիկ ունէր: Մի օր մանուկը, յատակի վրայ նստած, տաշեղներից ինչ-որ բան էր շինում:

— Այդ ինչ ես շինում, որդի, — հարցրեց նրան մայրը:

— Փայտէ աման եմ շինում, մայրիկ, որ երբ դու և հայրիկս ծերանաք, նրանով կերակուր տամ ձեզ, — պատասխանեց մանուկը:

Հայրն ու մայրը իրար նայեցին և ամօթից կարմրեցան: Նրանք այնուհետև սկսեցին ծերին շատ պատուով պահել:

Պատուիւր ծերին, որ ծերանաս: Ծերանաս, ծերի պատիւը կիմանաս:

### 15. Մ Ե Ց Ե Ր Ե Ի Փ Ո Ք Ր Ե Ր


Գարեգինը, պատուհանի առաջ կանգնած, նայում էր դէպի փողոց, որտեղ պառկած էր նրանց գամբուր — Բօղարը և տաքանում էր արեգակի տակ:

Յանկարծ Բօղարին մօտեցաւ մի փոքրիկ քոթոթ և սկսեց սաստիկ անհանգստացնել նրան — յարձակում էր վրան, հաչում էր և կրճոտում նրա ահագին թաթերն ու դունչը:

— Սպասիր, — ասաց Գարեգինը. — նա քեզ խրատ կըտայ:

Քոթոթը շարունակում էր իւր շարութիւնները, իսկ Բօղարն ամենեւին չէր բարկանում նրա վրայ և տեղից չէր շարժում:

—Տեսնում ես,—ասաց հայրը Գարեգինին.—Քողարը քեզանից բարեսիրտ է. նա իրանից փոքրին չի դիպչում: Իսկ երբ քո փոքր եղբայրներն սկսեն քեզ հետ խաղալ, այն ժամանակ անշուշտ ձեր խաղը կըվերջանայ նրանով, որ դու նրանցից մէկին կամ միւսին մի զրկանք կըհասցնես:



16. ՀՈՒՆՆ ՈՒ ԿՍՏՈՒՆ

Ա.

Ժամանակով կատուն ճօն՝ էր,  
Հունն էլ գլխին գտակ շունէր.  
Միայն, գիտեմ ոչ՝ որտիանց-որտի՝  
ձանկել էր մի գառան մորթի:  
Եկաւ մի օր, ձմրանամտին,  
Կատուի կուշտը տարաւ մորթին.  
—Բար՛ յաշողում, ուստա՛ Փիսօ,  
«Գլուխս մըսեց, ի սէր Սասոյ,  
«Ա՛ռ էս մորթին ու ինձ համար  
«Մի գտակ կարի՛ գլխիս յարմար՝  
«Վարձդ կըտամ, միամիտ մնա՛,  
«Միայն խնդրում եմ, շատ չուշանայ»:—  
—Աչքիս վրայ, քեռի՛ Քուշի,  
«Մի գգակ ա, խու մի քուրք չի.

<sup>1</sup> ճօն—գերձակ: <sup>2</sup> Որտիանց-որտի—որտեղից որտեղ:

«Քու լժանկազին խաթեր համար  
«Ուրբաթ օրը համեցէք տար.  
«Փողի մասին աւելորդ ա.  
«Մեր մէջ խօսալն էլ ամօթ ա.  
«Ի՞նչ վենձ՛ բան ա, տօ՛ հէր օխնած,  
«Հա՛, հա՛, հա՛... մի գգակի վարձ...»:

Բ.

Ուրբաթ ծէզին քեռի՛ Քուշին  
Ուստից ծէրքին<sup>2</sup>, բաց բաց կուճին<sup>3</sup>  
Թափ թափ տալով, ծանդրը ու մեծ  
Ուստա կատուի շէմքում կանգնեց.  
—Ուստէն ո՛ւր ա... փափախս ո՛ւր ա...  
—Մի քիչ կացի՛, հրէս կերեայ:  
Ուստէն եկաւ քուրքը հազին.  
Չանը տեսաւ, քթի տակին  
Իրան-իրան քիչ փնթփնթաց  
Ու մուշտարու վրայ թնդաց.  
—Ցրտատմբ էլար... վահ, տնա՛շէն,  
«Չես թողնում, որ մի շունչ քաշեն.  
«Մհաթ<sup>4</sup> խու չի, դեռ հլա նոր եմ  
Ցրցամ տուել<sup>5</sup>, թէ՛ որ կարեմ»:—  
—Գէ՛ հէր օխնած, էտենց<sup>6</sup> ասա՛,  
«էդ բարկանալդ էլ ինչիս ա.  
«Փող եմ տուել, շուտով կարի,  
«Թէ՛ չէ ասա՛, էգուց արի...»  
Ասաւ Քուշին ու նեղացած  
Վերադարձաւ գլուխը բաց:

Գ.


Մին էլ եկաւ, դարձեալ չկար.  
էս անգամը դիպան իրար.  
էլ անպատիւ, պետոր<sup>7</sup> խօսքեր,

<sup>1</sup> վենձ—մեծ: <sup>2</sup> Ծէրքին—վաղ, կանուխ: <sup>3</sup> Կուճին—գլուխը: <sup>4</sup> Մհաթ—  
ժամացոյց: <sup>5</sup> Ցրցամ տալ—Չուր սրսկել: <sup>6</sup> էտենց—այդպէս. <sup>7</sup> Պետոր—անպատիւ:

էլ հին ու նոր, էլ հէրն ու մէր,  
 էլ գող Փիսօ, էլ քաշալ շուն...  
 Բանը հասաւ դիւանբաշուն<sup>1</sup>:  
 Մինչև շունը գնաց — եկաւ,  
 Ուստա կատուն կոտորն ընկաւ<sup>2</sup>,  
 Գլուխն առաւ ու մի գիշեր  
 Հայտէ, կորաւ. էն գնալն էր:

Դ.

էն օրուանից մինչև օրս էլ  
 Չունն էս բանը չի մոռացել.  
 Մտքումը հլա դեռ պահում ա.  
 Որտեղ կատուին պատահում ա,  
 Վրայ ա վազում, մորթուց քաշում,  
 Իրան մորթին ետ ա ուզում.  
 Իսկ սենրես կատուն յանկարծ  
 Ետ ա դառնում ու բարկացած  
 Փշտացնում ա, մթամ<sup>3</sup> նոր եմ  
 Տրցամ տուել, թէ որ կարեմ:



### 17. ԾԻԾԵՌՆԱԿՆԵՐՆ ԵՒ ԱՆՃՂՈՒԿԸ

Մի անգամ ճնճղուկը կամեցաւ զօռով  
 տիրել ծիծեռնակի բնին և այնտեղ բնակուել:  
 Բնից արտաքսուած ծիծեռնակն աղաղակ  
 բարձրացրեց, որի վրայ իսկոյն հաւաքուե-  
 ցան նրա ընկերներն և սկսեցին յետ ու առաջ  
 անել բնի մօտ. նրանք մտիկ էին տալիս  
 ներս, աղաղակում էին, կարծես այդպիսով  
 կամենում էին թշնամուն դուրս անել բնից:  
 Բայց կամակոր ճնճղուկը ներս էր քաշուել  
 բնի խորքը և դուրս գալու միտք չունէր:

<sup>1</sup> Դիւանբաշի — դատաւոր: <sup>2</sup> Կոտորն ընկաւ —  
 սնանկացաւ: <sup>3</sup> Մթամ — իբր թէ:

Վերջապէս, տեսնելով՝ որ ոչինչ չի օգնում, ծիծեռնակները բո-  
 յորը միասին յանկարծ անհետացան: Նրանք թռան-գնացին մօ-  
 տիկ ճահիճը, կտուցներով մի-մի փոքրիկ կտոր ցելս առան և  
 եկան միքանի բոպէի մէջ ծածկեցին բնի մուտքը: Այսպէս մեր  
 յանդուգն ճնճղուկը բնի մէջ փակուած մնաց և սովամահ եղաւ:

### ԳՐԱԻՈՐ ՎԱՐՓՈՒԹԻՒՆՆԵՐ

12. Արտազրեցէք հետեւեալ գոյական անունները եզակի թուով:

Տներ: Աչքեր: Բաղաքներ: Մարդիկ: Դէզեր: Երեկոներ: Մա-  
 զեր: Օղակներ: Մայրեր: Տեղեր: Աթոռներ: Եզներ: Առիծներ:  
 Բզէզներ: Շղթաներ: Պոզեր: Լորեր: Կանայք: Զուամներ:

Օրինակ. — Տներ — տուն: Աչքեր — աչք:

1006  
2933a

13. Արտազրեցէք հետեւեալ նախադասութիւնները և ենթակաների  
 տակ գիծ քաշեցէք:

Բոթոթը խաղում է: Եղբայրս տաքանում է: Կատուն չանկուեց:  
 Պապը ծերացել էր: Որդին բարկացաւ: Զուկը լողում է: Աղախինը  
 հառաչում է: Հիւանդն առողջացաւ: Ամանը կոտորուեցաւ:

14. Արտազրեցէք նոյնը յոգնակի թուով:

Օրինակ. — Բոթոթները խաղում են...

### 18. ԾԻԾԵՌՆԱԿԻ ՅԻՂՈՂՈՒԹԻՒՆԸ

Ծիծեռնակը բուն էր շինում,  
 Ե՛ւ շինում էր, և՛ երգում,  
 Ամին մի շիւղ կպցնելիս՝  
 Առաջուան բունն էր յիշում:

Մէկ անգամ էր նա բուն շինել  
 Եւ շատ անգամ կարկատել,  
 Բայց այս անգամ, վերադարձին,  
 Բունն սուերակ էր գտել:


Այժմ նորից բուն էր շինում,  
 Ե՛ւ յիշում էր, և՛ հրգում,  
 Ամեն մի շիւղ կպցնելիս՝  
 Առաջուան բունն էր յիշում:

Նա յիշում էր անցած տարին  
 Իւր սնուցած ձագերին,  
 Որոնց ճամբին յափշտակեց  
 Արինարբու թշնամին:

Բայց նա կրկին բուն էր շինում,  
 Ե՛ւ շինում էր, և՛ հրգում,  
 Ամեն մի շիւղ կպցնելիս՝  
 Առաջուան բունն էր յիշում:

### 19. ԱՌԻԻԾՐ ԵՒ ՄՈՒԿԸ

Առիւծը քնած էր: Մի մուկ վազեց, անցաւ նրա վրայով:  
 Առիւծը զարթնեց և բռնեց նրան: Մուկն սկսեց խնդրել, որ  
 արձակէ իրան:




—Թ՛ող ինձ, ասաց նա.—դրա փոխարէն ես քեզ լաւու-  
 թիւն կանեմ:

Առիւծը ծիծաղեց այդ խօսքերի վրայ, բայց էլի արձակեց  
 մկանը:

Միքանի ժամանակից յետոյ առիւծը որսորդների ցանցի մէջ  
 ընկաւ: Նա զարհուրելի կերպով մռնչում էր և քաշքշում ցանցի  
 թոկերը, բայց աւելի խճրճում էր նրա մէջ: Մուկը լսեց առիւ-  
 ծի մռնչոցը. նա հաւաքեց իւր ընկերներին, որոնք եկան, իրանց  
 սուր ատամներով կրծեցին, կտրատեցին ցանցի թոկերը և  
 առիւծին ազատեցին թակարդից:

—Յիշո՛ւմ ես,—ասաց այն ժամանակ մուկն առիւծին,—որ  
 դու ծիծաղում էիր ինձ վրայ և չէիր կարծում, թէ ես քեզ լա-  
 ւութիւն կարող եմ անել: Այժմ տեսնո՞ւմ ես, որ մկնից էլ կա-  
 րելի՞ք լաւութիւն սպասել:



### 20. ՄՈՒԿՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ

—Ընկել եմ ճանկդ, դէ՛հ, ուտում ես, կեր,  
 «էլ ինչ ես խառնում իմ գառը ցաւեր.  
 «Գիտեմ, որ իմ վերջս այսօր հասել է,  
 «Խեղճ ձագս բնում անտէր մնացել է»:

Ասաց մի խեղճ մուկ անիրաւ կառուին,  
 Որ ճանկել նրան, դրել էր տակին:

—Մի՛թէ ուտելն է մենակ իմ ուզած, —  
 Պատասխան տուեց կատուն բարկացած:

—Ամեն մի ձայնդ, քաղցը ծրվժրվոցդ  
 «Որ ականջս է ընկնում, ու այդ թուլանալդ  
 «Տեսնելիս՝ սիրտս այնպէս է ցնծում,  
 «Որ՛կարծում եմ, թէ նոր կեանք եմ ստանում»:

Գ Բ Ե Ի Ո Ր Վ Ե Բ Թ Ո Ր Թ Ի Ի Ն Ն Ե Բ

15. Արտագրեցէք հետեւեալ յատուկ գոյական անունները:

Աստուած: Յիսուս: Աննա: Վարդան: Վահան: Տփխիս: Արազատ: Արագած: Արաքս: Շիրակ: Երեւան: Էջմիածին: Ռուսաստան: Հայաստան: Փրանսիա:

16. Արտագրեցէք «Առիւծը և մուկը» յօդուածից բոլոր հասարակ գոյական անունները:

Օրինակ: — Առիւծ: Մուկ:

17. Արտագրեցէք և ենթականեր աւելացրէք:

Ձին (նվ) խրինջում է: .... (նվ) թռչուն է: .... (նվ) գրում է: .... (հ'նչը) դառն է: .... (հ'նչը) կաթկաթում է: .... (նվ) հազնուեց: .... (նվ) վարում է: .... (նվ) նստած է: .... (նվ) թռչում է: .... (հ'նչը) քանդուեց:

18. Գրեցէք ձեզանից միքանի յատուկ գոյական անուններ:

21. ՈՐՍՈՐԴՆ ՈՒ ԿՆՔԱԻԸ



Մի անգամ կարան անտառից դէպի գաշտ թռչելիս՝ պատահեց որսորդին:

— Սիրելի որսորդ, — ասաց նա. — Աստուած սիրես, ձագերիս չսպանես. նրանք այս անտառի բոլոր թռչուններից ամենասիրուններն են:

— Հատ բարի, կարաւիկ, — պատասխանեց որսորդը. — Եթէ այդ սիրուն ձագերդ պատահեն ինձ, ես նրանց կըխնայեմ, ձեռք չեմ տալ:

Կարաւը հանգիստ սրտով թռաւ-գնաց իւր գործին: Բայց երեկոյեան տուն վերադառնալիս ինչ տեսնի խեղճ մայրը: Որ-

սորդը մաղախի մէջ՝ դրած՝ տանում էր փոքրիկ կաքաւներին, նրա սիրասուն ձագերին:

— Ա՛խ, անխիղճ որսորդ, — մորմորած սրտով ասաց մայրը. չէ որ դու խոստացար խնայել ձագուկներին. ինչո՞ւ խօսքդ չպահեցիր, ինչո՞ւ սպանեցիր խեղճ ձագուկներին: Ամօթ քեզ, ստախօս մարդ:

— Բայց չէ որ դու ինձ ասացիր, թէ քո ձագերն այս անտառի ամենասիրուն թռչուններն են, այնինչ իմ սպանածները, ինչպէս դու էլ տեսնում ես, ահա այս մոխրագոյն թռչնակներն են, — պատասխանեց որսորդը:

— Ա՛խ, — բացազանչեց որդեկորոյս մայրը. — մի՛թէ դու չըզիտես, որ ամեն մի մօր համար ամենասիրունն ու ամենազուրեկանը իւր հարազատ զաւակն է:

22. ԹՈՒԹԱԿՆ ՈՒ ՍՈՒՍԱԿԸ



Մի թուլթակ տան մէջ այնքան ճրղղաց, շրվշրվաց, որ տան տէրը նրան տանից դուրս անել տուեց:

Թուլթակի ինքնասիրութեանը դիպաւ այս բանը և նա սկսեց զանգատուել սոխակին, որ եկել էր նրան տեսնելու:

— Աչքիս լոյս, — ասաց թուլթակը սոխակին. — ես լսել եմ, որ դու լաւ վարպետ ես երաժշտութեան մէջ. խնդրեմ՝ լսես իմ երգերը և ասես ինձ, թէ ինչ պակասութիւն կայ նրանց մէջ, որ իմ տիրոջը դիւր չեն գալիս:

— Հատ լաւ, — ասաց սոխակը. — երգիր, տեսնեմ՝ ինչպէս երգում: Ես ուրախութեամբ կըլսեմ քեզ պէս սիրուն թռչունի երգը:

Թուլթակն սկսեց իւր բոլոր ճարտարութիւնը թափել. հաւի պէս կըչկըչաց, շան պէս հաչեց, կատուի պէս մլաւեց, մի խօսքով՝ կըկնեց իւր բերան-արած բոլոր բառերն ու երգերը:

—Այժմ, սիրելիս,—ասաց նա սօխակին.—խնդրեմ՝ ասես, դու լսած կամ մի այսպիսի բան երբեքիցէ:

—Սիրուն թուխակ,—պատասխանեց սօխակը.—դու ինձ կընե՞րես, եթէ քեզ մի նկատողութիւն անես: Դու երգում ես ուրիշների ձայնով, ուրիշների երգեր ես երգում: Եթէ ունենաս քո սեպհական երգը, էլ քեզ տանից դուրս չեն անիլ:



23. ԳԵՐԻ ԹՈՒԹԱԿ


Իմ տիկինը կերակրում է  
ինձ նշերով, շաքարով,  
Իմ վանդակը զարդարում է  
Իւր քնքշիկ ձեռքերով:

Բայց գէթ մի ժամ ուրախ լինել  
ես չեմ կարող իմ կեանքում,  
Երբ յիշում եմ, թէ գերի եմ  
Այս նեղ, փակուած վանդակում:

24. Զ Ի

Զին ընտանի կենդանիներից ամենազեղեցիկն է: Նրա մարմինը ծածկուած է կարճ, կոկիկ մազերով: Պարանոցի վրայ ունի երկար բաշ, որի մի փունջը՝ փոքրիկ ականջների միջով՝ իջնում է գէպի ճակատը: Զիւռ ազին (պոչը) ծածկուած է երկար մազերով: Զիւրը լինում են զանազան գոյնի—սև, կարմիր, մոխրա-

գոյն, սպիտակ, շալ: Բարակ, գեղեցիկ ոտների վրայ մատների տեղ կան սմբակներ. սմբակներին երկաթէ պայտեր են խփում, որ ոտները չվնասուեն:



Զին շատ խելացի կենդանի է: Նա ճանաչում է իւր տիրոջը և կատարում նրա հրամանները: Մարդս նրանից շատ օգուտներ է ստանում:

ԳՐԵԻՈՐ ՎԵՐԹՈՒԹԻՒՆՆԵՐ

- 19. Արտազրեցէք «Զի» յօղուածից բոլոր հասարակ գոյական անունները:
- 20. Արտազրեցէք հետևեալ հաւաքական գոյական անունները:  
Հօտ: Գունդ: Անտառ: Զոկ: Զօրք: Երամ: Վոյմակ: Հորան: Ամբոխ: Ժողովուրդ:
- 21. Արտազրեցէք հետևեալ նախադասութիւնները և փակագծերի մէջ հարցեր աւելացրէք: Հարցերի տակ գիծ քաշեցէք:  
Քահանան (ի՞նչ է անում) աղօթում է: Աստուած (ի՞նչպէս է) ողորմած է: Վարդը (ի՞նչ է) ծաղիկ է: Մարդը (... ) մտածում է: Ռչխարը (... ) մայրւմ է: Արծաթը (... ) մետաղ է: Աշակերտը (... ) աշխատասէր է: Երկիրը (... ) կլոր է: Օրը (... ) բացուեցաւ: Կրակը (... ) հանգաւ:


### 25. ՁԻՆ ԵՒ ԷՂԸ

Մի բեռնաւորուած էջ և մի պարապ ձի միասին ճանապարհ էին գնում: Խեղճ էջը տնքում էր իւր ծանր բեռան տակ:

—Սղաչում եմ քեզ, —խնդրեց նա ձիուն. —օգնիր ինձ, բեռիցս մի քիչ դնւ վեր առ:

Ձին ականջ չդրեց իւր ընկերոջ աղաչանքին: Ճանապարհին էջը վայր ընկաւ և շունչը փչեց: Տէրը վեր առաւ իշի բեռը, նրա կաշին էլ քերթեց և ձիուն բեռնեց:

—Վայ ինձ,—հառաչեց ձին.— եթէ ևս օգնէի խեղճ իշին, նա կենդանի կըմնար և իմ բեռն էլ այսքան ծանր չէր լինի:



### 26. Կ Ո Վ

Կովն էլ, ձիու նման, ընտանի չորքոտանի կենդանի է: Նրա գլուխը լայն է և ունի երկար պոզեր: Կովը պոզերով պաշտպանւում է շներէից ու գայլերից—նրանցով հարու է տալիս: Նրա ողնաշարը դուրս ցցուած է, կողերը փքուած, ոտները կարճ, պոչը երկար՝ ծայրը փնջամազ: Իւրաքանչիւր ոտի վրայ ունի մի մի զոյգ կճղակներ:

Կովը խոտակեր կենդանի է. բայց նա իւր կերակուրը մի անգամից չի ուտում, վերջացնում. առաջ խոտը բերանն է առնում և առանց ծամելու կուլ տալիս. քիչ յետոյ կուլ տուածը

նորից յետ է գալիս բերանը և այս անգամ կովը լաւ ծամում, որոճում է ու դարձեալ կուլ տալիս:

Կովը մարդուն համեղ կաթն է տալիս: Կաթնից պատրաստում են մածուն, թան, իւղ և պանիր:

### 27. ԿԹԵԼ ՈՒ ՀԱՐԵԼ

—Ասա, տեսնեմ, մեր գիւղերում Կովերն ինչպէս են կթում:

—Ահա այսպէս են կթում.

Հորթը կապում մօր ծնկից,

Ծիծը խլում գաւակից,

Կովկիթն իրանց ձեռքն առնում,

Ապա կողքին կըկըզում—

Փը՛ շշ, բը՛ ժժ...

Փը՛ շշ, բը՛ ժժ...

Ահա այսպէս են կթում,

Փոքրիկ հորթին լացացնում:

—Ո՞նց են հարում խնոցին.

Հէնց այսօր էլ հարեցին:

—Ահա այսպէս հարեցին.

Թուկը ծաւից կապեցին,

Հաստ խնոցին կախեցին,

Երկու օրուայ հաւաքօր

Նրա մէջը ածեցին,

Տաք ու հով ջուր խառնեցին

Եւ ծայրերից բռնելով,

Տարան, բերին, շարժեցին՝

Թը՛ ըխկ, չը՛ ըխկ...

Թը՛ ըխկ, չը՛ ըխկ...

Ահա այսպէս հարեցին,

Դեղին կարագ հանեցին:

28. ԿԹՈՒ ԿՈՎ

Մարդու մէկը մի կով ունէր: Նա օրական մի կճուճ կաթն էր տալիս իր տիրոջը: Մի անգամ այդ մարդու մօտ հիւրեր պէտք է գային. նրան շատ կաթն էր հարկաւոր. այդ պատճառով նա տասն օր չկթեց իւր կովը, կարծելով, թէ տասներորդ օրը կովը տասը կճուճ կաթ միանգամից կըտայ: Բայց սրբան գարմացաւ խեղճ մարդը, երբ վերջին օրը կովն առաջուանից քիչ կաթ տուեց, որովհետեւ երկար ժամանակ չկթելուց նրա կաթը ցամաքել էր:

ԳՐԵԻՐ ՎՈՐԹՈՒԹԻՒՆՆԵՐ .

22. Արտագրեցէք հետեւեալ նախադասութիւնները և ստորագեալներ ի տակ գիծ քաշեցէք:

Կովը որո՞նում է: Ձին վազում է: Խոտը չորացաւ. Ոգնին կենդանի է: Թիթեռը միջատ է: Պատկերը գեղեցիկ է: Երկինքն ամպամած է: Հիւրերը կըզան. Գետը ցամաքեց: Մարդը զարմացաւ: Գիւղացին հնձում է:

23. Արտագրեցէք նոյնը յոգնակի թուով: Ստորագեալների տակ դարձեալ գիծ քաշեցէք:

Օրինակ:—Կովերը որոնում են.

24. Արտագրեցէք առանձին-առանձին յատուկ, հասարակ և հաւաքական գոյական անունները:

Յարութիւն: Երկաթ: Կամար: Ջուկ: Մարգարիտ: Եղան: Անտառ: Ոսկի: Մարմին: Հրաշեայ: Հեղինէ: Մատիտ: Հրանոյշ: Գունդ: Զօրք: Հայկունի: Արամ: Թուղթ: Իկեղեցի: Մոսկոս: Կուր: Մասիս: Սար: Գետ: Աստղ:



26. ԳՆՈՐ ԳԱՅԼԻ ՄՈՐԹՈՎ

Մի օր մէկ գառը, չգիտեմ՝ ինչ էր, խելքին ինչ տեսակ քամի էր փչել, Գցեց իւր վրայ մի գայլի մորթի, Գնաց, խառնուեցաւ հետը իւր հօտի:


Բայց երբ շների աչքովն ընկաւ, Ասին՝ անտառից ասն գայլ եկաւ. Գոռում-գոչումով վրայ վազեցին, Բերաններն առան ու զըզըզեցին:

Լաւ էր, որ շուտով հովիւը տեսաւ, Փայտ ու մահակով նոյն տեղը հասաւ, Ու խեղճ գառնուկը կատղած շների Սուր առամներից հազիւ փրկուեցաւ:

Եւ մեր գառը հազիւ-հազ, Արիւնաթաթախ ու նուազ, Թոյլ ոտները քաշ տալով՝ Հասաւ գոմը մի կերպով:

30. Ա Գ Ռ Ա Ի

Ազուար տեսաւ, որ սիրամարգնեը շատ գեղեցիկ են, փետուրներն՝ այնպէս փայլուն, գոյնզգոյն, որ կարծես թագաւորի ծիրանի լինին:



— Ինչո՞ւ եմ ես այս սե՞ու յիմար ազուաների շարքն ընկել, — մտածեց նա. — արի՛, ես էլ այդպիսի սիրուն փետուրներով զարդարուեմ. սիրամարգնեըն՝ ինձ սիրով կընդունեն իրանց մէջ, իսկ անճուռնի ազուաներն, ինձ նայելով, զարմացած, հիացած կըմնան:

Եւ սիրամարգի սիրուն փետուրներ ճարելով՝ զուգուեց-զարդարուեց ու գնաց, սիրամարգների հետ խառնուեցաւ: Բայց այնտեղ նրան շուտով ճանաչեցին. սիրամարգները վրայ թափուեցան, կտցահարեցին, կեղծ փետուրների հետ իսկականներն էլ պոկեցին և իրանց միջից զուրս արին:

Ընարզուած, փետուրներից զրկուած ազուար գնաց իւր ազգականների մօտ, բայց նրանք էլ երես դարձրին և շընդունեցին նրան:

31. Փ Ի Ղ

Հնդկացին մի փիղ ունէր: Տէրը նրան շատ վատ էր կերակրում և շարունակ գործ անել էր տալիս: Մի օր էլ փիղը բարկացաւ և իւր տիրոջը ոտնատակ տուեց, սպանեց: Հնդկացու կինը արտասուքն աչքերին բերեց իւր որդոցը, գցեց փղի ոտները տակ ու ասաց.

— Փիղ, դու սպանեցիր հօրը, սրանց էլ սպանիր:

Փիղը նայեց մանուկներին, յետոյ ամենից մեծին կնճիթով վեր առաւ, գրեց իւր պարանոցի վրայ և այնուհետև սկսեց նրան հնազանդուել և աշխատել նրա համար:

32. Փ Ի Ղ ԵՒ ՔՈԹՈԹ

Մէկ փիղ առած ման կածէին Փողոցներից անցնելով, Յանկարծ քոթոթ մի կռուասէր վրայ վազեց խիստ հաշելով: — Չայնդ կտրիր, դրացի եղբայր, Ասաց գամբուր մեր քոթոթին. — «Չես տեսնում, որ ծաղր եղար «Բոլոր շների դու առաջին: «Ի՞նչ ով ես և փիղը ո՞վ. «Ահա քո հեքդ է բռնուում, «Իսկ նա հանդարտ և անխուով «Հաշելուդ էլ ուշ չի դնում»: — Հն-հն. հն-հն, դու չիմացար, — Պատասխանեց մեր քոթոթը, — «Ու իմ միտքը չհասկցար: «Հեռուից կանչեմ, կուրեմ հետը, «Որ մեծ բանի մէջ երևամ. «Ուրիշներին էլ ասել տամ. — Տեսէք, քոթոթն ինչպէս քաջ է, «Որ փղի դէմ էլ կըհաչէ»:

Գ Ր Ա Ւ Ո Ր Վ Ա Ր Թ Ո Ր Թ Ի Ի Ն Ն Ե Ր

- 25. Արտազրեցէք հետեւեալ նիւթ ա կ ա ն առարկաների անունները: Աղ: Բամբակ: Ծաբար: Գնդակ: Սրինգ: Մեխակ: Մարդ: Փետուր: Ժիրան: Մարդ: Արօր: Երկիր: Կացին: Սանձ: Փայտ:
- 26. Արտազրեցէք հետեւեալ մտաւոր առարկաների անունները: Հոգի: Հրեշտակ: Եռանդ: Բաշութին: Ապրուստ: Իմաստութիւն: Ժուլութիւն: Կամք: Երջանկութիւն: Սէր: Ատելութիւն:
- 27. Արտազրեցէք և հարցերին համաձայն ստորագիւղներ աւելացրէք:


Թիծեռնակը (ինչ է անում) ծըլվըլում է: Գորտը (ինչ է անում) .....: Մշակը (ինչ կանէ) .. ...: Ագռաւը (ինչ է) .....: Կօշկակարը (ինչ արաւ) .....: Հունձը (ինչ եղաւ) .....: Ծովը (ինչպէս է) .....: Մեղրը (ինչպէս է) .....

### 33. ՈՂԽԱՐՆԵՐՆ ՈՒ ԳԱՅԼԵՐԸ

Մի անգամ գայլերն ասացին ոչխարներին.

—Մեղքերս ինչ թաքցնենք—մենք ձեզ հետ շատ վատ ենք վարում և անմեղ տեղը ձեր արիւնը թափում. դուք էլ, իհարկէ, մեզանից վախենում էք և խիստ ատում էք մեզ: Բայց գիտէք, զրանում ով է մեղաւոր—ձեր չար շները. նրանք միշտ աշխատում են մեզ ջնջել, կոտորել, էհ, մենք էլ մեր վրէժը ձեզանից ենք հանում: Եկէք, լսեցէք մեզ, այդ շներից թողէք, հեռացէք. մենք ձեզ միշտ կը պաշտպանենք:

Յիմար ոչխարները հաւատացին նրանց և ծածուկ հեռացան շներից: Գայլերն էլ հէնց այդ էին ուզում. նրանք վրայ թափուեցան, անպաշտպան ոչխարներին խեղդեցին ու կերան:



### 34. ՊԱՌԱԻՆ ՈՒ ԳԱՅԼԸ

Քաղցած գայլը որսի էր ման գալիս: Գիւղի մօտով անցնելիս՝ յանկարծ լսեց, որ մի խրճիթում երեխան լաց է լինում, իսկ պառաւ տատն ասում էր նրան.

—Չայնդ կտրի՞ր, թէ չէ քեզ գայլին կըտամ:

Գայլը կանգ առաւ և այլևս չհեռացաւ խրճիթի մօտից: Նա սպասում էր, որ պառաւը երեխային իրան տայ: Սպասեց, սպասեց և յանկարծ նրա ականջին հասաւ պառաւի ձայնը, որ սյս անգամ ասում էր.

—Մի լար, գառնո՛ւկս, ես քեզ գայլին չեմ տալ. նա գայ թէ չէ, իսկոյն կըսպանենք:

«Ինչպէս երևում է, այստեղ ինչ որ ասում են, նրա հակառակն են կատարում»,—մտածեց գայլը և թողեց, հեռացաւ գիւղից:

### 35. Ա Ր Ա Գ Ի Լ

Ա.

Արագիլները կանգնած էին իրանց բնի վրայ, գլուխները մէկ երկիրք էին բարձրացնում, մէկ երկիր խօնարհում, երգում, կըլկըլացնում:

—Այդ ինձ են բարե տալիս,—ասում է Մարիամը:

—Չէ, ինձ,—հակառակում է Արսէնը:

—Երկուսիդ էլ են բարեում, ամբողջ գիւղին էլ,—ասաց տատը և նրանց վէճը վերջացրեց:

—Տես, տատի, ծտերն ինչպէս ուրախացել են,—ասաց Արսէնը,—ինչպէս քաղցր ձայնով ծըլվըլում են:

—Ուրախացել են, անուշիկս, ուրախացել են. չէք տեսնում, քանի հազար ծտեր արագիլի բնի ցախերի արանքումն են իրանց համար բուն շինել: Ծտերը լաւ գիտեն, որ արագիլի անից ո՛չ ուրուր, ո՛չ կատու և ո՛չ մի ուրիշ թշնամի չի կարող նրանց բնին մօտենալ, նրանց ձուերը խմել կամ ճուտերն ուտել: Հէնց զրա համար է, որ արագիլների գալով պստիկ ծտերն այնպէս ուրախանում են:

Բ.

—Տատի,—հարցրեց մի օր Մարիամը պառաւին.—մեր գիւղը արագիլներով լիքն է, այդքան կերակուր զրանք ո՞րտեղից են գտնում:


Մեր դաշտերը, հողիս, լիքն են օձերով. ճահիճների գորտերն իրանց կըռկըռոցով գլուխ են տանում. արտերի մէջ անպիտան մկները հազար տեղ ծակեր են բաց արել. եթէ արագիւրը չի նէր, մենք ցորենի երես չէինք տեսնիլ:

— Բա օձն արագիւրն չի կծում:

— Չատ էլ ուզում է, շատ էլ հետը կռուի բռնում, բայց միշտ յաղթում է:

— Ի՞նչպէս:

— Արագիւր թռչելիս վերեւից տեսնում է օձին և իջնում, նրա գլխին կտուցով խփում է: Օձը փշշացնում է, վրայ պըրծնում, աշխատում է արագիւրի բաց ոտը կծել: Արագիւրն իւր թևի ծայրն է օձի բերանին մօտեցնում ու անդադար նրա գլխին կտցում: Կտցում է, կտցում, այնքան կըտկըտալով խփում է, մինչև նրա գլուխը ցրում է: Օձը երկար ու ձիգ փուում է դաշտի վրայ: Յետոյ արագիւրն օձի մէջտեղից բռնում է և բերում բունը, բաժին-բաժին է անում, ձագերին ուտացնում, ինքն էլ կշտանում:



ԳՐԱՆՈՐ ՎԱՐԹՈՒԹԻՒՆՆԵՐ

28. Արտագրեցէր առանձին-առանձին նիւթական և մտաւոր առարկաների անունները:

Միտք: Կարագ: Իդրմնոգ: Հանասիրութիւն: Բժշկութիւն: Ծաղիկ: Հող: Զուր: Հրեշտակ: Եռանդ: Վէճ: Մանգաղ: Արօր: Գութան: Գարուն: Ոյժ: Աշուն: Զուլթակ: Դուր: Վաստակ: Տակառ: Ժիծաղ: Հանգստութիւն: Հատիկ:

29. Արտագրեցէր «Ոչխարներն ու գայլերը» յօդուածը եղակի թուով:

30. Հետեւալ նախադասութիւններից արտագրեցէր ստորագիծները և բացուցիչ բառերի հետ: Ստորագիծի և լրացուցիչ բառի մէջ հարցեր աւելացրէր:

Եղբայրս սպասում է ընկերոջը, Մաթննիկը ջուր բերեց եղբորը: Որսորդը հրաշանով արջին սպանեց: Աշակերտը սովորում է դասը: Ուսուցիչը պատժեց աշակերտին: Դարբինը մուրճով երկաթ է ծեծում: Հայրս ինձ խաղալիք գնեց:

Օրինակ: — Սպասում է (նմ) ընկերոջը: Բերեց (ի՞նչ) ջուր (նմ) եղբորը:

36. ՊԱՆԴՈՒԽՏ ՊԱՏՄԵՈՒ ԵՐԳԸ

Ծիծեռնակ, ծիծեռնակ,  
Դու գարնան սիրուն թռչնակ,  
Դէպի ո՛ւր, ինձ ասա,  
Թռչում ես այդպէս արագ:

Ա՛խ, թռիւր, ծիծեռնակ,  
Ծնած տեղս—Աշտարակ.  
Անդ շինիր քո բունը,  
Հայրենի կտուրի տակ:

Անդ հեռու ակտը  
Հայր ունիմ սգաւոր,  
Որ միակ իւր որդուն  
Սպասում է օրէցօր:

Երբ տեսես զու նրան,  
Ինձնից շատ բարե արա՛.  
Ասա՛, թող նստի լայ  
Իւր անբազղ որդու վրայ:

Դու պատմէ, թէ ինչպէս  
Աստ անտէր ու խեղճ եմ ես,  
Միշտ լալով, ողբալով,  
Կեանքս մաշուել, եղելիկէս:

Ինձ համար ցերեկը  
Մուլթ է շրջում արեգը.  
Դիշերը թաց աչքիս  
Քունը մօտ չի գալիս:

Չուտով սառ հողի տակ  
Կըպակեմ այստեղ մենակ,  
Թողնելով հօրս սրտում  
Միշտ ցաւալի յիշատակ:

Դէհ, սիրուն ծիծեռնակ,  
Հեռացիր, թռիւր արագ  
Դէպի Հայոց երկիրը,  
Ծնած տեղս—Աշտարակ:

### 37. ԳԱՅԼԸ ԵՒ ՂՈՒՆԸ

Նիհար, քաղցած գայլը՝ գիւղի մօտով անցնելիս՝ պատահեց մի գեր շան և հարցրեց նրան.

— Այ շուն, աս՛, խնդրեմ, դուք ձեր կերակուրը որտեղից էք ճարում:

— Մարդիկ են տալիս, — պատասխանեց շունը:

— Երևի դուք դժուար ծառայութիւն էք անում նրանց:

— Ո՛չ, — պատասխանեց շունը. — մեր գործը դժուար չէ. Մենք միայն գիշերները նրանց տունն ենք պահպանում:

— Ուրեմն միայն զրա համար են ձեզ կերակրում, — ասաց գայլը. — Զի՛ լինիլ, որ ես էլ գամ մտրդկանց մօտ ծառայելու. թէ չէ մենք մեծ դժուարութեամբ ենք կերակուր ձեռք բերում:

— Ինչո՞ւ չէ, գնանք, — ասաց շունը. — իմ տէրը քեզ էլ կրկերակրէ:

Գայլն ուրախ-ուրախ վագեց շան յետեից. Բայց դուան մօտ նա նկատեց, որ շան պարանոցի մագերը պոկուած են:

— Այդ ինչից է, — հարցրեց նա:

— Է՛հ, այնպէս, — պատասխանեց շունը:

— Ի՛նչպէս թէ այնպէս:

— Այնպէս, էլի, շղթայից է: Գու չգիտես, որ ցերեկները ինձ շղթայով կապում են:

— Գապում են, — ասաց գայլն ու կանգ առաւ. — Գէհ, ուրեմն մնաս բարով: Աւելի լաւ է՝ ես միշտ նիհար, բայց ազատ լինիմ, քան թէ փորիս համար ուրիշների գերին դառնամ:

### 38. ԼՈՒՄՆԱՀԱԶ

— Հայրիկ, ինչո՞ւ մեր Բօղարը Միշտ հաչում է լուսնի վրան.  
Մի՛թէ պայծառ լուսնեակը Մէկ փնաս է տալիս նրան:

— Ո՛չ, որպեակ իմ, ո՛չ թէ վնաս.  
Այլ լոյս, միայն լոյս է տալիս.  
Իսկ շանն, իբրև գայլի ցեղի,  
Լոյս գիշերը դիւր չի գալիս:  
Բայց լուսինը խօմ չգիտէ,  
Որ իւր վրայ հաշողներ կան.  
Նա լուռ ու մունջ, բազ բոլորած,  
Չարունակում է իւր ճամպան:  
Մենք էլ, որդեակ, լուսնի նման  
Պէտք է լոյս տանք մութ աշխարհին  
Եւ համարենք, թէ չենք լսում  
Մեզ վրայ գուր հաշողներին:

### 39. ԳԱՅԼ ԵՒ ՍԿԻՒՌ

Սկիւռը, ծառի վրայ թռչկոտելիս, յանկարծ վայր ընկաւ մի գայլի վրայ, որ քնած էր ծառի տակին:



Գայլը վեր թռաւ, բռնեց նրան և ուզում էր ուտել. Սկիւռն սկսեց աղաչել.

— Թ՛ող ինձ:

— Լ՛աւ, — ասաց գայլը. — ես քեզ կըթողնեմ, եթէ միայն ինձ ասես, թէ պատճառն ինչ է, որ ես միշտ ախուր-տրտում եմ, իսկ դուք, սկիւռներդ, այդպէս ուրախ էք և շարունակ թռչկոտում ու խաղում էք ծառերի վրայ:

— Առաջ թ՛ող ինձ. բարձրանամ ծառը, — ասաց սկիւռը, — այնտեղից կըտամ քո պատասխանը. թէ չէ ես վախենում եմ քեզանից:

Գայլը բաց թողեց. Սկիւռը ծառը բարձրացաւ և այնտեղից ասաց.

—Քո տխրութիւնը նրանից է, որ դու չար ես: Չարերն ուրախութիւն չունին: Իսկ մենք ուրախ ենք նրա համար, որ բարի ենք և ոչ ոքի վատութիւն չենք անում:

ԳՐԱԻՈՐ ՎՈՐԹՈՒԹԻՒՆՆԵՐ

31. Հեռեկալ նախադասութիւնների մէջ հարցերին համապատասխան լրացուցիչ բառեր աւելացրէք:

Գիւղացին վարում է (ի՞նչը) ..... (ի՞նչով) .....: Կինն աւելեց (ի՞նչը) ..... (ինչո՞վ) .....: Հօրեղբայրս (ո՞ւմ) ..... ընծայեց (ի՞նչ) .....: Արտաշէսը զքօսնում է (ո՞ւմ հետ) .....: Շուշանիկը նամակ ստացաւ (ո՞ւմնից) .....: Ատաղձագործը սեղան է շինում (ինչի՞ց) .....: Շունը հաշում է (ո՞ւմ վրայ) .....: Մենք խօսում ենք (ո՞ւմ մասին) .....

32. Արտագրեցէք և ուր որ հարկաւոր է ենթակայ, ստորագեալ և լրացուցիչ բառեր աւելացրէք:

Հաւր ... է ածում: ... քշում է սայլը: Տատը հեքիաթ .....  
..... քոյն է շինում: ... ներկում է տունը: Հացթուխը ..... է թխում: ..... ժամացոյց է շինում: Շունը ..... տունը: Աշակերտը գրում է .....

33. Արտագրեցէք «Գ ա յ լ ը և ս կ ի ւ ո ը» յօդուածը յոգնակի թուով:

40. ՊԱՀՊԱՆԵՑԷՔ ԶԵՐ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻՆ

Փրանսիայում, դաշտերի և անտառների մէջ, սիւներ են տնկած և այդ սիւների վրայ կպցրած են տախտակներ, որտեղ գրուած է.

«Ողին կերակրում է մկներով, խխունջներով և որդերով: Չսպանէք ողիններին»:

«Խլուրդը միշտ զանազան վնասակար միջատներով, որդերով ու թրթուրներով է կերակրում: Նրա ստամոքսում երբէք բուսեղէն կերակուր չէ գտնուած»:

«Թրթուրները մեծ վնաս են հասցնում ժողովրդին: Թռչունները չափազանց մեծ քանակութեամբ թրթուրներ են ոչնչացնում: Մանուկներ, ձուեր և ձագեր չհանէք թռչունների բներից: Չաւերէք նրանց բները»:

41. ՄԵՂՈՒՆ ԵՒ ԱՐՋԸ

Անտառի խորքում մեղուն իւր համար  
Ծառի փշակում, գետնից ո՛չ բարձր,  
Մի բուն էր շինել,  
Մէջը ձագ հանել  
Եւ անուշ մեղրով  
Բճիճը լցրել:

Չգիտեմ ինչպէս, մի օր արջուկը  
Առաւ այդ մեղրի անուշիկ հոտը.  
Մըթմըթաց, փնթփնթաց,  
Ծառն ի վեր կանգնեց  
Եւ երկու թաթեր  
Բնի մէջ կոխեց:

Մեղուն տըզտըզաց, տըզզացին ձագեր,  
Բայց արջը չքաշեց իւր բրդոտ թաթեր,  
Քանդեց ողջ բունը,  
Ջարդեց խեղճ ձագեր,  
Հանեց բճիճը,  
Լափեց անհամբեր:

Մեղուն՝ երբ տեսաւ իրան ձագուկներ  
Այս անգութ արջի ոտքի տակ ճզմուած՝  
Դրոզըռաց տխուր,  
Խայթեց նրա աչք  
Եւ ինքն էլ անշունչ  
Ընկաւ ծառի տակ:

### 42. ՄԻՋԱՏՆԵՐԻ ԿԵՐՊԱՐԱՆԱՓՈՒՍԻԹԻՒՆԸ



Ըմառը կաղամբի տերևների վրայ դուր տեսած կըլինիք կանաչագոյն որդունքներ, որոնք թրթուր են կոչում: Այդ թրթուրները կերակրում են կաղամբի տերևներով. նրանք շատ ազահ են և ուրիշ բան ու գործ չունին, բացի ուտելն ու մեծանալը:

Երբ թրթուրը մեծանում է, պատենաւորւում է. այդ ժամանակ նա ոչ ուտում է, ոչ խմում, այլ

անշարժ ընկած մնում է իւր տեղը:

Միքանի օրից յետոյ պատեանի միջից դուրս է թռչում թիթեւը: Սա ձուեր է ւծում, իսկ այդ ձուաններից դուրս են գալիս ազահ թրթուրներ: Աշնանը թիթեւը սատակում է:

Այսպէս կերպարանափոխում են բոլոր թիթեւները, բզէզները, ճանճերը, մեղուները և պիծակները: Միջատը ձու է ւծում, ձուաններից դուրս են գալիս որդեր կամ թրթուրներ, որդերը պատենաւորւում են, իսկ պատեաններից դուրս է սողում իսկական միջատը:

### 43. ՄԵՂՈՒՆ ԵՒ ԱՐԾԻԻԸ



— Զատ ոգորմելի ես դու, — ասաց մի օր հպարտ արծիւը համեստ մեղունին. — չնայելով որ ամբողջ կեանքումդ տանջւում ես, բայց և այնպէս քեզ ոչ որ չի ճանաչում, որովհետև դուք մի փոքրիկ մեղրախորիսխի վրայ հազար հոգով էք աշխատում: Ո՛վ կարող է որդշել, թէ ո՞ր մասն է քո շինածը:

— Ինչիս է հարկաւոր այդ, — համեստութամբ պատասխանեց մեղուն. — Ինչ օգուտ, եթէ ճանաչեն ինձ: Բաւական է, որ ճանաչում ու սիրում են մեր մեղրը և ես ինձ բաղդաւոր եմ զգում, որ մեղրախորիսխի մէջ մի կաթիլ էլ իմ մեղրից կայ:

— Հասցան մէկ նայիր ինձ, — ասաց արծիւը. — հէնց որ ես երեւում եմ երկնակամարի երեսին, իսկոյն բոլորը նկատում ու ճանաչում են ինձ. դազաններն ու թռչունները աչք չեն հեռացնում ինձանից. հովիւների քունն անգամ աչքերից փախչում է: Ահա այդպէս բոլորը թէ մեծ, և թէ փոքր, լաւ ճանաչում են ինձ:

— Այո՛, ճանաչում են, սրովհետև վախենում են քեզանից, — ասաց մեղուն:

### ԳՐԸՒՈՐ ՎԱՐԹՈՒԹԻՒՆՆԵՐ

34. Արտագրեցէք հետեւալ նախադասութիւնները և լրացուցիչ բառերի տակ գիծ քաշեցէք:

Ոգնին կերակրում է մկներով, խխունջներով եւ որդերով: Խլրըղն ուտում է որդեր եւ թրթուրներ: Թրթուրները վնաս են հասցնում ժողովրդին: Թռչունները թրթուրներին ոչնչացնում են:

35. Հետեւալ գոյական անունների մօտ որպիսութիւն ցոյց տուող բառեր (ածական անուններ) աւելացրէք:


Բարձր (ինչպիսի) տուն: Խելօք (ինչպիսի) երեխայ: ..... (ինչպիսի) թռչուն: ..... (ինչպիսի) աշակերտ: ..... (ինչպիսի) մեղու: ..... (ինչպիսի) վարդ: ..... (ինչպիսի) գիշեր: ..... (ինչպիսի) գիրք: ..... (ինչպիսի) ժամացոյց: ... . (ինչպիսի) շուն:

36. Արտագրեցէք հետեւալ նախադասութիւնները և որ ոչ իչ (յատկացուցիչ) բառերի տակ գիծ քաշեցէք:

Պայծառ արեւը տաքացնում է երկիրը: Մենք մի հաւատարիմ շուն ունինք: Կոյր աղքատը ողորմութիւն է խնդրում: Փոքրիկ երեխան լալիս է: Ուսուցիչը պատժում է չար աշակերտներին: Ես մի գեղեցիկ պատկերագարու գիրք գնեցի: Ձին ընտանի խոտակեր կենդանի է: Մանուշակը գեղեցիկ հոտաւէտ ծաղիկ է: Ալամանդը թանկագին քար է:

### 44. ՄԱՐԴԻՆ ՈՒ ՉԵՐԱՄԸ

Չերամը մետաքս էր շինում և գոյնզգոյն կոկոնները կախոտում կաղնու թարմ ճղներից կապած խուրձի վրայ, իսկ սարդը, տան մի անկիւնում քաշուած, իւր ցանցն էր հիւսում և ծիծաղում Չերամի վրայ:



— Չերամ եղբայր, — ասում էր նա. — դու շատ դանդաղ ես տանում քո գործը և շինածդ էլ մի բանի նման չէ. իսկ ես, նայիր, տես, ինչ գեղեցիկ բան եմ շինել և տես, ինչքան երկար են իմ թելերը:

Չերամը պատասխանեց.

— Սարդ եղբայր, դու գիտես, ինչ է նշանակում բարութիւն:

— Ո՛չ, չգիտեմ:

— Այդ նրանից է, որ դու չար ես, քո գործն էլ չարութեան գործ է: Դու քո երկար թելերով մի թակարդ ես ցանցում, որ անմիտ ճանճերին որսաս ու ծծես նրանց արիւնը, իսկ իմ գործը բոլորովին ուրիշ բան է, քո բնութիւնից և խելքից վեր բան է:

### 45. ՄԱՐԴԸ ԵՒ ՕՁԸ

(Հէքիաթ)

Ա.

Մի ձիաւոր, երկար նիզակը ձեռքին, կամաց-կամաց առաջ էր գնում դաշտի միջով: Ճանապարհից ո՛չ հեռու նա նկատեց մի խարոյկ. այնտեղ թէև կրակ արդէն չկար, բայց տաք ածուխների վրայ կծկուած թշշում էր մի ահագին օձ: Օձը տեսաւ մարդուն և աղաչեց.

— Մարդ Աստուծոյ, օգնիր, ազատիր ինձ մահից:

Մարդը խղճաց օձին և իւր երկար նիզակը մեկնեց դէպի խարոյկը. օձը նրա վրայով վեր բարձրացաւ թէ չէ, փաթաթուեց մարդու պարանոցով և սկսեց սաստիկ սեղմել:

— Ի՞նչ ես անում, — հազիւ շնչաց մարդը:

— Միթէ չես զգում, թէ ինչ եմ անում, — պատասխանեց օձը. — ես կամենում եմ քեզ խեղդել:

— Ի՞նչ, բոլորմամբ Աստուած: Չէ որ ես քեզ մահից փրկեցի:

— Ճիշտ է, բայց աշխարհումս միշտ լաւութեան դէմ վատութիւն են գործում, ես էլ այդպէս պէտք է անեմ:

— Չէ, օձ, — վրայ բերեց մարդը. — այդ ճշմարիտ չէ. բոլորն այդպէս չեն, միայն դու ես այդպիսի անարդար բան բռնում:

— Չէ, միայն ես չեմ, բոլորն էլ այդպէս են, — ֆշշաց օձը և աւելի պինդ փաթաթուեց նրա պարանոցով:

— Աղաչում եմ, բաց թող կոկորդոս, — խնդրեց մարդը. — լսիր, թէ ինչ եմ ասում:

Օձը մի քիչ թոյլ թողեց:

— Երեք հոգու հարցնենք, եթէ ասածդ ճշմարիտ է, այն ժամանակ ինչ ուզում ես, արա՛, — ասաց մարդը:

— Իէհ, լաւ, տեսնենք, — համաձայնուեց օձը:

Բ.

Առաջ գնացին: Օձն այնպէս պինդ էր փաթաթուել մարդու պարանոցով, որ խեղճը դժուարութեամբ էր շունչ քաշում: Մօտեցան մի առուակի և կանգ առան:

— Լսիր, այ մաքուր առուակ, — ասաց մարդը. — ես կրակից ազատեցի այս օձին, իսկ սա՛ փոխանակ շնորհակալ լինելու՛ կամենում է ինձ խեղդել: Ասում է, թէ աշխարհիս մէջ միշտ լաւութեան դէմ վատութիւն են անում: Ճշմարիտ է:

— Ճշմարիտ է, — պատասխանեց առուակը. — այ, տես, սրբան վճիռ ու մաքուր է իմ ջուրը: Գալիս են իմ մօտ մարդիկ իրանց ձիերով, ուղտերով և ես նրանց բոլորին թարմ, մաքուր ջուր եմ տալիս: Եթէ ես չլինիմ, նրանք ծարաւից կը մեռնեն այս ամայի

դաշտում: Բայց գիտես, նրանք ինչպէս են դուրս գալիս իմ լա-  
ուութեան տակից: Հեռանալիս ամեն տեսակ աղբ ու կեղտով  
ջուրս կեղտոտում, փչացնում են:

Այս որ լսեց օձը, սկսեց աւելի պինդ սեղմել մարդու կոկոր-  
դը: Առաջ գնացին:

Գ.

Ահա նրանք հասան մի բարձր ծառի և կանգ առան: Մարդը  
պատմեց նրան, թէ գործն ինչու՞մն է: Ծառն ասաց.

— Աշմարիտ է ասում օձը: Եւ ահա, թէ ինչու: Գու ինքզ էլ  
լաւ գիտես, որ այս դաշտում ճանապարհորդները, բացի իմ  
ստուերից, ուրիշ տեղ չունին հանգստանալու: Բայց նրանք հան-  
գստանալուց և իմ պտուղները վայելելուց յետոյ՝ տերեւներս պո-  
կոտում, ճղներս կոտրատում, կեղևս քերթում են և իրանց համար  
կրակ անում: Մի օր ինձ էլ, միւս քոյրերիս նման, պէտք է ար-  
մատիցս կտրեն, գետնին տապալեն: Ահա այս է նրանց վար-  
մունքը իմ լաուութեան դէմ:

Օձն աւելի պինդ սեղմեց մարդու կոկորդը: Խեղճն այլևս ոչ  
կարող էր խօսել, ոչ շունչ քաշել, այլ միայն խռոխրուացնում  
էր: Յանկարծ նա նկատեց, որ հեռուից մի գայլ է վազում: Մարդը  
ձեռքով նշան արաւ օձին: Օձը քիչ բաց թողեց նրա կոկորդը:

— Սպասիր, գայլ, — կանչեց մարդը. — քեզ բան ունիմ ասելու:

— Լաւ, ասա, միայն ինձ շատ մի մօտենալ, — ասաց վախ-  
կոտ գայլը և կանգ առաւ:

Գ.

Մարդն ու օձը քիչ մօտեցան գայլին և պատմեցին բոլորը:

— Ուրեմն դու օձին կրակից ազատել ես, — հարցրեց գայլը  
մարդուն: — Դա մի քիչ դժուար հաւատարու բան է:

— Մարդն սկսեց մէկ-մէկ պատմել, թէ ինչպէս էր եղել:

— Ո՛չ, ո՛չ, — պատասխանեց նրան գայլը. — պատմելն աւելորդ է.  
աւելի լաւ է՝ ցոյց տո՛ւր, թէ ինչպէս արիւր այդ:

Մարդը նիզակը մեկնեց դէպի գետին և օձը նրա վրայով  
ցած սողաց:

— Գէհ, այժմ ինչ կասես, — հարցրեց գայլին:

— Թշնամին ոտներիդ տակ է և դու դեռ հարցնում ես, թէ  
ինչ պէտք է անես: Սպանիր նրան նիզակովդ, — ասաց գայլը  
մարդուն:

— Ո՛չ, — պատասխանեց մարդը. — միայն գազաններն են այդպէս  
վարում, իսկ մեզ Աստուած պատուիրում է սիրել մեր թշնամի-  
ներին և ներել նրանց: Մնաս բարև, օձ, ողջ կաց և միտդ պա-  
հիր այս: — Ասաց մարդը և փախաւ, օձի ձեռքից ազատուեց:

### 46. Պ Ա Ր Տ Է Չ

Պարտէզները շինում են տների մօտ և շրջապատում են ցան-  
կապատով կամ ճաղերով: Պարտէզներում տնկում են պտղատու  
և հասարակ ծառեր ու թփեր, որոնք շատ անգամ գեղեցիկ  
ստուերախիտ ծառուղիներ են կազմում: Ծառերի մէջ մարդիկ  
ցանում են զանազան բանջարեղէններ և շինում են գեղեցիկ ծաղ-  
կաթմբեր, որտեղ ծաղիկներ են տնկում — մեխակ, յափուկ, կա-  
կաչ, շուշան և այլն:

Պարտէզը մշակում է նրա տէրը կամ պարտիզպանը. հողը  
պարարտացնում են աղբով, իսկ չոր եղանակին ջրում են: Պար-  
տէզներին վնաս են տալիս թրթուրները, որդերը, թռչունները և  
ընտանի կենդանիները:

### 47. Բ Ո Ս Տ Ա Ն Չ Ի

Ամառն է: Կարծես կրակ է բարձրանում  
Գետնի երեսից, այրում, տապալում.  
Ո՛չ շունն է հաչում, ոչ ճիճին երգում,  
Գորտն էլ է լռել, էլ չի կրակըում:

Ամենքն էլ փախել, հով տեղ են գտել,  
Իրանց բներում լուռել, պապանձուել:

Միայն մի հատիկ մարդ է երևում  
Խորընկած դաշտում, առուի եզերքում:

Կանգնած է մարդը արևի տակին,  
Ոտն ու ծունկը բաց, բահը դրած ուսին.  
Մի շապիկ միայն ունի նա հագին  
Եւ մի սպիտակ թասակ կալ գլխին:

— Բայց ինչ մարդ է նա և ինչ է շինում,  
Արևի տակին ինչո՞ւ է այրում:

— Նա ըստանչի է, ըստան է ջրում,  
Սեխն ու ձմերուկը նա է հասցնում:

#### 48. ՊԱՐՏԻԶՊԱՆՆ ՈՒ ԻՒՐ ՈՐԴԻՔԸ

Մի ծերունի պարտիզպան շարունակ խրատում էր իւր որ-  
դոցը, որ աշխատասէր լինին, բայց որդիքն ականջ չէին դնում  
նրան: Երբ ծերունին զգաց, որ մահը մօտ է, կանչեց որդոցն  
ու ասաց նրանց.

— Սիրելի զաւակներս, իմ ունեցած-չունեցածս այս տունն  
ու պարտէզն է: Ուրիշ բան չունիմ, որ ձեզ թողնեմ: Բայց պար-  
տիզում գանձ կայ թաղած: Փորեցէք և անշուշտ կը գտնէք:

Ծերունու մահից յետոյ որդիքն սկսեցին փորփորել պարտէզը:  
Փորեցին, փորեցին, ոչինչ չգտան. բայց հետևեալ տարին պար-  
տիզի ծառերն առատ պտուղ տուին: Այդ ժամանակ միայն նրանք  
հասկացան, թէ ինչ գանձի մասին էր ասում հայրը, և այնուհե-  
տև սկսեցին ջանասիրութեամբ աշխատել ու շուտով մեծ հարս-  
տութեան տէր դարձան:

#### ԳՐԵՒՈՐ ՎԱՐԹՈՒԹԻՒՆՆԵՐ

37. Հետեւալ նախադասութիւնների մէջ աւելացրէք որոշիչ (յատ-  
կացուցիչ) բառեր և նրանց տակ գիծ քաշեցէք:

Հպարտ առիծը խօսեց համեստ մեղուի հետ: .... սարդը  
ցանց է հիսում: ..... աղուէսը հաւ փախցրեց: Գայլը .. .. կեն-

գանի է: .... նապաստակը .... խոտ է արածում: Կովն .... կեն-  
դանի է: Աստուած պատժում է ..... մարդկանց:

38. Արտագրեցէք և պատկանելութիւն ցոյց տուող որոշիչ (յատ-  
կացուցիչ) բառերի տակ գիծ քաշեցէք:

Ի՛մ (ո՞ւմ) հայրը իր (ո՞ւմ) ծին ծախեց: Վարդի (ի՞նչի)  
հոտն ախորժելի է: Իշի (ո՞ւմ) ականջներն երկար են: Երա (ո՞ւմ)  
եղբայրը մեր (ո՞ւմ) հարեանի (ո՞ւմ) տանն է: Արծիւը իր (ո՞ւմ)  
ըունը հիսում է բարձր ժայռերի (ի՞նչի) կատարին: Մեր (ո՞ւմ)  
տան (ի՞նչի) կտուրը հողով է ծածկուած:

39. Գրեցէք մի քանի նախադասութիւն լրացուցիչ և որոշիչ (յատկա-  
ցուցիչ) բառերով:

#### 49. Ծ Ա Ռ Ի Կ

Ա՛յ նորատունկ իմ ծառիկ,  
Զիւեր արա՛ գեղեցիկ,  
Արմատ ձգէ՛ դու հողում,  
Որ չշարժէ քեզ մըրիկ:

Ես ամեն օր քեզ համար  
Ջուր կը բերեմ սափորով  
Եւ քո տակը կը փորեմ,  
Որ գորանաս դու շուտով:

Ծաղիկ, տերև ու պտուղ  
Թո՛ղ զարդարեն քո ճիւղեր,  
Նրանց վրայ թող երգեն  
Անոյշ ձայնով սոխակներ:

Հաստացրո՛ւ քո բունը.  
Այն ժամանակ փոթորիկ  
Թո՛ղ մոնչէ, որոտայ,  
Զի վնասիլ քեզ, ծառիկ:

#### 49. ԾԱՌԵՐԻ ՎԷՃԸ

Ծառերը վիճեցին միմեանց հետ, թէ իրանցից ո՞րն է լաւը:  
Կաղնին ասաց.

— Ես բոլոր ծառերի թագաւորն եմ. իմ արմատը շատ խորն  
է թաղուած գետնի մէջ, բունս հաստ է, գազաթս մինչև երկինք  
է հասնում. իմ տերևները շատ գեղեցիկ են, իսկ ճղներս կարծես  
երկաթից ձուլած լինին: Ես փոթորիկների առաջ չեմ խոնարհ-  
ւում, մըրիկի առաջ չեմ թեքում:

Խնձորենին լսեց կաղնու խօսքերն ու ասաց.

— Չատ էլ մի պարծենար, սիրելի կաղնի, որ դու այդքան մեծ ես և հաստ. դու այս աստ, թէ քո պտուղներն ո՞վ է գործածում՝ բացի խոզերից. իսկ իմ կարմիր խնձորն արքայական սեղանների վրայ անգամ տեղ ունի:

Հսում է մայրին, շարժում է իւր փշոտ գլուխը և ասում.

— Սպասեցէք մի քիչ, շուտով կըգայ ձմեռը և դուք երկուսդ էլ կըմերկանաք, իսկ ինձ վրայ այնուամենայնիւ կըմնան իմ կանաչ փշերը: Առանց ինձ ցուրտ երկրներում ապրել անկարելի է. ինձանով մարդիկ բնակարաններ են շինում և իրանց վառարանները վառում:

### 51. ԾԱՌԵՐՆ ՈՒ ԿԱՅԻՆԸ

Ծառերն անտառում, երբ շատ նեղացան  
Կացնի ձեռիցը և էլ չիմացան,

Ինչ անեն, որ իրանց գլուխը պահեն,

Խորհուրդ արին, որ մի հնար գտնեն:

— Կացինն ո՞վ է, որ մեզ կաջողանայ

«Ձօռ անել, յաղթել, ինչ մեծ բան է նա.

Այսպէս ձայն տուեց ծառերից մէկը.—

«Մենք որ կոթ չտանք, կացինն ինչ է, որ

«Յանդգնի անել մեզ կտոր-կտոր:

«Թող իմացողն ինքն իմանայ

«Եւ իզուր տեղը կացնից չնեղանայ.

«Ով որ կոթ կըտայ պողպատէ կացնին,

«Թող հոգացն ասէ առաջ իւր անձին»:

### 52. ԵՐԿՈՒ ԽՆՁՈՐԵՆԻ

Մի պարտիզական երկու որդի ունէր: Մայիս ամսին հայրը նրանց մի-մի խնձորենի ընծայեց: Երկու ծառերն էլ միաչափ

և միատեսակ էին. միայն իրարից մի քիչ հեռու էին տնկած պարտիզում:

Մեծ որդին, որ մի աշխատասէր պատանի էր, սաստիկ ուրախացաւ հօր պարգևի վրայ և իսկոյն սկսեց ամեն աշխատութիւն ու խնամք գործ գնել, որ ծառը լաւ աճի, գօրանայ. նա ծառի վրայից թրթուրները հեռացրեց, չորս կողմի հողը լաւ փափկացրեց, որ օդն ու խոնաուութիւնը մինչև նրա արմատներն հասնեն:

Իսկ կրտսեր որդին, որ սաստիկ ծոյլ էր և անուշաղիր, բոյորովին մոռացաւ իւր խնձորենին և սեպտեմբեր ամսին միայն, երբ բոյորն էլ արդէն սկսել էին խնձորները ժողովել, նրա միտն ընկաւ ծառը: Բայց ո՞րքան զարմացաւ նա, երբ՝ ծառին մօտենալով, ո՞չ մի խնձոր չգտաւ նրա վրայ. պտուղների մի մասը դեռ խակ ժամանակ թրթուրներն էին կերել, իսկ միւս մասը քամին էր թափել, փչացրել. այնինչ եղբօր խնձորենու վրայ կարմիր, գեղեցիկ պտուղները հեռուից անգամ երևում էին: Արտասուքն աչքերին՝ մանուկը վազեց էհօր մօտ և զանգատուեց, թէ ինչո՞ւ էր նա իրան վատ և անպտուղ ծառ ընծայել, իսկ եղբօրը — լաւը և պտղատուն:

— Ձեզ երկսիդ էլ ես միևնոյն տեսակ խնձորենի էի նուիրել, — պատասխանեց հայրը, — բայց քո եղբայրը ո՞չ մի աշխատութիւն և խնամք չխնայեց իւր ծառի համար, այնինչ դու ծուլացար և ամենևին ուշադրութիւն չգարձրիր քօնի վրայ:



### 53. ԽՈՋԸ ԿԱՂՆԻ ԾԱՌԻ ՏԱԿ

Խոջը՝ հաստարամատ կաղնու տակ կանգնած,  
 Գերաւ կաղինը, գլուխը կախած.  
 Մինչև կոկորդը կերաւ, լցուեցաւ,  
 Եպա կաղնու տակ հանդիստ քնեցաւ:

Յետոյ զարթնելով՝ բացաւ աչքերը  
 եւ բութ կնճիթով սկսաւ փորել  
 Այն կաղնի ծառի հաստ արմատները,  
 Որից այդ ժամին սնունդ էր առել:

— 2է որ այդ բանը ծառին վնաս է,—  
 նրան վերեւից ազուաւ կասէ.

«Եթէ այդպիսով արմատը բանաս,  
 «Նա կըչորանայ, այդ լաւ իմանաս»:

— Իսկ ինձ ինչ վնաս, թէ կըչորանայ,—  
 Յածից ասում է նրան խոզն ազահ.

«Ես զրա մասին բնաւ չեմ ցաւում,  
 «Վաղինն է իմս, նա է գիրացնում»:

Ծառը բարձրիցը՝ «Ապերախտ,—ասաց,  
 Ո՛ւստի են թափում կաղինները ցած.

«Գէթ կարենայիր մի վերև նայել  
 «Եւ կոյր աչքովդ այդ բանն ստուգել»:

#### ԳՐԱԽՈՐ ՎՆՐԹՈՒԹԻՒՆՆԵՐ

40. Արտագրեցէք և տեղ ցոյց տուող պարագայական բառերի տակ զի՞ծ քաշեցէք:

Աշակերտը գնում է (ո՛ր) ուսումնարան: Պարտիզում (ո՛րտեղ) գեղեցիկ ծառեր կան: Աստղերը փայլում են (ո՛րտեղ) երկնքում: Եղբայրս սկաւ (ո՛րտեղից) Տփլիսից: Հայրս գնաց (ո՛ր) եկեղեցի: Աշակերտները վերադառնում են (ո՛րտեղից) դպրոցից:

Ձկները լողում են (ո՛րտեղ) ջրում: Ծոգենաւը լողում է (ո՛րտեղ) ծովի երեսին:

41. Արտագրեցէք և հարցերին համապատասխան տեղ ցոյց տուող պարագայական բառեր աւելացրէք:

Գիւղացիները աշխատում են (ո՛րտեղ)....: Մարդիկ ընակում են (ո՛րտեղ)....: Մեղուները թռչում են (ո՛րտեղից)....: (ո՛ր)....: Կարմիր տրեւը քարձրացաւ (ո՛ր)....: .... (ո՛րտեղ) շատ թռչուններ են ընակում: .... (ո՛րտեղ) մարդիկ աղօթում են Աստծուն:

42. Հարցերին նայելով լրացրէք հետևեալ համառօտ նախադասութիւնները:  
 Ես գրեցի:— Ի՞նչ: Ի՞նչպիսի: Ո՛ւմ: Ո՛րտեղ:

Քոյրը գնաց:— Ո՛ւմ քոյրը: Ի՞նչ: Ի՞նչպիսի: Ո՛ւմ համար:

Հայրը գնաց:— Ո՛ւմ հայրը: Ո՛ւմ հետ: Ո՛րտեղից: Ո՛ր:

Ուսուցիչը հարցնում է:— Ո՛ւմ ուսուցիչը: Ի՞նչ: Ո՛ւմ: Ո՛րտեղ:

Մանուկը խաղում է:— Ո՛րտեղ: Ո՛ւմ հետ:

Օրինակ:— Դպրոցում ես երկար նստակ գրեցի քրոջս:

### 54. ԱՂԻԱՏԱՄԻՐՈՒԹԻՒՆ

Ա.

Մի անգամ Ազրիան կայսրը դրօսնելիս պատահեց մի զառամեալ ծերունու, որ մի մատաղ թղթի էր տնկում, և ասաց նրան.

— Եթէ դու երիտասարդութիւնդ անգործ անցկացրած չլինէիր, այժմ ստիպուած չէիր լինել այդ զառամեալ հասակումդ աշխատել:

— Մանկութիւնիցս սկսած՝ ես ծոյլ չեմ եղել, տէր-թաւաւոր,— պատասխանեց ծերունին,— և ահա մինչև ծերութիւնս էլ աշխատում եմ, ինչքան որ կարող եմ: Աստուած սիրում է աշխատանքը:

— Քանի տարեկան ես,— հարցրեց կայսրը.

— Մօտ հարիւր,— պատասխանեց նա:

— Ի՞նչ, — բացագանչեց կայսրը, — և այդ հասակումդ դեռ ծառեր ես տնկում: Մի՞թէ միտք ունիս դրանց պտուղները վայելել:

— Յոյս ունիմ, — պատասխանեց ծերունին, — Իսկ եթէ Աստուած այդ չկամենայ, գոնէ ուրիշները կը վայելեն և շնորհակալ կը լինին ինձանից. չէ որ ես էլ իմ հայրերի աշխատանքն եմ վայելել:

Այս պատասխանը դիւր եկաւ կայսերը:

— Լաւ, ասաց նա. — եթէ դու բազմ կունենաս այդ ծառի պտուղները քաղելու, իմաց տուր ինձ:

β.

Անցաւ մի քանի տարի: Ծերունին դեռ ապրում էր և շարունակում խնամել իւր պտրտէզը: Ծառը մեծացաւ, ծածկուեց ծաղիկներով և վերջապէս դարձարուեց պտուղներով:

Ծերունին քաղեց պտուղները, ընտրեց նրանցից ամենալաւերը, դարսեց կոյովի մէջ և տարաւ պալատը:

Կայսրը հեռուից նկատեց ծերունուն և հրամայեց ներս կանչել:

— Ի՞նչ ես կամենում, — հարցրեց նա:

— Մի քանի տարի սրանից առաջ, — ասաց ծերունին, — եթէ մտաբերում է ձերդ մեծութիւնը, դուք տեսաք մի ծերունու, որ իւր պարտիզում մի մատաղ ծառ էր տնկում: Դուք այն ժամանակ ցանկութիւն յայտնեցիք, որ եթէ այդ ծերունուն յաջողուի քաղել այդ ծառի պտուղները, ձեզ իմաց տրուի: Ես այն ծերունին եմ և ահա իմ աշխատանքի պտուղը:


Կայսրը սիրով ընդունեց պտուղները և մեծարեց ծերունուն:

### 65. ԱՆՏԱՌԸ ԵՒ ԱՌՈՒԱԿԸ

Փոքրիկ առուակը, որ խոխոջելով հոսում էր խիտ անտառի միջից մի, օր սկսեց տրտնջալ իւր վիճակի վրայ:

— Ի՞նչ դժբաղդն եմ ես, — ասում էր նա. — այս զգուելի անտառը ծածկում է ինձանից պարզ երկինքը և թոյլ չի տալիս, որ արեգակի պայծառ ճառագայթներն ու զովարար քամին ազատ

խաղան ջրերիս հետ: Ա՛խ, ո՛ր էր, թէ մարդիկ կտրատէին, ոչնչացնէին այս զգուելի անտառը:



— Սիրելի զաւակս, — հանդարտ պատասխանեց անտառը, — դու դեռ փոքր ես և չես հասկանում, որ իմ ստուերը պաշտպանում է քեզ արեգակից և քամուց. եթէ իմ այս պաշտպանութիւնը չլինէր, դու արդէն չարացած կը լինէիր նրանց ներգործութիւնից: Դեռ սպասիր, զօրացիր իմ ստուերի տակ և երբ որ կը մեծանաս, այն ժամանակ հոսիր դէպի ընդարձակ դաշտը և աներկիւղ խաղան փայլուն արեգակի և զօրեղ քամու հետ:

### 56. Ա Ռ Ո Ւ Ա Կ

Լերկ քարաժայռից մի վճիտ առուակ  
Բզխում է մեղմիկ՝ խոխոջ հանելով.  
Խօրը ձորերով անցնում է արագ  
Փրփրած ալիքներն արծաթի փայլով:

Յառաջ է վազում քաղցր շշուկով,  
Դաշտեր, արօտներ և մարգեր մտնում  
Ու քչքչալով, վեր-վար ոստնելով՝  
Գարնան կենսատու գալուստն արևտում:




Թե նաւակներ. իսկ նրա ջրերի մէջ խաղում են ուրախ ձկները՝  
փայլեցնելով իրանց արծաթափայլ թեփուկները:

Դ.

Գետակը վազում, խառնւում է ուրիշ գետակի հետ և միասին  
առաջ են գնում: Ճանապարհին նրանց պատահում է երրորդը,  
չորրորդը... և այսպիսով կազմւում է մի անազին գետ, որն ունե-  
նում է բազմաթիւ վտակներ և անցնում է մի թագաւորութիւ-  
նից միւսը. երբեմն միեւնոյն գետը անցնում է շատ մանր տէրու-  
թիւնների միջով և նրանց ամենքին էլ բաշխում է իւր առատ  
ջրից: Լողում են գետի վրայ ծանր նաւեր, որոնք բարձած են  
լինում զանազան ապրանքներով, անցուղարձ են անում շոգե-  
նաւեր. իսկ ափերին շինում են արհեստագործական գիւղեր ու  
քաղաքներ՝ մէկը միւսից հարուստ: Գետը մեծամեծ հարստու-  
թիւններ է տանում երկրից-երկիր կամ գէպի հեռաւոր ծովեր և  
իւր բերանով ո՛չ միայն փոքրիկ նաւակներ, այլև մեծամեծ առա-  
գաստանաւեր և շոգենաւեր է ծով մտցնում:

Գետերից շատ ջուր է թափւում ծովերի մէջ, բայց արեգակն  
էլ հանգիստ չի մնում. նա առատ գոլորշի է բարձրացնում, ամպեր  
կազմում և ամբողջ աշխարհին անձրև է բաժանում:

Գետերը դարերով թափւում են, թափւում ծովերի մէջ, բայց  
նրանց չեն լցնում. արևն էլ յաւիտեան գոլորշի է բարձրացնում  
ծովերից, բայց դարձեալ նրանց չի ցամաքեցնում: Այսպէս ամե-  
նիմաստ կերպով է կարգադրել Աստուած այս բանը:



58. Ա Ղ Բ Ի Ի Ր

Աղբիւր, դու հոսիր, վաղիր, կարկաչիր,  
Ջուր տ՛ուր արտերին, պարտէզը ջրիւր,

Ծարաւ ծաղիկներ քեզ են սպասում,  
Սիրոյդ կարօտով այրւում, պապակում:

Առանց քեզ, աղբիւր, աշխարհ չի լինի.  
Առանց աղբիւրի ի՞նչ կեանք կըլինի.  
Գո՛ւ ես կեանք տալիս թառամած վարդին,  
Գո՛ւ ես զովացնում ծարաւը մարդին:

Ո՛վ աղբիւրի պէս նախանձ չի պահում,  
Ո՛ւմ հոգին այնպէս պայծառ է փայլում,  
Ո՛վ է նրա պէս միշտ ներդրամիտ,  
Ո՛ւմ միտքն է այնպէս պայծառ ու վճիտ:

Չարերը նրա մէջ քարեր են զցում,  
Նրա յատակը խառնում, պղտորում,  
Բայց նա լճնամուն կրկին ներում է,  
Նրա ծարաւն էլ զովացնում է:

Երանի կըտամ ես այն մանուկին,  
Որ աղբիւրի պէս մաքրէ իւր հոգին,  
Նրա պէս պայծառ պահէ իւր սիրտը,  
Նրա պէս պայծառ պահէ իւր անձը:

50. Օ Գ Ե Ի Ք Ա Մ Ի

Օղը մենք չենք տեսնում և ոչ էլ լսում ենք նրա ձայնը, քա-  
նի հանդարտ է: Սակայն նա մեզ մօտ է և ամեն կողմից շրջա-  
պատում է մեզ: Փորձի համար՝ եթէ մենք վազենք, իսկոյն  
կըզգանք, թէ ինչպէս է օղը խփում մեր երեսին և կըլսենք նրա  
շվիտցը: Առանց օղի մենք մի բոպէ չենք կարող ապրել,  
որովհետեւ նրանով ենք շունչ քաշում:

Երբ ձմեռը բաց ենք անում սենեակի դուռը, իսկոյն դրսի  
ցուրտ օղը ցածից սկսում է ներս վազել, իսկ սենեակի տաք  
օղը բարձրից դուրս է գնում: Փորձի համար վեր առէք մի վա-  
դած մում, բռնեցէք դռան մէջ և դուք կընկատէք այդ: Մոմը ցած

բռնելիս՝ կրակի բոցը դառնում է դէպի ներս, իսկ երբ բարձրացնէք—դէպի դուրս: Այս նրանից է, որ ցուրտ օդը ծանր է և այդ պատճառով էլ միշտ ներքեն է լինում, իսկ տաքացած օդն, ընդհակառակը, թեթև է և վեր է բարձրանում:

Դուք լաւ գիտէք, որ քամին երբեմն մի կողմ է փչում, երբեմն—միւս: Դա էլ օդն է, որ շարժւում է, մի տեղից միւսն է վազում: Իսկ ինչից է առաջ գալիս քամին:—Երբ երկրի մի որևէ տեղում օդը շատ է տաքանում արեգակից, իսկ միւսում քիչ, իսկոյն վերևից տաքացած օդն է սկսում վազել դէպի ցուրտ կողմերը, իսկ ներքևից սառը—դէպի հակառակ կողմը՝ ճիշտ այնպէս, ինչպէս որ լինում է տաք սենեակի դուռը բանալիս:

ԳՐԱԴՐՈՒ ԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

46. Հետևեալ նախադասութիւնների մէջ հարցերին համապատասխան որոշիչ (յատկացուցիչ), լրացուցիչ և պարագայական բառեր աւելացրէք:

Վայրենի այծն արածում է (ո՞րտեղ)..... Ես (մ՞րք).... կը գամ (ո՞ւր): .... (ի՞նչպիսի) մանուկները արժանի են (ի՞նչի): .... (մ՞րք) մեզ մօտ հիւրեր կը լինին: Քոյրս (մ՞րք).... (ո՞րտեղ) .... գնաց մի (ի՞նչ)..... Մեր դպրոցում պարսպմունքները տեւում են (ո՞ր ժամանակից մինչև մ՞րք)..... Ժիծեռնակները (մ՞րք).... հեռանում են (դէպի ո՞ւր).....

47. Հետևեալ նախադասութիւններից արտագրեցէք ստորոգեալներն ու գործողութեան կերպը ցոյց տուող պարագայական բառերը իրանց հարցերով:

Աշխատասէր մանուկը միշտ իւր դասերը լաւ (ի՞նչպէս) է պատրաստում: Երուանը բարձր ծայնով (ի՞նչպէս) գիրք է կարդում: Ուսուցիչը խիստ կերպով (ի՞նչպէս) պատժում է ծոյլ աշակերտին: Աստուած ամենիմաստ կերպով (ի՞նչ կերպով) կարգադրել է ամեն բան: Խելօք երեխան ուշադրութեամբ (ի՞նչպէս) լսում է մեծերի խրատները:

Օրինակ.—Պատրաստում է (ի՞նչպէս) լաւ:

60. ԲԱՐԻ ԳՈՐԾ

Սարի լանջում, ժայռի տակ,  
Ջուր էր բղխում սառնորակ  
Եւ ցրուելով խոտերում,  
Իգուր ճահիճ էր դառնում:

Նրա առջև մի խոր գուշ  
Ձինեց հովին ու տարաւ,  
Խաղ ասելով նա անուշ,  
Ջրից հօտը իւր ծարաւ:

Պախրէն անցաւ այն սարից,  
Չոգից հանած չոր լեզուն,  
Կուշտ-կուշտ խմեց աղբիւրից,  
Ապա նայեց Ստըծուն:

Անցուորն եկաւ տօթակէզ,  
Սառն աղբիւրը որ տեսաւ,  
Գլխարկն առաւ ու չորեց,  
Խմեց, սիրտը հովացաւ:

Ապա թէ իւր օրհնանքը  
Մաղթեց մարդը այն բարի.  
—Քո շինողիդ օր-կիանքը  
Ջրի նման երկարի:

61. ՔԱՄԻՆ ԵՒ ԱՐԵՒԸ

Մի անգամ արեգակն ու հիւսիսային զօրեղ քամին վէճ բաց արին, թէ նրանցից ո՞րն է ուժեղ: Երկար վիճելուց յետոյ, նրանք վերջապէս վճռեցին իրանց ոյժը փորձել այն ճանապարհորդի վրայ, որը նոյն ժամին ձիով անցնում էր մօտից:—«Նայիր, թէ ինչպէս կը յարձակուեմ նրա վերարկուն»:—Այս ասաց թէ չէ, սկսեց փչել՝ որքան ոյժը կտրում էր. բայց որքան շատ էր աշխատում քամին, այնքան աւելի պինդ էր փաթաթւում ճանապարհորդը վերարկուի մէջ և աւելի շտապով շարունակում իւր ճանապարհը: Քամին բարկացաւ, կատաղեցաւ և անձրև ու ձիւն թափեց ճանապարհորդի վրայ: Անիծելով քամուն՝ նա վերարկուի թևերը հագաւ, վրայից էլ գօտին կապեց: Նոր հասկացաւ քամին, որ էլ չի կարող նրա վերարկուն խլել: Տեսնելով իւր հակառակորդի անզօրութիւնը, արեգակը ժպտաց, դուրս նայեց ամպերի յետևից, տաքացրեց երկիրը, զրա հետ էլ մեր խեղճ, սառած ճանապարհ-

հորդին: Արեղակի ճառագայթներից տարացած՝ նա սիրտ առաւ, օրհնեց արեգակը, հանեց վերարկուն, ծալեց ու կապեց թամբին:

— Տեսնում ես, — ասաց այն ժամանակ հեզիկ արեւ բարկացկոտ քամուն. — քաղցրութեամբ և բարութեամբ աւելի բան կարելի է անել, քան թէ բարկութեամբ:

62. Ա Ր Ե Ի

Արև՛, արև՛, դու մեզանից  
Երբ հեռացար դէպ հարաւ,  
Չմեռն եկաւ և ամեն ինչ  
Յափշտակեց ու տարաւ:

Աստուած սիրես, էլ մի վնար,  
Մեզ մի թողնիր քեզ կարօտ.  
Քեզ կը պատուենք, քեզ կը գովենք  
Միշտ — իրիկուն, առաւօտ:

Որքան գոհ ենք, որ դու բերիլ  
Գարնան անուշ եղանակ.  
Ա՛խ, երանի գարուն լինի  
Տարին բոլոր ժամանակ:

Տես, թէ ինչպէս փթթել են  
Ծառ ու ծաղիկ, կանաչ խոտ,  
Տես, թէ ինչպէս տարածուել է  
Ամենայն տեղ անուշ հոտ:

Քեզ են գովում թռչնիկները  
Իրանց քաղցր դայլայլով,  
Հովիւն իւր մեղմ սրինգով,  
Հօտաղն անուշ հոլովով:

Չէ, արև ջան, էլ չգնաս,  
էլ չթողնես մեզ կարօտ.  
Գնա՛, քնիւր գիշերները,  
Առաւօտը եկ մեզ մօտ:

63. Կ Ր Ա Կ

Սիմէօնը գնաց դաշտը: Չատ ցուրտ էր և անձրեւ էր գալիս. նա զոզոզում էր ամբողջ մարմնով: Սիմօնը մտաւ անտառը, չոր ցախ հաւաքեց, գրպանից հանեց լուցկին և կրակ արաւ: Այստեղ նա տաքացաւ, շորերը շորացրեց և հետը վերցրած հացը կերաւ, կշտացաւ:

Կրակի առաջ նստած՝ Սիմէօնը մտածում էր.

— Ի՛նչ լաւ բան է կրակը. առանց նրան ո՛չ կերակուր կարելի է եփել, ո՛չ տաքանալ: Տես, թէ որքան գործ է շինուում դարբնանոցում և գործարաններում: Եթէ կրակը չլինէր, մենք երկաթից

ինչպէս պէտք է պլայտեր, խոփ, կացին և ուրիշ շատ բաներ շինէինք: Ճշմարիտ է, թէ և երբեմն մենք կրակից վնաս ենք ստանում, բայց այդ էլ մեր անզգուշութիւնից, մեր յիմար անհոգութիւնից է պատահում:

Գ Ր Ե Ի Ո Ր Վ Ե Ր Թ Ո Ւ Թ Ի Ի Ն Ե Ն Ե Ր

48. Լուծեցէք հետեւալ նախադասութիւնները:

Բարի Սիմէօնը երէկ դաշտն էր գնացել: Արամն այսօր անտառից չոր ցախ բերեց: Մեր ուսուցիչը դասի ժամանակ մանրամասնաբար պատմեց երկրի մասին:

Օրինակ. — Բարի Սիմէօնը երէկ դաշտն էր գնացել — սա մի ընդարձակ նախադասութիւն է: Ո՞վ էր գնացել: Սիմէօնը — ենթակայ է: Սիմէօնը ի՞նչ էր արել: Գնացել էր — ստորոգնալ է, եւայլն:

49. Արտագրեցէք և գործողութեան պատճառն ու նպատակը ցոյց տուող պարագայական բառերի տակ գիծ քաշեցէք:

Չինը հալում է (ինչից) տարութիւնից: Մոմը հալում է (ինչից) կրակից: Բերանս պապակում է (ինչից) ծարաւից: Գրքերը տպում են (ինչից համար) կարդալու համար: Ես այսօր տանից դուրս չեկայ (ինչ պատճառով) հիւանդութեան պատճառով: Ես կարմրեցայ (ինչից) ամօթից: Ծատ քաղաքներ ամայի են դառնում (ինչից) ժանտախտից:

50. Լրացրէք հետեւալ նախադասութիւնները:

Հօրեղբայրը վերադարձաւ: — Ո՞ւմ հօրեղբայրը: Ե՞րբ: Ո՞րտեղից: Ինչո՞վ: Ինչի՞ց համար:

Շունը խաղում է: — Ի՞նչպիսի շունը: Ի՞նչպէս: Ո՞րտեղ: Ո՞ւմ հետ:

51. Լուծեցէք ձեր կազմած նախադասութիւնները:

64 Գ Ա Ր Բ Ի Ն

Կռանը ձեռքին, գնդանն առաջին,  
Քիթ, երես մրտա, դարբնոցի միջին  
Կաշուէ գոգնոցը առաջը կապած՝  
Լռիկ կանգնած է մեր Խաչօ դարբին:

Փուքսը փո՛ւհ-հա-փո՛ւհ փչում է, փչում,  
Կայծեր ու մոխիր դէսուդէն փռում.  
Երկաթի մի շերտ հնոցը կոխած՝  
Սաստիկ տաքիցը վառում, կարմրում:

Խաչօն հանում է երկաթի շերտը,  
Ջնդանի վրայ կռանով ծեծում,  
Զինում նրանից պայտ, մեխ ու կացին  
Եւ իսկոյն ջրի տաշտակը կոխում:

Թըշշում է երկաթը ցուրտ ջրի միջին,  
Ամպի պէս փռում տաք-տաք գոլորշին,  
Կրկին պնդանում, կրկին փափկանում,  
Մինչև պատրաստուած շարտում գետնին:

Այսպէս ամբողջ օր մեր դարբին Խաչօն՝  
Կրակի առաջ, այն կեղտ ու մուրում,  
Մի կտոր չոր հաց ճարելու համար,  
Կուշ-ձիգ անելով՝ իւր կեանքն է մաշում:

65. Ե Ր Կ Ո Ւ Խ Ո Փ

Միևնոյն երկաթի կտորից և միևնոյն արհեստանոցում շին-  
ուած էին երկու խոփ: Դրանցից մէկը գնեց մի երկրագործ և  
սկսեց գործածել նրան, իսկ միւսը երկար ժամանակ բոլորովին  
անօգուտ ընկած էր վաճառականի խանութում: Պատահեցաւ,  
որ միքանի ժամանակից յետոյ երկու ընկերները դարձեալ տե-  
սան իրար: Երկրագործի մօտ եղած խոփն արծաթի պէս պըս-

պղում էր և առաջուանից աւելի գեղեցկացել էր, իսկ միւսը  
սևացել էր ու ժանգոտել:

—Սս՛, խնդրեմ,— հարցրից ժանգոտած խոփը իւր ընկե-  
րին.— այդ ինչիցն է, որ դու այդպէս փայլում ես, իսկ ես այս-  
պէս սևացել եմ ու ժանգոտել:

— Աշխատելուց, սիրելիս,— պատասխանեց միւսը.— իսկ դու  
որ ժանգոտել և առաջուանից աւելի վատացել ես, այդ էլ նրա-  
նից է, որ այսքան ժամանակ կողքիդ ընկած՝ ոչինչ չես արել:

66. Ե Ր Կ Ո Ւ Ք Ո Յ Ր

Մեզնից շատ առաջ կար մի թագաւոր,  
Հոգով դեռ արի, գլխով ալևոր.  
Մեծ ծով էր պատել նրա աշխարհը.  
«Ոսկի» ասացին գիտունք այն դարը:

Ունէր նա երկու մատաղհաս աղջիկ,  
Մինը խիստ տգեղ, միւսը գեղեցիկ.  
Մի օր տգեղը ասում է միւսին.  
«Երթանք ծովի ափ, քոյրիկ, միասին»:

Սիրունը գնաց առաջից տրտում,  
Տգեղը յետնից ոխ պահած սրտում.  
Հագիւ թէ ծովի ափին էր հասած,  
Իւր սիրուն քրոջ գլորեց նա ցած:

Կանչեց կիսամեռ սիրունը ջրից.  
— Քոյրիկ, իմ քոյրիկ, փրկէ ինձ մահից.  
«Ես ունիմ տանը գեղեցիկ մանեակ,  
«Ա՛ռ, է՛ն քեզ լինի, պարգևէ ինձ կեանք»:

— Է՛ն առանց քեզ էլ կարող եմ ստանալ.  
Ինձնից փրկութիւն դու բնաւ մի յուսալ:  
— Քոյրիկ, թէ այդ էլ քեզ չէ բաւական,  
Կըտամ քեզ ոսկի պսակ պատուական»:

— Էն առանց քեզ էլ կարող եմ ստանալ,  
ինձնից փրկութիւն դու բնաւ մի յուսալ »:

— Քոյրիկ, մի թողնիլ դու ինձ անտէրունջ,

Քեզ սիրուն փեսաս կըտամ անտրտունջ:

Տղեղի սիրտը դառել էր ժուռ քար,

Քրոջ խնդիրը թողեց անկատար:

Չկնորսը ծովը ձգեց մեծ ուռկան,  
Յունեց մարմինը սիրուն աղջկան.

Ջրիցը հանեց, դրից ափի մօտ,

Չատ ծաղիկ ցանեց վրան ու շատ խոտ:

Մի աշուղ անցաւ, տեսաւ աղջկան,

Լացեց ու առաւ, դրեց ուսի վրան,

Տարաւ իրա տուն այդ անգին զիւտը,

Չորացրեց նրա մարմնի ողջ հիւթը:

Գեղեցիկ տաւիղ շինեց ոսկրերից,

Քաղցրաձայն լարեր հիւսեց մաղբրից:

Երբ որ ամեն բան պատրաստեց կարգին,

Գնաց արքունիք տաւիղը ձեռքին:

Երբ մտաւ դահլիճ շքեղ զարդարած,

Տեսաւ տղեղին փեսի մօտ կանգնած.

Բացեց բերանը, լարերին խփեց,

Հիւրերի առջև քաղցրաձայն երգեց.

« Զնչէ, իմ տաւիղ, հնչէ համարձակ,

« Զարագատ քոյրս խլից իմ պսակ.

« Լսէ, իմ ծնող, լսէ, սիրական,

« Զարագատ քոյրս խլից իմ փեսան.

« Լսէ, ժողովուրդ, լսէ անխռով,

« Զարագատ քոյրս զլուրեց ինձ ծով »:

Միւս օրը դահլիճը խարոյկ շինեցին,

Մահապարտ քրոջ մէջը գլորեցին.

Հուրը պըլպըլաց, աղջիկը կանչեց,

« Իմ մեղաց համար Աստուած ինձ պատժեց »:

ԳՐԱԵՆՈՐ ՎԱՐՓՈՒԹԻՒՆՆԵՐ

52. Հետեւալ նախագասութիւններէց արտագրեցէք բոլոր ստորագեալները պարագայական բառերի հետ: Ստորագեալի և պարագայական բառերի մէջ հարցեր աւելացրէք:

Մանուկները սովորում են ուսումնարանում: Գարնանը տաք երկրներից երգող թռչունները վերադառնում են իրանց ընները: Գարնանից մինչեւ աշուն գիւղացիք դաշտային աշխատանքով են պարսպում: Աքաղաղները սուսուտներն ու երեկոյները քարճուճայն կանչում են:

Օրինակ. — Սովորում են (ո՞րտեղ) ուսումնարանում:

53. Գրեցէք ձեզանից հինգ ընդարձակ նախագասութիւն լրացուցիչ, որոշիչ, յատկացուցիչ և պարագայական բառերով:

54. Արտագրեցէք հետեւալ նախագասութիւնները և կօշտական բառերի տակ գիծ քաշեցէք:

Երթանք ծովի ափ, քոյրիկ, միասին: Քոյրիկ, մի թողնիլ դու ինձ անտէրունջ: Զնչէ, իմ տաւիղ, հնչէ համարձակ: Լսէ, իմ ծնող, լսէ, սիրական, հարագատ քոյրս խլից իմ փեսան: Լսէ, ժողովուրդ, լսէ անխռով, հարագատ քոյրս զլուրեց ինձ ծով:

## ՏԱՐՈՒԱՅ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

### 67. Չ Ի Ի Ն


—Ա՛խ, ինչո՞ւ, ինչո՞ւ կըզայ պաղ ձիւնը,  
Նորից ամիսներ պիտ' մնամ տանը,  
Տեսնելու չեմ ես կանաչ ծառ, արօտ,  
Հոտոտ ծաղիկին պիտ' մնամ կարօտ:

—Ձիւնը որ կըզայ երկնքէն ի վար,  
Իմացիք—մեծ բաղդ է մարդուս համար.  
Վերմակի պէս տաք կըծածկէ գետին,  
Որ բոյսի արմատն զիմանայ ցրտին:

Նա հողին կըտայ հիւթ, պարարտութիւն,  
Գաշտին ու արտին մեծ առատութիւն.  
Մի տրտնջալ, մարդ, զու բնութենէն.  
Թէ տաք և թէ ցուրտ մեզ միշտ օգուտ են:

### 68. Չ Մ Ե Ռ Ը

Չմեռը արեգակը երկար չի մնում երկնակամարի վրայ և շատ քիչ էլ տաքացնում է, այդ պատճառով ձմրան օրերը կարճ են լինում և ցուրտ: Մարդիկ վառում են վառարանները, որ իրանց բնակարանները տաքացնեն, իսկ տանից դուրս գալիս՝ տաք հա-



գուտներ են հագնում: Գետինը ծածկում է ձիւնով, իսկ գետերը, առուակներն ու լճերը—սառոյցով: Գետերի սառոյցը երբեմն այնքան հաստ է լինում, որ նրա վրայով անցուղարձ են անում մարդիկ և սահնակներ: Ծառերն ու թփերը մերկացած են լինում իրանց տերևներից, թռչուններից շատերը հեռանում, զնում են տաք երկիրներ, գազանները քաշում են իրանց բները, իսկ միջատների հոտը կտրում է բոլորովին:

69. Ձ-Մ-Ե Ռ

Ձմրան երկիւղից զետը քար կտրեց,  
Քրչքրչան առուն լռեց, պապանձուեց,  
Գալար բոյսերը սառան, փետացան,  
Նախշուն հաւերը թռան, հեռացան,  
Բայց էլի շատին իւր ճանկը գցեց,  
Բուք-բորան արաւ, բոլորին խեղդեց.  
Սիրուն վարդենու թուփը չորցրեց,  
Սոխակի լեզուն տակիցը կտրեց...  
Ջրադաց չկայ—ջուրը սառել է,  
Ճանապարհ չկայ—ձիւնը կապել է.  
Թէ մարդ, թէ տաւար միակերպ քաղցած՝  
Ողբում, լալիս են մահուան դուռն ընկած:

71. ԿԵՆԿԱՆԻՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԸ ՁՄԵՌ ԺԱՄԱՆԱԿ

Ձմեռը գալիս է թէ չէ, դաշտերն ու անտառները դատարկում, մերկ անապատի կերպարանք են ընդունում: Գեղեցիկ երգող թռչունները թողնում են իրանց բները և հեռանում դէպի տաք երկրներ, գրկելով մեզ իրանց քաղցը երգերից: Մեզ հետ ձմերուտ են մնում միայն ագռաւները, կաշաղակներն ու ճնճղուկները, բայց նրանք էլ մօտենում են մարդկանց բնակարաններին:  
Գազանները թէև չեն փախչում ձմեռուայ երեսից, սակայն նրանք քաշում-մտնում են իրանց որջերն ու բները: Արջը և

ողնին սաստիկ ցրտից թմրում, ննջում է մինչև գարնան սկիզբը: Խորամանկ աղուէսը և քաղցած գայլը դէսուղէն են ընկնում մի բան ճանկելու համար, իսկ մոխրագոյն նապաստակը ցատկոտելով է տաքանում:

Ընտանի կենդանիներն, իհարկէ, ցրտից և քաղցից կրկուտորուէին ձմեռը, եթէ մարդիկ նրանց համար տաք գոմեր և յարմար կերակուր չպատրաստէին, նրանց հոգսը չքաշէին:

ԳՐԵՒՈՐ ՎԱՐԹՈՒԹԻՒՆՆԵՐ

55. Գրեցէք հետևեալ գործողութիւն և դրութիւն ցոյց տուող բառերը (բայ):  
Խմել: Հագնել: Կանգնել: Գնալ: Մնալ: Նստել: Խաղալ: Կարդալ: Գրել: Նայել: Տեսնել: Ուշանալ: Շտապել: Բարձրանալ: Մօտենալ:

56. Արտագրեցէք «Կենդանիների բնակարանները ձմեռ ժամանակ» յօդուածից բոլոր բայերը:

Օրինակ.— Գալիս է: Դատարկում է:

57. Արտագրեցէք հետևեալ բայերն իրանց սկզբնական ձևով:  
Կարդացի—կարդալ: Մնում եմ—մնալ: Կածէ—.....: Քնեցի—...: Կանչեցին—.....: Պատրաստում ես—.....: Կըքաշեմ—.....: Ստիպում են—.....: Կերայ—.....: Կերակրեմ—.....: Ընկնում էր—.....: Թռչկոտեցին—.....: Լուսացաւ—.....: Օրհնեց—.....: Անցնում էր—.....: Կըլթմըրի—.....:

71. ԱՂՔԱՏՈՒԹԻՒՆ

Ձմեռը բոլորն էլ տաք և կուշտ չեն լինում: Գիւղերում և քաղաքներում շատ աղքատներ կան, որոնք ոչ տաք բնակարան ունին և ոչ էլ ուտելու չոր հացի կտոր: Յուրան ու քաղցածութիւնը ստիպում են աղքատին դուրս գալ տանից. թափառում է թշուառ ձերուներին փողոցից-փողոց, տանից-տուն՝ Քրիստոսի սիրուն մի կտոր հաց մուրալու: Խեղճը չունի տաք հագուստ,

նրա վերարկուն պատառոտուած է, տրէխները ծակծկուած:  
 Ցուրտն անխնայ անցնում է մինչև նրա ոսկորները, ձայնը դող-  
 դողում է, աչքերից արտասուքի կաթիլներ են գլորում, ձեռ-  
 ներն ու ոտները ցրտից սառել, փետացել են... Ողորմեցէք այդ  
 թշուառին: Թոյլ մի տաք, որ նա այդ ծեր հասակում մեռնի  
 սովատանջ մահով: Տաքացրէք, կերակրեցէք, սղորմութիւն տուէք  
 նրան և նա միշտ կօրհնէ ձեզ՝ ձեր բարերարութեան համար:

75. Թ Ռ 2 Ո Ի Ն

Մի ձմրան օր էր. փչում էր քամին,  
 Ձիւնի քուլէքը ամեն տեղ ծածկում.  
 Մարդ և անասուն ցրտի երեսից  
 Փախչում էր, մտնում, տան մէջը փակում:

Իմ պատուհանին, որ պինդ փակուած էր,  
 Յանկարծ մօտեցաւ մի փոքրիկ թռչուն.  
 Նա դողդողում էր, թևերը շարժում  
 Եւ իւր կտուցով խփում ապակուն:

Տեսնելով թռչնի այս դառն վիճակ,  
 Յուզուեց իմ սիրտը, զթացի վրան.  
 Չթողի երկար տանջուել այն ցրտում,  
 Իսկոյն սենեակս առայ ես նրան:

Գազարեց ձիւնը, հանդարտուեց քամին,  
 Իմ սիրուն թռչնակը նորից ոյժ առաւ.  
 Ուղղեց թևերը, սաւառնեց օդում  
 Եւ մի քաղցր երգ երգել սկսաւ:

Անուշ էր երգը, մեղմ ու զրաւիչ.  
 Նա շարժեց իմ սիրտ, ազդեց իմ հոգուն.  
 Բռնեցի նրան, զրի վանդակում,  
 Որ գոհ չգնայ կատաղի քամուն:

Բայց մի ժամ չանցած, նա տխուր-տրտում  
 Գլուխը կախեց, արձակեց մի ճիչ.

Մօտեցայ նրան, նա յետ-յետ քաշուեց,  
 Կասես՝ ես նրան լինէի դահիճ:

— Այո՛, դժուար է, — ասացի նրան, —  
 «Աննաման երգիչ, սիրելի թռչնակ,  
 «Ընկերից զատուած, քո բնից հեռու  
 «Վարել քեզ այսպէս բանդարկեալի կեանք:

«Ահա կրբանամ քո բանդի դուռը,  
 «Թռիլը դէպի դաշտ և կամ խոր անտառ,  
 «Գտիլը ընկերիդ, սիրէ քո բունը.  
 «Մահ ու գերութիւն մի է քեզ համար»:

73. ԳԱՐՆԱՆ ՍԿԶԲԻՆ

Հրաշալի եղանակ է այսօր: Գուրսը տաք է և պարզ. արե-  
 դակն ուբախ-գուարթ խաղում է հալած ձեան հետ, ջրի կաթիլ-  
 ները պսպղում են նրա ճառագայթների տակ. խոնաւ գետնի  
 երեսից գուրջի է բարձրանում: Փոքրիկ ճնճղուկները գժուածի  
 նման աղմկում են կտուրի վրայ... Ահա այնտեղ թռչկոտում է  
 նրանցից մէկը. նա աղաղակում է, — նրա ձայնի ամեն մի հնչիւ-  
 նը, նրա փոքրիկ մարմնի ամեն մի անդամն առողջութիւն և ոյժ  
 է արտաշնչում:

74. ՀՐԱԻԷՐ ԳԱՐՆԱՆ

Կարօտ ենք տեսիլդ, աննաման գարուն,  
 Ղուտ արի, մեզի բեր ծաղիկ սիրուն.  
 Բեր պայծառ արև, բեր մեզ տաք օրեր,  
 Ճրուվրուղ թռչուն, բեր կանաչ դաշտեր:

Բաց մեր դռները, բաց մեր պատուհան,  
 Թող բացուեն, ծաղկեն վարդ, մեխակ, շուշան,  
 Փակուած սենեակից ելնենք, ազատուենք,  
 Կանաչ դաշտ երթանք, խաղանք, զլորուենք:

ԳՐԱԴՐ ՎԱՐՓՈՒԹԻՒՆՆԵՐ

- 58. Արտագրեցէք «Գարուն» յօդուածից բոլոր բայերը:
- 59. Գրեցէք նոյն բառերը իրանց սկզբնական ձևով:
- 60. Արտագրեցէք հետեւեալ վարժութիւնը:

Ներկայ ժամանակ  
(Այժմ)

Եզ. թ. Նա կարդում եմ:           Յոգ. թ. Մենք կարդում ենք:  
Դու կարդում ես:                   Դուք կարդում էք:  
Նա կարդում է:                       Նրանք կարդում են:


61. Գրեցէք միևնոյն ձևով գրել, կանգնել և խօսել բայերը:

75. Գ Ա Ր Ն Ա Ն Ը

Մարտի իննին ցերեկն ու զիշերը իրար հաւասար են լինում, իսկ յետոյ հետզհետէ ցերեկն սկսում է երկարիլ, զիշերը կարճանալ: Չիւնն ու սառույցը հալում են արեգակի ներգործութիւնից. գետերը լցւում, բարձրանում են և, դուրս գալով օվկանոսից, չորս կողմը ջրով ծածկում են: Դաշտերում և մարգագետիններում, անտառներում և պարտէզներում կանաչ խոտն է սկսում դուրս գալ և գլուխ են բարձրացնում զարնան առաջին ծաղիկները— ձնծաղիկն ու մանուշակը: Թռչունները խումբ-խումբ վերադառնում են հեռու երկրներից, այստեղ-այնտեղ սկսում են երևալ և միջատները: Հովիւը իւր հօտը դուրս է տանում զէպի արօտ: Դարնան գալով՝ սկսում է և գիւղացու դաշտային աշխատանքը: Նա պէտք է արտերը վարէ, ցանէ, որ իւր դատարկուած ամբարներն աշնանը նորից լցնէ հացահատիկներով:


76. ՀԱՍՏՅԻ ԵՐԳԸ

Ահա ծագեց կարմիր արև,  
Տաք և պայծառ է օրը:  
Դէհ, քաշեցէք, սիրուն եղներ,  
Յառնջ տարէք արօրը:



Գ ա Ր Ն Ա Ն Ը

Վարը վարենք, աղօս֊փորենք,  
 Խոր աղօսներ հողի մէջ:  
 Սերմը ցանենք, որ հունձ հնձենք,  
 Ցորեն գիգենք կալի մէջ:  
 Կըզայ ձմեռ, — մենք վախ չունինք, —  
 Ուրախ կանցնի մեր օրը.  
 Ուտելու միշտ պաշար ունինք,  
 Լի և կուշտ է մեր փորը:  
 Դէհ, քաշեցէք, սիրուն եզներ,  
 Զուտով վարենք արտերը.  
 Թող չասեն մեր զրացիքը՝  
 «Ծոյլ են Հասօյի եզները»:



77. Ա Պ Ր Ի Լ

Մեր Ազամ նախահայրն իւր կեանքում առաջին անգամ տեսած ձմեռուայ ցրտիցն ազատուեց. գարունըուայ կարմրաշաղարկից նրա մրսած մարմինը տաքացաւ. նրա կեանքի անբաժան ընկերը, մեր Եւա տատը, մի փունջ ծաղիկ ձեռքին՝ ուրախ ուրախ տուն ընկաւ: Կարծես մի ծանր բեռ վեր ընկաւ Ազամի սրտից: Ծաղիկը ձեռքին առաւ, հոտ քաշեց, Աստծուն փառք տուեց ու ասաց. — «Թող այսօրուանից սկսած այս ամսի անունը Ապրիլ կոչուի. ես վախենում էի, թէ ձմեռը մի օր մեզ ցրտահար կանի, կըսառեցնի, կըմեռցնի. բայց հիմի հաւատում եմ, որ այսուհետև մենք ցրտից երկիւղ չունինք, կապրենք ու կեանք կըբաշենք»:

Ապրիլ, իրան որ ապրիլ: Ինչ դրութեան էին միքանի օր առաջ չքաւորները, ինչպէս են այսօր՝ Ապրիլ ամսին: Նրանք աշունքուան դառը քրտինքով ձեռք բերած ապրուստի պաշարը ձմեռուայ սկզբին կերել-վերջացրել էին:

Հայը թուրքին, թուրքը հային պատահելիս՝ յունուարին հարցնում էին՝ «ալիւր ունիս», փետրուարին հարցնում էին՝ «փայտ ունիս», մարտին էլ իրար սիրտ էին տալիս, որ քաջ լինին, միքանի օր էլ համբերեն:

Գնացին, կորան ձմեռուան ձիւնն ու սառոյցը, ցուրտն ու սառնամանիքը: Անց կացաւ զիժ մարտը, անց կացան բուքն ու քամիքը, եկաւ Ապրիլը, ապրեցրեց ամենքին:

Կատարեալ ապրելու ամիս է. դաշտը լիքն է տեսակ-տեսակ բանջարներով. փողով չէ, գնում են, քաղում, բերում, ուտում: Ոչխարը ծնել է. գառները դմակները խաղացնելով խոտերի մէջ թռչկոտում են. կաթը ջրից առատ է. ոչխարի մածունն աղքատից խնայել չկայ, հարուստն իւր չունեւոր հարեանին կաթնով, մածնով, նոր պանրով, կարագով լիացնում է:

Աշնանավար ցորենի արտը երկու թիղ բարձրացել, ցնծալով ցնծին է տալիս. նրա կողքին մարտ ամսումը վարած ու ցանած գարնանավար արտը նոր ծլել է, մտիկ տուողի հողին է փառաւորում: Ծառերն արդէն ծաղկել են, անուշահոտութիւն են բուրում: Ծառերի վրայ ծաղկից-ծաղիկ ոսկեգոյն մեղուններն են թռչկոտում. ամեն մի ծաղկի վրայ մի-մի աշխատասէր մեղրաճանձ է նստել. նա ծաղիկների քաղցը հիւթից մեզ համար մեղր է շինում: Զմեռուայ ցրտից փախած թռչուններն օտարութիւնից յետ են եկել: Դրանցից միքանիսը իրանց բնիքն են շինում, ոմանք ձու ածում, միքանիսն էլ ածել, պըծել, թուխս են նստել:

ԳՐԱԻՈՐ ՎԱՐՓՈՒԹԻՒՆՆԵՐ

62. Արտագրեցէք հետեւեալ վարժութիւնը:

Անցեալ ժամանակ

(Առաջ)

Եզ. թ. Ես կարդում էի:

Դու կարդում էիր:

Նա կարդում էր:

Յոգ. թ. Մենք կարդում էինք:

Դուք կարդում էիք:

Նրանք կարդում էինք:

Եզ. թ. Ես կարդացի:

Դու կարդացիր:

Նա կարդաց:

Յոգ. թ. Մենք կարդացինք:

Դուք կարդացիք:

Նրանք կարդացին:

63. Փոփոխեցէք միևնոյն ձևով մնալ, խնդալ և երևալ բայերը:

64. Գրեցէք հետեւեալ բայերը ներկայ ժամանակով:

Մըսել: Տեսնել: Բաղել:

78. Հ Ա Տ Ի Կ

Լոյսը բացում է. շուտ արտը գնամ,  
Պատուեմ սուր խոփով ես կուրծքը հողի.  
Ի՛մ սիրուն հատիկ, քեզ նրան պահ տամ,  
Մինչև օրերը ամբան արևի:

Թաղեմ քեզ, հատիկ, և դարդս քեզ հետ.  
Թէ Աստուած ուզեց, դու կանաչեցիր,  
Թող դարդս մեռնի գետնի տակ անհետ,  
Դու ինձ մխիթար կրկին տուն դարձիր:

Եւ ջերմ աղօթքով՝ Տիրամօր առջև  
Ես մոմ կը վառեմ, ես խունկ կը ծխեմ,  
Որ քեզ պարգևէ մի առատ անձրև,  
Որ քեզ միշտ սիրով նայէ խնդադէմ:

Բայց թէ այդ շնորհին մեղքերիս համար  
Արժանի չլինիմ, ծով կը դարձնեմ  
Ես տաք քրտինքը ճակտիս արևառ,  
Որ քեզ, իմ հատիկ, ծարաւ չթողնեմ:

Ծլիր, կանաչիր, ոսկէ սաւանով  
Ծածկիր իմ արտը ողջ ալէժածան.  
Նոր այն ժամանակ անուշ շշիւնով  
Տուր ջարդուած սրտիս մի քուն հանգստեան:

79. ՄԱՅԻՍՈՒԱՅ ԱՌԱԻՕՏԸ

Ի՛նչպէս թարմ և գեղեցիկ է մայիսուայ առաւօտը: Դաշտե-  
րը ծածկուած են կանաչ խոտերով ու ծաղիկներով: Գարձես  
բնութիւնն օրէցօր աւելի քաղցրանում է և գարնանային մէգի  
միջից ժպտում է ամառը:

Երբ ես գնում եմ անտառ, այնտեղ, թփերի ստուէրների  
տակ, ծաղկապատ հովիտներում, փռուած եմ տեսնում մայիս-  
ուայ որդին—սպիտակ և անուշահոտ շուշանը: Ամեն կողմ աչքիդ  
առաջ կանաչ գորգեր են փռուած, որոնց վրայ առաւօտեան  
ցօղը ցանել է իւր մարգարտեայ կաթիլները: Արևի առաջին ճա-  
ռագայթներն, ընկնելով ծառերի տերևներից և խոտերի թեր-  
թիկներից կախուած այդ կաթիլների վրայ, փայլեցնում են նրանց,  
ինչպէս աղամանդեայ ակներ: Թռչունները ծըլվըլում են չորս  
կողմդ. իսկ այնտեղ, վարդի կիսաբաց կոկոններով ծածկուած  
թփերի մէջ, լսում է սոխակի գմայլի ձայնը. նա երգում է,  
սպասելով վարդի սիրուն կոկոնների բացուելուն:

80. Ա Մ Ա Ռ

Ստեղծողն իւր առատ ձեռքը բաց արեց,  
Արտեր անտառներ հարստացրեց.  
Ծառեր ու թփեր զարդով ծածկուեցան,  
Ամենայն կողմում ծաղկունք փայլեցան:  
Ազատ շրջում են հօտերը դաշտում,  
Ազատ լողում են ձկները ծովում.  
Այգում պտուղները դեղնիլ սկսան,  
Արտերում հարուստ ցանքսերը հասան:  
Դաշտերում գերանդին սկսաւ փայլել  
Եւ անտառներում թռչուններն երգել:

«Ինչքան սիրուն է այս ստուերներում.  
 «Ե՛կ, հանգստացիր, մանկիկ, հովերում.  
 «Ականջ դիր, ինչպէս մենք երգ ենք երգում,  
 «Առատ ամառուան փառք վերընծայում»:  
 —Ո՛չ թէ ամառուան, ասաց, փառք առէք,  
 «Ով ամառ տուեց, նրան օրհնեցէք»:

81. Ա Մ Ա Ռ Ը

Ո՛րքան երկար են ամառուայ օրերը և ինչպէս սաստիկ է այրում արեգակը երկնքից: Տօթից և փոշուց քաղաքներում կեանքն անտանելի է, այդ պատճառով բնակիչներից շատերը թողնում, հեռանում են գիւղերն ու ամառանոցները՝ մաքուր օդ շնչելու համար: Ամառուայ այս շոգերի ժամանակ շատ անգամ երկինքը ծածկում է թուխ ամպերով, բարձրանում է սաստիկ քամի, փայլատակում է կայծակը, գոռգոռում են ամպերը և յորդ անձրև է սկսում տեղալ: Սովորաբար այսպիսի մրրկից յետոյ օդը թարմանում է, ամեն ինչ զուարթանում, ուրախ տեսք է ընդունում:

Ամառը պտուղները սկսում են հասունանալ: Անտառներում հասնում են հատապտուղները, իսկ դաշտերում հացաբոյսերն են դեղնում և հնձուղներին իրանց մօտ հրաւիրում: Գիւղացին եռանդով սկսում է հունձը:


Գ Ի Ը Ի ՈՐ Վ Ա Ր Թ ՈՒ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

66. Արտագրեցէք հետևեալ վարժութիւնը:

Ապառնի ժամանակ  
 (Յետոյ)

Եզ. թ. Ես կրկարդամ:	Յոգ. թ. Մենք կրկարդանք:
Դու կրկարդաս:	Դուք կրկարդաք:
Նա կրկարդայ:	Նրանք կրկարդան:

67. Փոփոխեցէք միևնոյն ձևով լողալ, հասնել և թռչել բայերը:



Ա մ ա ռ

Տ ա լ .

Ներկայ ժամանակ

Եզ. թ. Ես տալիս եմ :  
Դու ...  
Նա ...

Յոգ. թ. Մենք տալիս ենք :  
Դուք ....  
Նրանք ....

Անցեալ ժամանակ

Եզ. թ. Ես տալիս էի :  
Դու ....  
Նա ....

Եզ. թ. Ես տուեցի :  
Դու ....  
Նա ....

Յոգ. թ. Մենք տալիս էինք  
Դուք ....  
Նրանք ....

Յոգ. թ. Մենք տուեցինք :  
Դուք ....  
Նրանք ....

Ապառնի ժամանակ

Եզ. թ. Ես կըտամ :  
Դու ....  
Նա ....

Յոգ. թ. Մենք կըտանք :  
Դուք ....  
Նրանք ....

82. ԱՆՁՐԵՒԻ ԿԱԹԻԼ

Փայլուն կաթիլը գարնան անձրևի  
Մի օր հարց տուեց իւր ընկերներին.  
— Ինչո՞ւ մենք այս հին, ազրատ խրճիթի  
Լուսամուտն այսպէս բաղխում ենք ուժգին»:

Կաթիլներն իսկոյն տուին պատասխան.  
— Այստեղ երկրագործ մշակն է ապրում.  
«Քաղցր աւետիք տալիս ենք նրան,  
«Որ արտում ցորենն աճում է, ծաղկում»:

83. ԵՐԱՂՏ ԵՒ ԱՆՁՐԵՒ

Ամառը չորային էր: Արեգակն օրէցօր բարձրանում էր պարզ  
երկնքի վրայ: Փոշին ամպի պէս կանգնած էր ճանապարհներին:

Գետինը քարի նման պնդացել էր և սկսել էր ճաքճքոտել: Առունները  
ցամաքել էին, ծաղիկները տխրութեամբ կախել էին գլուխները,  
խոտը դեղնել էր, դեռահաս ցորենը թառամել էր: Երկրագործը  
վշտալի սրտով նայում էր իւր արտին և մտածում. «Աստուած  
իմ, ինչ որ ինձանից էր կախուած, արեցի, արտս խորը վարեցի,  
ընտիր սերմով սերմեցի և լաւ ցաքանեցի,— այժմ թող լինի քո  
սուրբ կամքը»:

Պայծառ երկնքի վրայ ամպեր երևացին. հետզհետէ նրանք  
թանձրացան և ծածկեցին երկնակամարը, իսկ երեկոյեան գովա-  
րար անձրևը ջրեց մարգագետիններն ու արտերը: Դաշտային թա-  
ռամած բոյսերը զուարթացան. նրանք անտեսանելի կերպով  
իրանց բարակ արմատների օգնութեամբ ծծեցին թաց հողի  
սննդարար հիւթը: Խոտը կանաչեց, ծաղիկները բարձրացրին  
իրանց գլխիկները, ծառերի փայլուն տերևներն ազահաբար ներս  
ծծեցին խոնաւ օդը: Ուրախ-զուարթ տատանուիլ սկսան վար-  
սակի, գարու և ցորենի արտերը և արագ-արագ լցրին իրանց  
քստալի հասկերի հատիկները:

84. Հ Ո Ւ Ն Ձ

Ահա բանուորներն շարէշար կանգնած,  
Գերանդին ձեռքին, գոգնոցը կապած,  
Մինչև գոտկատեղ բարձրացող արտում  
Ժպտան երեսին՝ ցորեն են հնձում:


Ընդարձակ դաշտը, որն ամիսուկէս  
Մեղմ քամու զիմաց, կապոյտ ծովի պէս,  
ձկուտ, թիքուտ էր ու հօրանց գնում,  
Նորից յետ դառնում, իւր տեղն էր բռնում,

Այժմ բաց-դեղին ոսկու գոյն առած,  
Տիրոջ օգնութեամբ հասկերը լցրած,  
Արևի զիմաց փայլում է, խաղում,  
Ամբողջ հովիտը հուր ու ծով շինում:

Կարծես հրեշտակը տիրոջ հրամանով  
 Ծիծաղ է սփռել իւր առատ ձեռքով.  
 Ուրախ ու քրքրիչ, խինդ ու բերկրութիւն  
 Դաշտը բռնած է կարծես օրնիրուն:

Անձ բանուորներն շարէշար կանգնած,  
 Գերանդին ձեռքին, գոգնոցը կապած,  
 Հնձում են քննորեն ու խուրձեր կապում,  
 Կապած խուրձերից տասնեակներ կազմում:

85. ՕՏԱՐԻ ՕԳՆՈՒԹԻՒՆԸ



Լորը բուն էր դրել գիւղացու ար-  
 տում և ձագեր հանել: Հնձի ժամա-  
 նակ էր: Մի օր արտատէրը իւր կնոջ  
 հետ եկաւ արտի գլխին կանգնեց և  
 ասաց. — «Արդէն ժամանակն է հնձե-  
 լու—հատիկները թափուում են. վա-  
 ղը ես կը լինդրեմ հարեաններիս, որ  
 գան, ինձ օգնեն»: Ճուտիկները լսե-  
 ցին այս խօսքերը և սաստիկ վա-  
 խեցան: «Հեռանանք այստեղից», —  
 ասացին նրանք իրանց մօրը: Բայց  
 մայրը սլառասխանեց. — մի վախե-

նաք, վտանգը դեռ այնքան էլ մօտ չէ»: Գիւղացին գնաց հարե-  
 ւաններին խնդրելու. նրանք լռոստացան առաւօտը գալ, բայց  
 խարեցին ու չեկան:

Միւս օրը երեկոյան գիւղացին դարձեալ եկաւ արտը և  
 ասաց. — «Վաղն իմ ազգականներին կը կանչեմ աշխատելու. նրանք  
 անշուշտ ինձ չեն խաբիլ և կը գան»: Ճուտիկները այս անգամ  
 աւելի ևս վախեցան: «Գնանք, գնանք շուտով», — կանչեցին միա-  
 բերան: Բայց փորձուած մարին ասաց նրանց. — «Մի վախենաք,  
 դեռ տեղափոխուելու ժամանակը չէ հասել»: Գիւղացու ազգա-  
 կաններն էլ չեկան նրան օգնելու: Վերջապէս գիւղացին ասում է

կնոջը. — «Ուրիշ ճար չկայ. մնում է, որ մենք ինքներս անենք մեր  
 գործը. Աստուծոյ օգնութեամբ մենք էլ կարող ենք հնձել մեր  
 արտը»: Լորն այս խօսքերը որ լսեց, իսկոյն ձայն տուեց իւր  
 ճուտերին. — «Ջաւակներս, այժմ անձ այստեղից հեռանալու ժա-  
 մանակն է. քանի դեռ գիւղացին իւր յոյսն օտարների վրայ էր  
 դրել, ես չէի վախենում. իսկ այժմ, երբ նա վճռել է անձամբ  
 կատարել իւր գործը, հաւանական է, որ շատ շուտով արտը  
 հնձուի»:

Այս ասաց ու ձագերին առաւ, արտից հեռացաւ:

ԳՐԱՒՈՐ ՎԵՐԹՈՒԹԻՒՆՆԵՐ

68. Լրացրէք հետեւալ վարժութիւնը:

Եզակի թ.	Յոգնակի թ.	Եզակի թ.	Յոգնակի թ.
Ասւս	Ասացէք	Բարձրացի՛ր	....
Կանգնի՛ր	Կանգնեցէ՛ք	Ապրի՛ր	....
....	Գնացէ՛ք	....	Հնձեցէ՛ք
Խօսի՛ր	....	Հեռացի՛ր	....
Կարդա՛	....	Գցի՛ր	....
....	Խօղացէ՛ք	....	Կտրեցէ՛ք

69. Արտագրեցէք հետեւալ նախադասութիւնները և թ ու ա կ ա ն անուն-  
 ների տակ գիծ քաշեցէք:

Գիւղացին երեք կով եւ եօթը եգն ունի: Տարին ունի տասներ-  
 կու ամիս, ամիսը չորս շաբաթ եւ շաբաթը եօթն օր: Առաջին  
 ամսի անունն է յունուար, երկրորդինը—փետրուար, երրորդինը—  
 մարտ, իսկ վերջինինը—դեկտեմբեր: Յուլիսը տարուայ եօթներորդ  
 ամիսն է: Հայրս չորս օր առաջ երեք փուլ ու կէս իւղ գնեց  
 մեզ համար:

70. Լուծեցէք հետեւալ նախադասութիւնները:

Երեկոյան զովարար անձրելը ջրեց մարգագետիններն ու  
 արտերը: Դաշտային թառամած բոյսերը զուարթացան: Նրանք

անտեսանելի կերպով իրանց բարակ արմատների օգնութեամբ  
ծծեցին թաց հողի սննդարար հիւթը:

71. Գրեցէք հինգ նախադասութիւն կոշական բառերով:

### 86. Ա Ղ Ո Ի Ն

Աշունը եկաւ, թափուեցաւ սաղարթ,  
էլ մի վնտրիւր դու մանուշակ ու վարդ.  
Բնութիւնը տխուր, պարտէզը տրտում,  
Չմեռուայ հոգսն է ամենի սրտում:


Երեխան փակուած մենակ սենեակում,  
Պատուհանից պարտէզ է նայում.  
Միտքը բերում է գարնան օրերը,  
Մարգերի վրայ գուարթ խաղերը:

Մի տրտմիւ, տղայ, թող անցնի մարտը,  
Նորից կըբացուեն նարգիզն ու վարդը.  
Նորից սոխակը պիտի գայ հանդէս,  
Նորից խաղալու դու կերթաս պարտէզ:

### 87. Ա Ղ Ն Ա Ն Ը

Ամառը վերջանալուն պէս՝ ծառերի կանաչ տերևներն սկսում  
են փոքր առ փոքր դեղնիլ, թառամել, գերանդին ու մանգաղը  
իրանց գործը վերջացնում են արտերում, սարերի և հովիտների  
կանաչ ծածկոցները չորանում են, ծառերի և թփերի հասած  
պտուղները բազում:

Աշնան նշաններն ամեն կողմից մարդու աչքին են ղիպչում,  
ահա այստեղ, հնձած արտերի տեղ, դեղին ծղօտներ են երևում  
միայն. այնտեղ, այգիներում, պտուղներից մերկացած ծառերն  
են ալբուրթեամբ շարժում իրանց գլուխները և պատրաստում  
ձմեռուայ քունը մտնելու: Կալերում արագ-արագ կալսում են  
հնձած հացաբոյսերը:



Ս. Շ. Ն. Ա.

Քանի գնում, օրերն զգալի կերպով կարճանում են, արեգակն արդէն կորցրել է իւր զօրութիւնը, երկինքն յաճախ ծածկում է մոխրագոյն ամպերով և բարակ անձրևը մաղում է վերևից: Չուող թռչունները շարան-շարան հեռանում են դէպի տաք երկրներ: Գպրոցներում, ամառուայ արձակուրդներից յետոյ, ուսումն է սկսում:

88. ԶՀՆՁԱԾ ԱՐՏ

Աշուն է խորին. ծիծառը թռաւ.  
Անտառն է դատարկ, դաշտը մերկացաւ.  
Միայն դաշտում անհունձ մնացած  
Տխուր ու տրտում մի արտ կայ կանգնած:

Կարծես հասկերը ասում են միմեանց.  
— Ի՞նչպէս մրսում ենք այս ցրտի տակ.  
«Ջատ տխրալի է գետնին խոնարհել  
«Եւ ատօր պտուղդ հոգում թաթախել»:

«Ամենայն գիշեր մեզ մօտ իջնում են  
«Անցնող թռչուններն ու մեզ ուտում են.  
«Գազաններն տրորում, քամին մեզ ծեծում.  
«Ո՛ւր է մեր տէրը, ո՛ւմ է սպասում»:

Քամին տալիս է նրանց վատ համբաւ.  
«Մահը ձեր տիրոջ երկրից վեր առաւ»:

ԳՐԱԴՐՈՒ ԳՐԹՈՒԹԻՒՆՆԵՐ

72. Արտագրեցէք հետեւալ նախադասութիւնները և դերանունների տակ դիժ բաշեցէք:

Ես այսօր իմ դասը լաւ եմ պատրաստել: Դու չարութիւն ես անում: Ես վեր առաւ իւր գիրքը եւ ինձ տուեց: Մենք այս ամառ ձեզ մօտ հիւր կը գանք: Դուք եղբայրներ էք: Երանք իրանց տանն են: Կովը, եզը եւ շունը վիճում էին միմեանց հետ, թէ նրանցից որին տէրն ատելի է սիրում:

73. Հետեւալ նախադասութիւնների մէջ գոյական անունների տեղ յարմար դերանուններ դրէք:

Հովիւը քշեց իւր նախիրը դէպի դաշտ. հովիւը մինչեւ երեկոյ նախիրն արածացնում էր դաշտում: Աղանին տեսաւ, որ դեղձանիկն ընկել էր թակարդը եւ աղանին սկսեց ծիծաղել դեղձանիկի վրայ: Արամն ու Գուրգէնն ընկերներից յետ են մնացել, որովհետեւ Արամն ու Գուրգէնը երկար ժամանակ հիւանդ են եղել:

74. Արտագրեցէք «Օ տ ա Ր ի օ գ ն ու թ ի լ ն ը» յօդուածից բոլոր դերանունները:

75. Լուծեցէք հետեւալ նախադասութիւնները:

Արեգակն արդէն կորցրել է իւր զօրութիւնը: Երկինքը յաճախ ծածկում է մոխրագոյն ամպերով: Բարակ անձրևը մաղում է երկնքից: Չուող թռչունները շարան-շարան հեռանում են մեզանից դէպի տաք երկրներ:



Նրա երեսն արևի նման լոյս էր տալիս, ձիւնի նման փայլում:  
 Նրա աչքերը արեգակի նման ճառագայթներ էին արձակում:  
 Նա կարծես հողեղէն չէր, այլ հրեղէն:  
 Նա, հէնց իմանաս, արեգակի ծնունդ լինէր, Արևի որդին:  
 Եւ հէնց անունն էլ Արևամանուկ էր:

Բ.

Ամեն առաւօտ, երբ արևի շողքն ընկնում էր Մասիսի վրայ՝  
 Արևամանուկը պէտք է վեր կացած լինէր, որ մայր արևի առաջին  
 ողջոյնը, առաջին բարի լոյսն ընդունէր:

Նա շատ էր սիրում ամպեղէն երևոյթների, ամպեղէն ձևերի  
 վրայ նայել:

Առաւօտեան արշալոյսը, թէ երեկոյեան վերջալոյսը—որ  
 կրակէ գոյնով նկարում են հորիզոնի վրայ կուտակուած ամպերը—  
 հազարաւոր պատկերներ են ցոյց տալիս նրան:

Ամպերի շարժումները, նրա ձևափոխութիւնները, գրաւում,  
 յափշտակում էին նրա ուշքն ու միտքը:

Առաւօտ էր լինում թէ երեկոյ, խաղաղ էր լինում երկինքը  
 թէ փոթորկալից, կուտակուած էին լինում ամպերը թէ ցրուած,  
 մի ուղղութեամբ էին շարժուում թէ զանազան,—նա այդ ամեն  
 ձևերին ու շարժումներին մի միտք, մի նշանակութիւն էր տա-  
 լիս, և ամեն ինչ, որ լսել էր հէքթաթներում՝ տեսնում էր  
 նրանց մէջ:

Այդ ամպերը շատ անգամ նրա աչքումը վիշապների կեր-  
 պարանք էին ստանում և մէկ մէկու կուլ տալիս: Երբեմն գա-  
 զաններ էին դառնում ու իրար հետ կուում:

Երբեմն դառնում էին ոչխարի հօտեր ու մի լեռնաչափ հո-  
 վիւ էլ, գերանաչափ մի սրինգ բերնին դրած ածում էր:

Երբեմն դառնում էին մեծ-մեծ վրաններ ու նրանց մէջ ներս  
 ու դուրս էին անում վիթխարի հսկաներ:

Երբեմն դառնում էին զօրախմբեր ու իրար դէմ պատերազ-  
 մում: Այդ լինում էր ակելի փոթորկի ժամանակ, երբ որոտում էր  
 երկինքը, փայլատակում կայծակն ու ամպերն իրար էին խփում:

### Ա Ր Ե Ի Ա Մ Ա Ն Ո Ի Կ

Ա.

Մի գեղեցիկ գարնանային առաւօտ էր:

Արևը նոր դուրս էր եկել ու իւր բարի-լոյսը տուել Մասիս  
 սարին: Մասիսի ձիւնապատ գագաթը սկսել էր այնպէս փայլել,  
 փայլիլ, այնպէս կանաչ-կարմրին տալ, որ տեսնողի խելքը  
 գնում էր: Մի ժամից յետոյ սարի գանազան մասերից քուլայ-  
 քուլայ ամպեր բարձրացան և աջ ու ձախ, վեր ու վայր շարժ-  
 ուելով, մեծանալով ու փոքրանալով, փռուելով ու խմբուելով՝  
 գանազան ձևեր ստացան:

Այս հիանալի պատկերներն ամենայն առաւօտ նկարում էին  
 Մասիսի վրայ, բայց ոչ ոքի ուշադրութիւնը չէին գրաւում:

Ոչ ոք ժամանակ չունէր նայելու, ոչ ոք ճաշակ չունէր հիա-  
 նալու: Դա մի սովորական երևոյթ էր, որ շողշողալով՝ ամենքին  
 իմաց էր տալիս, որ վեր կենան, իրանց դործին կենան, իրանց  
 բանին զնան:

Այգեպանն շտապում էր, որ շուտով այգին գնայ ու անցած  
 օրուայ կիսատ թողածն աւարտէ. տաւարածը տաւարն էր արօտ  
 տանում, աղջկերքն ու հարսները դէպի աղբիւր էին վազում,  
 պառաւները կերակուրի պատրաստութիւն էին տեսնում:

Բայց այս անգամ մէկը կար, որ Մասիսին էր նայում, նրա  
 փայլուն տեսքից հիանում ու զուարճանում:

Այդ մի մանուկ էր:

Մի առոյգ գուարթ ու սիրուն մանուկ:

Մի ոսկեթել մագերով, նախշուն աչքերով մանուկ:

Արևամանուկը ոչ միայն չէր վախենում այդ որոտմունքից, այլ բարձրանում էր մի քարի վրայ ու ամպերին հրամաններ էր տալիս, գոչելով՝ «առանջ, յետ, անջ, ձախ, միասին, կարգով, արանգ»...

Այսպէս բղաւում էր հեռուից, մինչև կարկուտը կամ տարափը վրայ էր տալիս ու մեր մանուկ զօրապետին փախցնում, ձգում քարայրերի ու ծառախոռոչների մէջ:

Ինչպէս տեսնում էք՝ մեր Արևամանուկը թէպէտ դեռ փոքր էր, — հազիւ տասը կամ տասներկու տարեկան կըլինէր, — բայց շատ սրտոտ էր ու սրամիտ:

Երևում էր, որ ժամանակով մեծ ու երևելի մարդ պէտք է դառնար: Այդպէս էին ասում բազմ գուշակողները, այդպէս հաւատացած էին ամենքը:

Բայց նա այժմ դեռ մի գառնարած էր:

9.

Այն, ինչ որ ասում եմ՝ ո՞վ է իմանում, թէ մեզանից քանի քանի տարի առաջ է եղել: Եթէ ասեմ հազար տարի, երկու հազար տարի, երեք հազար տարի՝ էլի քիչ կըլինի:

Այդ հին ժամանակներում Մասիսի ու Արագածի արանքումը, ուր որ հիմա Արարատեան մեծ դաշտն է, ուր որ մեր սուրբ էջմիածինն է, Երևան քաղաքն է, Երասխ գետն է, Գեղամայ ծովն է՝ ահա այդ գաւառում մի մեծ գիւղ է լինում, Արևան թէ Արմաւան անունով, հաստատը չգիտեմ և յատուկ տեղն էլ չեմ կարող ձեզ ասել:

Արմաւանի օղն ու ջուրը շատ մաքուր էր ու առօջարար: Նրա աղբիւրը քառասուն ակն ունէր, քառասուն տեղից բղխում էր ու յետ միանում, դառնում մի այնպիսի գետ, որ եօթը ջրազաց էր պտըտեցնում: Բացի դրանից՝ գիւղի հանգերն էլ լիքն էին անմահական աղբիւրներով: Այս աղբիւրներն ամենքն էլ մի մի անուն ունէին, իրանց յատկութեան յարմար տրուած. որին ասում էին «կաթնաղբիւր», որին «սառնաղբիւր», որին «տղաբերուկ», որին «պարկակերի», որին «գառնակերի» և ուրիշ անուններ:

Հաւ աղբիւրը շատ սիրելի բան է: Նա իւր խմողի երեսին խնդում, ծիծաղում է, ականջին քշփչում, թաքուն բաներ ասում, մօտը պառկողի միտքն օրօրում է ու վրան անուշ քուն բերում: Երանի, հազար երանի այն մարդուն, որ իւր մանկութեան ժամանակ այդպիսի տեղերում է անցկացրել իւր կեանքը, անմահական աղբիւրների ու ծաղկունքների ծոցում է մեծացել...

Արմաւանի հայերը, թէ մարդիկ և թէ կանայք, բոլորն էլ դեղեցկադէմ, վայելչակազմ, ուժեղ ու բարձրահասակ էին: Գլխացաւ, փորացաւ, սրտացաւ, բկացաւ, ծաղիկ, կարմրուկ և ուրիշ բոլոր մեր տեսած ցաւերի անունը նրանք չէին լսած: Մարդիկ հիւանդ էին լինում միայն այն ժամանակ, երբ վիրաւորուած էին լինում գազանից կամ թշնամուց և կամ ծառից վայր ընկած: Նրանց կեանքը շատ երկար էր, շատ էին ապրում: Չատ քիչ ապրողը՝ հարիւր տարի էր ապրում, բայց սովորաբար երկու և երեք հարիւր տարի էին ապրում ու միքանի անգամ ատամները փոխում, նոր ոյժ ստանում:

Ծերացած հայրը ունենում էր քսան, երեսուն գաւակ, երեք չորս այգչափ էլ թոռներ, մի այդքան էլ ծոռներ: Մի գերդաստանի ընտանիքի մէջ մինչև երեք-չորս հարիւր հոգի էին լինում, բոլորն էլ իրար հնազանդ — ամենափոքրը՝ իրանց մեծին, և ամենքն ի միասին մեծ հօրը:

Մեծ հայրը միւս բոլոր հայրերի գլխաւորն էր, գլուխն էր, և այդ պատճառով ասում էր հայրապետ, այսինքն հայրերի գլուխ կամ նահապետ, որ միևնոյն նշանակութիւնն ունի:

Գերդաստանի բոլոր անդամները մի յարկի, մի ծածկարանի տակ չէին մտում այլ ջոկ-ջոկ յարկերի ու ծածկոցների: Ամեն անգամ, երբոր մէկին պսակում էին՝ նրա համար առաջուց մի վրան էին գործում բրդէ կամ մազէ թելից: Այսպիսով տարէց-տարի շատանում էր վրանների թիւը: Վրաններն այն յարմարութիւններն ունէին, որ շարժական էին, և ուր ուզում էին՝ տանում էին, ամառը՝ աւելի բարձր ու լեռնային տեղեր, ձմեռը՝ ցածր ու դաշտային: Քարաշէն տներ էլ ունէին, բայց հասարակ Դրանք մի տեսակ ձմերանոցներ էին, աւելի անասունների հա-

մար, քանթէ մարդկանց: Միայն մեծ նահապետն էր ունենում լաւ քարաշէն տուն:

Մեծ նահապետը որ վախճանում էր՝ նրա մեծ որդիքը հեռանում էին միմեանցից և դառնում էին ջոկ-ջոկ նահապետներ: Նրանք երկիրն էլ էին բաժանում իրանց մէջ և ամեն մէկը մի ջոկ գաւառում էր բնակւում:

Իմ ասած ժամանակը նահապետներ շատ կային, բայց ամբողջ Արարատեան դաշտը, Երասխի ափերը, Արագածի արևմտեան և Մասիսի հիւսիսային երեսները, Գեղամայ ծովի արևմտեան ափերը, Գառնու և Հրազդան գետերի հովիտներն իրանց շրջակայ լեռներով մի նահապետի ձեռքին էին և այդ նահապետն էր մեր Արևամանուկի հայրը:

Արևամանուկի հօր անունն էր Արևամանեակ, բայց նրա որդին ու թոռները դժուարանում էին ասել «Հայր-Արևամանեակ», որովհետև շատ երկար էր, այդ պատճառով ասում էին «Հայր Մանեակ», կամ նրա մօրն էլ փոխանակ ասելու «Մայր Արևամատ»՝ ասում էին «Մայր-մա» կամ «Մարմար»: Նոյն իսկ Արևամանուկին չէին ասում Արևամանուկ, այլ «Արմիկ» կամ «Արամիկ»:

Բայց թէ ինչու ամենի անունի մէջ էլ «արև» կայ՝ այդ ես չգիտեմ. միայն շատերն ասում են՝ այդ նրանից է, որ մենք, հայերս, մի ժամանակ արևապաշտ ենք հղել, մեր նահապետն էլ համարում է եղել արևի փոխանորդ, նրա ազգական, ցեղ, ծնունդ. ահա այդ պատճառով նրանց մեծ մասի անունն էլ արևով էր սկսւում: Բայց այս տեսակ մութ բաները մենք յետոյ կիմանանք. հիմա մենք դառնանք մեր Արևամանուկին:

7.

Ահա այսպէս մեր սիրելի Արևամանուկը Արևամանեակ նահապետի որդին էր:

Գեռ եօթը տարեկան հասակում նրա թիկունքն ու կուրծքն այնքան լայն էին ու մէջքն այնքան բարակ, որից երևում էր, որ նա մի փոքր առիւծ էր, որի նմանին մեր հէքիաթնիւրում ասում են ասլան բալասի, այսինքն՝ «առիւծի ձագ»,

կորիւն առիւծի: Նրա աչքերը խոշոր-խոշոր և կրակոտ էին, երկայն թերթեւունքները մինչև վարի կոպերն էին հասնում, գլխի մագերը խիտ էին ու երկայն:

Հին ժամանակները մազ ածելելու սովորութիւն չունէին, բայց խուզում էին ուսերի հաւասարութեամբ, սանտրում էին դէպի յետ ու կապում վարսակալով, այսինքն մի մազակապ ժապաւէնով: Արևամանուկի մազերի գոյնը հրաշէկ էր, այսինքն կրակի գոյն ունէր և փայլում էր ջուհարի նման. նա համարում էր «հրահեր» այսինքն կրակէ մազեր ունեցող: Այդ տեսակ մազեր ունեցողին մեր հէքիաթներում ասում են ոսկէքանքուլ: Արևամանուկի մազերը չէին խուզում: Այս տեսակ մազեր ում վրայ էլ լինում էր՝ չէին կտրում: Նա իւր մազերը երկու հիւս էր անում և աջ բաժինը դէպի ձախ, ձախինը դէպի աջ տանում, բերվը երկու անգամ պատ տալիս, վզին կապում ու ծայրերը կախ գցում մէջքին: Նրա համար էր այսպէս անում, որ խաղալիս ու վազվզելիս մազերն իրան չխանգարեն:

Երբոր Արևամանուկը ծնւում է՝ նրանից յետոյ նրա մայրը երկար ժամանակ երեխայ չէ բերում, այդ պատճառով նրան եօթը տարի շարունակ ծիծ է տալիս և ծծից չէ կտրում: Ամբողջ օրը խաղում էր Արևամանուկը, բայց հէնց որ ճաշելու ժամանակը գալիս էր՝ նա առաջ մի նախաճաշիկ էր անում մօր ծծովն ու յետոյ ճաշն ուտում. մէկ էլ ճաշելուց յետոյ էր վրայ ընկնում մօր ծծին ու բերանը քաղցրացնում. զիշերն էլ մօր ծոցումն էր քնում և ամեն զարթնելիս ծիծը բերանն էր առնում:

— Բաւական է, որդի, էլ ինչ կայ, որ ինչ ծծես, ծծերս ցամաքել են, — ասում էր շատ անգամ մայրը, բայց էլի ծիծը գնում էր բերանը և գլուխը շփելով քնացնում:

Արևամանուկը սիրում էր և կովի ծիծը ծծել:

Չատ անգամ, երբ հարսները կովերը կթելիս էին լինում, նա անցնում էր միւս կողմը և կովի ծծերից մէկը բերանն առնում, ծծում: Հարսները քթին խփում էին, որ յետ քաշուի, բայց նա էլ ջիգրու արձակում էր հօրթի կոպը, խփում էր կովին ու այսպիսով ինքը յաղթում էր հարսներին և ուզածի չափ ծծում:

Պատահում էր, մինչև կովի կթելը՝ ինքն արդէն ցամաքեցրած էր լինում ծծերը և խեղճ հորթին էլ չէր լինում բաժին թողած։ Կերակուրներից նա ամենից շատ սիրում էր իւղն ու մեղրը։ Իւղը նա կաթի պէս էր խմում, իսկ մեղրաբլիթը գաթի պէս ձեռքն էր առնում, կծոտում։

Էլ ինչ ասել կուզէ ուրեմն, ով որ տարով կըմեծանայ՝ մեր Արեամանուկը օրով էր մեծանում ու գօրանում։ Գեռ տասը տարեկան հագիւ կըլինէր, այնպէս էր աճել, զարգացել, որ տեսնողը կարծում էր, թէ առնուազն տասնեհինգ կամ տասնեվեց տարեկան կըլինի. բայց երբ դառաւ տասնեհինգ տարեկան՝ արդէն մի կատարեալ շինարի ծառ էր և էլ իւր հասակին վայել չէր համարում իւր տարիքն ունեցող մանուկների հետ խաղալ, այլ քսան-երեսուն տարեկանների հետ էր խաղում, նրանց հետ կպչում, նրանց հետ մրցում և ամեն տեսակ մարզմունքների մէջ յաղթում էր ամենքին։

Միշտ յաղթելը և ոչ մի անգամ չյաղթուելը մեր Արեամանուկի համար դառաւ մի այնպիսի յատկութիւն, որ յաղթուելն ու մեռնելը—նրա համար միևնոյնն էր։ Այդ բանը նկատել էին նրա խաղընկերները, և երբ պատահում էր իրանից աւելի ուժեղներին՝ նրանք խնայում էին Արեամանուկին և չէին ուզում յաղթել, որ նրա սիրտը չկոտրուի։ Այս տեսակ վեհանձնական սովորութիւն ունէին Արմաւանցիք. նրանք նշանաւոր քաջին և ուժեղին միշտ խնայում էին. նրան սիրում, պաշտում էին և իրանց պարծանքն էին համարում։

Ե.

Արեամանուկն արդէն դառել էր տասնեհինգ տարեկան, բայց իւր ծնողների հսկողութիւնիցը դեռ չէր ազատուել։ Նրա ընկերներիցը որը տաւարած էր, որը հովիւ, որը եզնարած էր, որը հօտաղ, բայց նրան գառներն էին միայն պահ տալիս, այն էլ միայն գարունքը, իսկ մնացած ժամանակ տանիցը չէին դուրս թողնում։ Չէին դուրս թողնում, որովհետև գիտէին, որ նա ոչ մի տեղ հանգիստ չի մնալ, իւր ուժը կըփորձէ ամեն բանի վրայ ու փորձանքի մէջ կընկնի։

Բայց որքան շատ էին զսպում նրան ու հսկում վրան՝ նա այնքան աւելի էր ցանկանում վագել, ընկնել անտառները, ձորերը, բան տեսնել, բան շինել, իւր պարսատիկն ու նետաղեղը փորձել։

—Մայրիկ, ինձ ուղարկեցէք տաւար,—աղաչեց նա մի անգամ իւր մօրը։—Ես աւելի լաւ տեղեր կըտանեմ արածացնելու, կովերն էլ աւելի կաթ կըտան և շուտ չեն ցամաքիլ։

—Ի՞նչ հարկաւոր է, որդի.—պատասխանում է մայրը։—Մենք այնքան տաւար չունինք, որքան պահողներ ունինք. նրանք էլ գիտեն, թէ որտեղ պէտք է արածացնեն։

—Բայց ես, մայրիկ, մինչև երբ պէտք է տանը պարապ մնամ ու երեխանց հետ խաղամ։ Աղջիկ էլ չեմ, որ բուրդ գզեմ, գուլպայ գործեմ, իլիկ մանեմ։ Չէ որ ես տղայ եմ։ Իմ ընկեր տղայքը բոլորն էլ տաւար են գնում. ես ինչո՞ւ չգնամ։

—Տաւարածութիւնը հեշտ բան չէ. հոգիս։ Տաւարը շատ հեռու տեղեր են տանում։ Գող է, գազան է, ամեն ինչ պատահում է տաւարածներին։

—Ես էլ հէնց դրա համար եմ ուզում տաւար գնամ, որ մի քիչ հեռու տեղեր տեսնեմ։ Ինձ ինչ պիտի անեն գողերն ու գազանները։ Բա մեր շները ինչա՞ցու են։ Մեր Կտրանն ու Խեղդանը որ մօտս լինին, էլ ինչ գող, ինչ գազան կըմօտենայ մեր տաւարին։ Չէ, մայրիկ, ես պիտի գնամ տաւար։ Բայց եթէ չթողնէք՝ ես կըփախչեմ, կընկնեմ Մասիսի ձորերը, կերթամ քաջերին կը գտնեմ, կասեմ. «Եկել եմ ձեզ մօտ, որ ինձ սովորեցնէք լաւ ձի հեծնել, նետ ձգել, թուր ու նիզակ գործածել»։

—Արմիկ, Մասիսի քաջերը սուր ու թուր չունին, ոչ ձի հեծնել գիտեն, ոչ նետ ձգել։

—Բա էլ ինչի՞ քաջերն են, մայրիկ։

—Չէնց նրա համար չունին, որ շատ քաջ են։ Նրանք այնքան քաջ են, որ կարիք չունին զէնք ու զրահի։ Այնքան ուժով են, որ անաղին կաղնի ծառը արմատահան կանեն, և այդ կըլինի նրա՛յց համար՝ ինչպէս մի թեթեւ մահակ, բայց այդ մահակով նրանք հազար ձիաւորի պատասխան կըտան։ Նրանք ինչ կանեն

նետաղեղը, քանի որ Մասիսի ստորոտից բլրաչափ ժայռերն այնպէս են շարժուում, որ սարի զլխովն անց են կացնում, միւս կողմը գցում:

—Այդ ինչքան ուժով են, մայրիկ. ո՞վ գիտէ, իրանք էլ ինչ ահագին հսկաներ են:

—Իհարկէ, այնքան մեծ-մեծ են, որ նրանց տակին ոչ թէ ձի, այլ ոչ ուղտ և ոչ փիղ կրկարենայ զիմանալ: Ամեն մինը մի սարի չափ կայ: Երբ նրանք դուրս են գալիս իրանց խոր ու մուտք այրերից ու որսի յետևից ընկնում, Մասիսի ձորերը զըմ-զըմբում են ու դաշտերը զողզողում: Երբ որ նրանք կրակ են անում, որ ճաշ եփեն, ո՞վ գիտէ, քանի-քանի գերաններ են դարսում իրար վրայ: Նրանց խարոյկի ծուխն ու ալիքը Մասիսի գա-գաթիցն է դուրս գալիս ու վրան ամպ անում:

—Եթէ այդպէս է, մայրիկ, նրանց մօտ գնալ չի լինի, նրանք, ո՞վ գիտէ, մարդ էլ են ուտում:

—2է, հոգիս, նրանք մարդակեր չեն: Իմ պապը մէկ անգամ գնացել է նրանց մօտ: Ես այն ժամանակ շատ փօքը եմ եղել, ինձ յետքյ են պատմել: Ասում են. «Դու ո՞վ ես». նա էլ ասել է «Ես Արևազանց ցեղիցն եմ»: Այդ որ լսել են, ասել են. «Որովհետև դու Արևազանց ցեղիցն ես՝ քեզ վնաս չենք տալ. բայց եթէ Վի-շապագանց ցեղիցը լինէիր՝ մեծ կտորդ ականջդ կըթողնէինք»:

—Ուրեմն նրանք մեր ցեղին սիրում են, մայրիկ, իսկ Վի-շապագանց ցեղին ատում:

—Այո, մեր ու դրանց մէջ կարծեմ մի տեսակ ազգականու-թիւն կայ: Այժմեան քաջերի մայրը մեր ցեղիցն է եղել:

—Որ այդպէս է՝ ես կերթամ նրանց մօտ, կասեմ. «Ես ձեր պապոնց երեխան եմ». նրանք էլ ինձ լաւ պատիւ կըտան:

—Դու այդպէս ես կարծում, բայց ո՞վ գիտէ, վայ թէ քեզ այնտեղ պահեն ու էլ բաց չթողնեն: Կըզցեն մի խոր ու մուտք այրի մէջ, մի ահագին ժայռով էլ բերանը կըփակեն, յետոյ զնա կաց այնտեղ ու սպասիր, թէ երբ պէտք է ազատեն:

—Դէ որ այդպէս է՝ ես էլ չեմ գնայ նրանց մօտ, բայց տա-ւար պիտի գնամ, ինչ կուզէք, արէք:

—Իհարկէ, որդի, էլի լաւ է տաւար գնաս, քանթէ քաջերի մօտ: Բայց գիտես, սիրելի Արմիկ, քո հայրը քեզ ուրիշ տեսակ է ուզում պահել: Նա ուզում է, որ դու տունը պահել, տունը կառավարել սովորես, գնացող եկողի հանդիպես, նրանցից խելք ու շնորհք վերցնես, մարդավարութիւն սովորես, և ոչ թէ ընկ-նես սարերն ու վայրենանաս: Ահա պատճառը, որ հայրդ քեզ տաւար չէ ուղարկում: Բայց նա դէմ չի լինի, որ դու լաւ գիտենաս ձի նստել, նետ ձգել, նիզակ ու վահան գործածել, շասկացանք, բայց որովհետև սիրտդ շատ է ուզում տաւար գնալ՝ վնաս չունի, միքանի ժամանակ էլ տաւար գնա: Այդ քո առա-ջին փափագն է, թող կատարուի. թող կողքդ ու մէջքդ մի քիչ էլ տաւարումը հաստանան:

2.

Արմաւանի երեխայրը շատ ուշ էին սկսում տնային հոգսերին մասնակցել: Մանուկները դառնում էին տասնեհինգ-քսան տա-րեկան, բայց դեռ էլի համարում էին տղայ, այսինքն երեխայ: Մինչև տասնեչորս-տասնեհինգ տարեկան դառնալը ոչ մի պա-րապմունք չէին ունենում, բացի ուտելուց ու խաղալուց:

Նրանց սկզբնական ուսումն ու կրթութիւնն էլ խաղն էր: Եւ պէտք է ասենք, որ պակաս ուսում չէր, և շատ էլ լաւ էր: Լաւ էր նրանով, որ մեզ նման վաղօրօք չորս պատի մէջ չէին փակում ու կորցնում իրանց առողջութիւնը, մէկ էլ նրանով որ նրանց խաղերն անմիտ ու անօգուտ խաղեր չէին: Նրանք իրանց խաղերով աւելի լաւ էին պատրաստում իրանց ապագայ գործունէութեան, ապագայ պարապմունքների համար, քանթէ հիմա մենք:

Նրանց հարկաւոր էր շինել ուժեղ, ճարպիկ, սրամիտ, հնա-րագէտ, առաքինի. պէտք է իմանային լաւ ձի հեծնել, լաւ վա-զել, լաւ լողալ, ծառերի վրայ մագլցել, պառակները և ժայռերի վրայ բարձրանալ, մեծ ոստիւններով ցատկել, սուր ու նիզակ գործ ածել, վահանով պաշտպանուել, ուղիղ պարսատիկ ու նետ ձգել. պէտք է իմանային անասնապահութիւն, վար ու ցանք,

փայտաշուծիւն, քարաշուծիւն, դարբնութիւն... և այս բոլորը այն ժամանակուայ երեխայքը սովորում էին խաղալով:

Մեծերը նրանց չէին ասում, թէ այս արէք և այն շինեցէք, այս խաղացէք և այն մի խաղաք: Երեխայքն իրանց կամքովն էին անում՝ ինչ որ անում էին:

Փոքրերը՝ փոքրն ու հեշտը, մեծերը՝ մեծն ու դժուարը, և այնքան սիրով և ուրախութեամբ, այնքան ոգևորուած, որ շատ անգամ հացն էլ էին մոռանում:

Նրանց գիշերուայ խաղերն ուրիշ էին, ցերեկուանը ուրիշ, ամառուանը ուրիշ, ձմեռուանը ուրիշ. ուրիշ էր տղերանց խաղը, ուրիշ էր աղջկերանցը: Ամեն տեղի, ամեն դէպքի, ամեն ժամանակի յարմար խաղեր ունէին:

Խաղում էին ամենախիստ կարգապահութեամբ:

Եթէ խաղացողները լինում էին մինչև հարիւր հոգի, էլի այնպէս կարգով էին խաղում, որ ոչ մի անկարգութիւն չէր պատահում, և եթէ պատահում էլ էր երբեմն՝ մեղաւոր երեխային իսկոյն հեռացնում էին իրանցից, որ մեծ պատիժ էր համարում:

Խաղերի մեծ մասը երկու խմբով էին խաղում: Առաջ երկուսին մայր էին նստեցնում, միւսները ձագեր էին դառնում: Ձագերը զոյգ էին դառնում և վիճակով ընկնում մէկը մէկ և միւսը միւս մօրը: Այսպիսով բոլոր խաղացողները դառնում էին երկու խումբ, ամեն մէկը իւր մօր հովանաւորութեան և պաշտպանութեան տակ: Մայրը իւր ձագերից ամեն մէկի պաշտօնն իրան հասկացնում էր, և նրանք պիտի կատարէին իրանց մօր պատուէրը ամենայն ճշտութեամբ և ճարպիկութեամբ: Այս խաղերի մէջ շատ լաւ սովորում էին պաշտպանուելու և յարձակուելու կերպերը. սովորում էին շարքով կանգնել, շրջան կադմել, խմբուել, ցրուել, մէջք մէջքի տալ, վայր թափուել, չորեքթաթ վազել, փորսոզ տալ, մի ոտքով վազել, ծեծի դիմանալ, հակառակ խմբի բոլոր շարժումները դիտել, նրա մտադրութիւնը գուշակել:

Այս խաղերի մասին էլ չեմ ուզում երկարացնել խօսքս: Դուք ինքներդ, եթէ գիւզի երեխայք էք, կարող էք ասել, թէ ինչ

տեսակ խաղեր գիտէք. միայն պէտք է գիտենաք, որ իմ ասած հին խաղերի կէսի կէսն էլ չկայ հիմա, և ինչ էլ որ կայ՝ այն ժամանակուայ եղածի ստուէրն է և ոչ իսկականը: Բայց ինչ որ լինեն՝ դրանք էլ են հարկաւոր և շատ բաւական են մեզ:

Մեր Արևամանուկը խաղալ շատ էր սիրում: Պառաւններն ասում էին, որ նա մօր արգանդումն էլ խաղալիս է եղել, և սուտ չէին ասում: Բոլոր խաղերի մէջ նա այնպէս շուտ ճարպիկացաւ, որ էլ ձագ չէր դառնում, այլ իրանից մեծերի վրայ էր մայր նստում, և ամեն երեխայ աշխատում էր, որ իրան վիճակուի, իրան ընկնի նրա ձագը դառնալ, նրա գօրեղ պաշտպանութեան տակը գտնուել:

է.

Ահա այս աստիճան գօրացած էր մեր Արևամանուկը՝ երբ որ սկսեց տաւար գնալ: Տաւարումն էլ երկու թէ երեք օր միայն փոքրութիւն արաւ. շուտով տաւարածապետ դառաւ, այսինքն տաւարածների գլխաւոր: Տաւարածապետ լինելը հեշտ բան չէ՝ նա պէտք է ամենիցը գօրեղը լինի և ամենից ճարպիկն ու սրտոտը:

Ճշմարիտ է, նրա գօրծը հեշտ է նրանով, որ պիտի նստէր սառն աղբիւրների մօտ, հով ու գով տեղերումը, միւսներին հրամայէր, որ տաւարը մակաղից դուրս անեն, գոմէշները ցելերից այս կողմը քշեն, այն կողմը տանեն, յետ տան, ժողովեն, ականեն, բայց և դժուար է նրանով, որ եթէ տաւարներից մինը կորչէր՝ նա պիտի ման գար, գտնէր, գող ու գազանի ճանկերից փրկէր: Իսկ գազաններ այդ ժամանակ շատ ու շատ կային. հիմա այնքան գայլ ու աղուէս չկայ, ինչքան որ այն ժամանակ քաւթառներ ու փալանգներ (վագրեր) կային: Արևամանուկը միքանի շաբաթ շարունակ շատ լաւ պահեց տաւարը, այնպէս որ ոչ մէկի քիթը չարնեց, բայց ասած է՝ «տատն ամեն օր գաթա չի թխի»:

Մէկ անգամ մի եզր կորցրեց. շատ ման եկաւ, վերջը մի գոռոցի ձայն հասաւ ականջը: Մինչև ինքը ականջ կըղնէր, որ տեսնէր՝ որտեղից է գալիս ձայնը՝ իւր քաջ շները, Խեղդանն ու

Գտրանը, աւելի շուտ իմացան տեղը և նետի պէս թռան դէպի ձայնը: Գոռոցը հասարակ բառաչ չէր. այդ ձայնը հանում են միայն գազանների ճանկն ընկած ժամանակը, և այդ գիտեն ինչպէս տաւարներն ու մարդիկը, նոյնպէս և շները:

Արեւամանուկը ոչ մի գէնը չունէր, բացի մի հաստագլուխ մահակից: Մահակը ձեռին՝ վազեց շների յետևից և նրանց գտաւ մի ձորակի մէջ հաջելիս: Հեռուից նկատեց, որ մի գազան վայր էր ձգել անագին եզանը, թանթուրները դրել նրա մէջքին, իսկ գլուխը դէպի շները ծռած՝ այնպէս կատաղի կերպով նայում էր, որ աչքերից կրակ էր թափուում: Չները հաջում էին հեռուից, պոչերը ներս քաշած և սիրտ չէին անում գազանին մօտենալ:

Արեւամանուկն էլ չմտածելով, թէ ինչ պէտք է անէր արդեօք՝ սաստիկ բարկացաւ շների վրայ և գոռաց. «Խեղդան, խեղդիր, Գտրան, կտրիր», ու ինքը մի ճարպիկ ոտիւնով թռաւ, ընկաւ գազանի մէջքի վրայ և բռնեց նրա վզիցը: Այդ տեսնելով՝ շները սիրտ առան ու բռնեցին գազանի յետևից: Գազանը բարկացաւ և ցատկեց տեղիցը, բայց նրանից պոկ չեկան ոչ Արեւամանուկը և ոչ շները: Գազանն աւելի կատաղեց. երեսը շրջեց. բաց արաւ անագին ունիւր և ուզում էր Արեւամանուկի գլուխը բռնել ու փշրել. բայց սա իսկոյն ձեռքը ձգեց գազանի բերանն ու լեզուի տակից այնպէս պինդ բռնեց-քաշեց, որ գազանի թանթուրները թուլացան և նա սկսեց խախտացնել: Երբ գազանը խեղճացաւ, թուլացաւ՝ Արեւամանուկը նրան իւր տակն առաւ, աջ ոտքը նոյնպէս կոխեց նրա բերանը և երկու ձեռքով քաշեց նրա լեզուիցը: Այդ միջոցին Խեղդանը բռնեց գազանի բկիցը, Գտրանն էլ փորատակերիցը: Այսպէս միացած ուժով գազանին անշնչացրին, սատկեցրին:

Քափ ու քրտնքի մէջ կորած՝ յետ քաշուեց Արեւամանուկը և նոր տեսաւ, թէ ինչ վիշապ էր իւր սպանածը: Վագր էր, մի անագին ու քաւթաւ վագր, որ բոլոր շրջակայքի վրայ իշխում էր: Նրա երկիւղից ոչ ոք չէր համարձակուում տաւար կամ ոչխար տանել այն տեղերը, ուր որ տարել էր Արեւամանուկը: Ամբողջ գիւղերով աշխատում էին նրան սպանել, բայց չէին կարողանում:

Եզը վաղուց արդէն շունչը փչել էր: Անիրաւ գազանը մի հատ հարուածով կոտրել էր նրա մէջքի սեռը և մի ծուէն կաշի էր հանել:

Արեւամանուկը մաշկեց գազանն ու մորթին քաշ տալով՝ գնաց տուն: Նրա այս քաջագործութեան համբաւը շուտով տարածուեց ամեն տեղ: Տասնևհինգ տարեկան հասակում վագր խեղդել—հեշտ բան չէ: Բայց ով որ իմանում էր, թէ այդ քաջութիւնը Արեւամանուկն էր արել՝ չէր զարմանում. ասում էին, նա կարող է առիւծի բերանն էլ ճղել մէն մենակ, առանց շների օգնութեան:

Արմաւանցիք սովորութիւն ունէին, որ երբ մէկը մի քաջութիւն էր անում՝ նրա վրայ գովասանական երգ էին շինում ու երգում ամեն տօն օր: Երգում էին տղերքն ու աղջկերքը ձեռք ձեռքի բռնած, խմբով ու պարելով: Այս անցքից յետոյ Արեւամանուկի վրայ էլ շինեցին մի գովասանական երգ, որ ասում էին տղերքն ու աղջկերքը փոխ առ փոխ:



### Ո Ս Կ Ի Զ Կ Ն Ի Կ

Ա.

Մի ծերուկ ձկնորս և իւր պառաւ կին  
 Բնակուում էին մեծ ծովի ափին.  
 Ծերը գնում էր, ձուկ բռնում ծովից,  
 Պառաւն էլ տանը թել մանում բրդից:  
 Այսպէս միասին մի հին գետնատան  
 Երեսուն երեք տարի ապրեցան:

Ահա մէկ օր էլ ծերը գնաց ծով,  
 Որ ձուկը որսայ իւր մաշուած ցանցով.  
 Նա ուրախ-ուրախ ցանցը ծով ձգեց,  
 Առաջին անգամ միայն տիղմ հանեց:  
 Երկրորդ անգամը ցանցը ձգեց ծով,  
 Ցանցը դուրս եկաւ ծովային խոտով:  
 Իսկ երրորդ անգամ որ ցանցը ձգեց,  
 Ո՛վ կարէ ասել, թէ ինչ դուրս հանեց.  
 Նա բերաւ իւր հետ մի ոսկի ձկնիկ,  
 Ձկանց արքայի դուստրը գեղեցիկ.  
 Ծերի ցանցն ընկաւ՝ իբրև խեղճ գերի՝  
 Ոսկի աղջիկը ձուկ—թագաւորի:

Խեղճ ոսկի ձկնիկ. ինչպէս է խնդրում,  
 Մարդկային լեզուով ծերին աղաչում.  
 «Թո՛ղ ինձ, թո՛ղ, ծերո՛ւկ, թող ինձ անվտանգ,  
 «Քեզ կըվճարեմ թանկագին փրկանք.  
 «Ինչ սիրտդ ուզի, ինչ որ կամենաս,  
 «Ուզի՞րն եմ ասում, ինձնից կըստանաս»:

Վախեցաւ ծերը, մնաց զարմացած.  
 Նա այնքան տարի ձկնորս էր եղած,  
 Բայց ձկան մասին երբէք չէր լսել,  
 Թէ նա մարդու պէս կարող է խօսել:

— Գնա՛, Տէր ընդ քեզ,— ասաց ծերունին,—  
 «Ինձ չէ հարկաւոր փրկանք թանկագին.  
 «Գնա՛ քեզ համար դու ծիրանի ծով  
 «Ու այնտեղ ապրի՛ր ազատ, ապահով»:

Բ.

Այս դէպքից յետոյ ծերը տուն զարձաւ,  
 Պատմեց պառաւին, թէ ինչ բան տեսաւ.  
 — Այսօր ես ծովից, գիտես ինչ, ա՛ կնիկ,  
 «Բռնեցի յանկարծ մի ոսկի ձկնիկ.  
 «Ոսկի եմ ասում և ոչ քո գիտցած,  
 «Այսպիսի հրաշք ոչով չի տեսած:  
 «Նա խօսել գիտէր ուղիղ մեր լեզուով,  
 «Աղաչանք արաւ, որ յետ ձգեմ ծով:  
 — Թո՛ղ, ասաց, խնդրեմ, թող ինձ անվտանգ,  
 «Քեզ կըվճարեմ թանկագին փրկանք»:  
 «Բայց ես ո՛չ մի բան չպահանջեցի,  
 «Ոչինչ չեմ ուզում, գնա՛, ասացի,  
 «Գնա՛ քեզ համար դու ծիրանի ծով  
 «Ու այնտեղ ապրի՛ր ազատ, ապահով»...

Պառաւը երբ որ այս բանը լսեց,  
 Խեղճ ալևորին խիստ յանդիմանեց,  
 Թէ ինչո՞ւ ձկնից փրկանք չէ ուզել  
 Ու այնպէս ձրի յետ ծովն է ձգել:

— Ա՛յ յիմար անմիտ,— հայհոյեց ծերին,—  
 «Գոնէ կասէիր դու ոսկի ձկին»:

«Մի նոր տաշտակ տո՛ւր, տանեմ իմ կնկան,  
«Մերը կոտրած է, էլ չէ պէտքական»...

Դարձաւ ծերունին, ծովի ափ գնաց.  
(Տեսաւ նա ծովը մեղմիկ ծածանուած).  
Ըսկսեց կանչել ոսկի ձկնիկին.  
Ձուկը լողալով մօտեցաւ ծերին:

— Ի՞նչ ես կամենում, ծերո՛ւկ,— հարցրեց:  
Ծերը գլուխ տուաւ ու պատասխանեց.  
— Ողորմած լինիս, թագուհի-ձկնիկ,  
«Ինձ նախատում է իմ պառաւ կնիկ.  
«Հանգիստ չի թողնում խեղճ ալևորիս,  
«Վրաս մըթմըթում, ուշունց է տալիս.  
«Մի նոր տաշտակ է հարկաւոր իրան.  
«Մերը կոտրած է, էլ չէ պէտքական»...

Ոսկի ձկնիկը ծերունուն խղճաց:  
— Գնա՛, Տէր ընդ քեզ, մի տխրիլ,— ասաց.—  
«Թող քո պառաւը շատ չնեղանայ,  
«Այսօր նա մի նոր տաշտակ կունենայ:

Գ.

Յետ դարձաւ ծերը դէպի իւր տնակ,  
Տեսաւ կնկայ մօտ մի սիրուն տաշտակ.  
Բայց կինը գոհ չէր. նա այս անգամ էլ  
Ըսկսեց ծերին սաստիկ նախատել.  
— Գնացիր, անխելք, տաշտակ ուզեցիր.  
«Ինչո՞ւ մի ուրիշ բան չխնդրեցիր.  
«Յետ գնա՛ շուտով, անմիտ անասուն.  
«Գլուխ տուր նրան և ուզիր մէկ տուն»...

Ծերունին դարձաւ, ծովի ափ գնաց.  
(Այս անգամ տեսաւ ծովը պղտորուած).  
Ըսկսեց կանչել ոսկի ձկնիկին.  
Ձուկը լողալով մօտեցաւ ծերին:

— Ի՞նչ ես կամենում, ծերո՛ւկ,— հարցրեց:  
Ծերը գլուխ տուաւ ու պատասխանեց.  
— Ողորմած լինիս, թագուհի-ձկնիկ,  
«Ինձ շատ նախատեց իմ պառաւ կնիկ.  
«Խեղճ ալևորիս հանգիստ չի թողնում,  
«Հիմա էլ կատղել՝ մէկ տուն է ուզում»:

Ոսկի ձկնիկը ծերունուն խղճաց:  
— Գնա՛, Տէր ընդ քեզ, մի տխրիլ, ասաց.—  
«Թող լինի այնպէս, ինչպէս կամենաք,  
«Դուք ձեր ցանկացած տունն էլ կունենաք»:

Ծերը յետ դարձաւ կրկին դէպի տուն,  
էլ նա չգտաւ իւր հին գետնատուն.  
Մի նոր տուն տեսաւ լուսամուտներով,  
Կտուրից հանած ծխնելոյցներով.  
Պատ ու վառարան մաքուր սուազած,  
Կրով ու կաւով սպիտակացրած.  
Վարպետի տաշած կաղնի տախտակից  
Մեծ գուռն էր կախած լայն բակի կողմից:

Պատուհանի տակ կինն ուռած նստել,  
Իւր չարութիւնից ուզում է տրաքել.  
Ի՞նչ անէ՞ծք ասես աշխարհիս տակին՝  
Բոլորն էլ թափեց խեղճ մարդի գլխին.  
Վերջը՝ երբ փոքր ինչ բարկութիւնն իջաւ,  
Մուտքը կախած ծերունուն դարձաւ.  
— Անշնորհք ծերուկ, տնակ ուզեցիր,  
«Երևի քո մէջ մեծ բան կարծեցիր.  
«Յետ դարձիր, անխելք, յետ դարձիր, գնա՛,  
«Ոսկի ձկնիկին իմ կողմից ասա՛,  
«Որ էլ չեմ ուզում մնալ գեղջուկ կին,  
«Ուզում եմ լինել գերագնիւ տիկին»:

Դ.

Ծերունին դարձեալ ծովի ափ գնաց.  
 (Այս անգամ տեսաւ ծովը վրդովուած.)  
 Ըսկսեց կանչել ոսկի ձկնիկին.  
 Ձուկը լողալով մօտեցաւ ծերին:  
 — Ի՞նչ ես կամենում, ծերուկ, — հարցրեց:  
 Ծերը գլուխ տուաւ ու պատասխանեց.  
 «Ողորմած լինիս, թագուհի-ձկնիկ,  
 «Հանգիստ չի տալիս ինձ իմ չար կնիկ.  
 «Էլ չի կամենում մնալ գեղջուկ կին,  
 «Ուզում է լինել գերագնիւ տիկին:  
 «Ձգիտեմ՝ գլուխն ինչ քամի մտաւ,  
 «Որ գեղջուկութիւնից յանկարծ ձանձրացաւ»:

Ոսկի ձկնիկը ծերունուն խղճաց.  
 — Գնա՛, Տէր ընդ քեզ, մի տխրիլ, — ասաց.  
 «Թող քո պառաւը հէնց այսօրուանից  
 «Ազատ համարուի իւր գեղջուկութիւնից»:

Յետ դարձաւ ծերը և ինչ է տեսնում.  
 (Գարձեց՝ ցնորք է աչքին երևում).  
 Մի տուն հոյակապ. վերնասրահում  
 Պառան է կանգնած՝ ինչպէս նոր խանում,  
 Հագին սամուրէ բաճկոնակ սիրուն,  
 Գլխին դիպակէ չարղաթ գոյնզգոյն,  
 Վիզը զարզարած մարգարիտներով,  
 Մատներին մատնիք, անգին քարերով.  
 Մաշիկներն ինչպէս կաս-կարմիր որդան,  
 Միւս հագուստներն էլ մետաքս պատուական.  
 Ծառաներ ունի միքանի տասնեակ,  
 Բոլորն էլ իրան հլու հպատակ:

Մարդին որ տեսաւ՝ պառաւը կատղեց,  
 Խեղճ ծառաներին ծեծել սկսեց.

(Երևի ուզեց ցոյց տալ իւր մարդին,  
 Որ այժմ ինքն է գերագնիւ տիկին).  
 Հայհոյանք թափեց ամենքի վրայ,  
 Տեղի-անտեղի քօթկեց անխնայ.  
 Մէկի մագերից բռնեց, քաշքշեց,  
 Միւսին էլ մի լաւ ապտակներ դարկեց:

Ծերը մօտեցաւ դող-դող քայլերով,  
 Ասաց պառաւին խոր գլուխ տալով.  
 — Բարով գերագնիւ խանում-խաթունիս.  
 «Հիմա խօս գո՛հ ես, հանգիստ կըլինիս»:

Պառաւ տիկինը այնպէս բղաւեց,  
 Որ խեղճ ծերունու լեղին պատառեց.  
 Նրան հրամայեց, որ իսկոյն գնայ,  
 Գոմն ալէ, քերէ ու այնտեղ մնայ:

Ե.

Մէկ երկու շաբաթ հազիւ անցկացաւ,  
 Պառաւ խանումը նորից կատղեցաւ:  
 — Չուտ կանես, կերթաս, — ասում է մարդին, —  
 «Ու կողմանէ կասես ձկնիկին,  
 «Որ էլ չեմ ուզում տիկնութիւն անել,  
 «Ուզում եմ ազատ թագուհի լինել»:

Այս խօսքի վրայ ծերունին սոսկաց  
 Եւ աղաչելով պառաւին ասաց.  
 — Գժու՛ել ես, ա՛ կնիկ, ես չեմ հասկանում.  
 «Արդեօք դու գիտես, ինչ ես ցանկանում.  
 «Մէկ նայիլ վրայ, շէնք ու շնորհքիդ,  
 «Լըբլըբան լեզուիդ, ծուռումուռ քայլքիդ,  
 «Ախրը ինչ ունիս թագուհու վայել,  
 «Որ խելքիդ այդպէս քամի է փչել:  
 «Արի, լսիլ ինձ, մի անիլ այդպէս,  
 «Ոմբողջ աշխարհին կըծիծաղեցնես»:

էլ չհամբերեց մեր պառաւ տատը,  
 Որ վերջացնէր մարդն իւր խրատը.  
 Նա այնպէս գոռաց, այնպէս որոտաց,  
 Որ ամբողջ տունը հիմնովին թնդաց:  
 — Ի՛նչպէս թէ այդպէս, յանդուզն ըստահակ,—  
 Գոչեց ու զարկեց մի ուժգին ապտակ.  
 «Համարձակում ես, գռեհիկ անգէտ,  
 «Վիճել ինձ նման ազնիւ տիկնոջ հետ.  
 «Քեզ հրամայում եմ պատուաւոր խօսքով,  
 «Որ իսկոյն գնաս քո յօժար կամքով.  
 «Եթէ ո՛չ՝ ահա ժողովուած կշտիդ,  
 «Սրանք կըտանեն, խփելով վզիդ»:

Ծերունին դարձեալ ծովի ափ գնաց.  
 (Այս անգամ տեսաւ ծովը սևացած).  
 Ըսկսեց կանչել ոսկի ձկնիկին.  
 Չուկը լողալով մօտեցաւ ծերին:  
 — Ի՛նչ ես կամենում, ծերուկ, հարցրեց.  
 Ծերը գլուխ տուաւ ու պատասխանեց.  
 — Ողորմած լինիս, թագունի-ձկնիկ,  
 «Էլի է կուում իմ պառաւ կնիկ.  
 «Ներիը ինձ, խնդրեմ, ես ամաչում եմ,  
 «Որ չար պառաւիս նոր ուզածն ասեմ.  
 «Բայց ո՞ր ջուրն ընկնեմ, հանգիստ չի թողնում,  
 «Կրակն է ձգել, այրում, խորովում.  
 «Գնա՛, ասում է,— ախ, նզովեալ կին,—  
 «Չուտ գնա՛, ասա՛ ոսկի ձկնիկին,  
 «Որ էլ չեմ ուզում տիկնութիւն անել,  
 «Ուզում եմ ազատ թագունի լինել»...

Ոսկի ձկնիկը ծերունուն խղճաց.  
 — Գնա՛, Տէր ընդ քեզ, մի տխրիլ,— ասաց.  
 «Թող քո պառաւի ուղածը լինի,  
 «Թող գնայ, դառնայ ազատ թագունի»:

2.

Ո՛վ կարէ պատմել, թէ ծերն ինչ տեսաւ,  
 Երբ ձկան մօտից տուն վերադարձաւ.  
 Էլ ինչ տուն, ինչ բան... դու արքայական  
 Ապարանք ասա՛ կամ հսկայական  
 Մեծ-մեծ պալատներ շարիշար կանգնած,  
 Բարձր բուրգերով շորս կողմը պատած.  
 Չքեղ դահլիճներ, անթիւ սենեակներ,  
 Մարդ կըշշկուէր, եթէ մէջն ընկնէր:  
 Ծերը բարձրացաւ մարմար սանդուխքով,  
 Մի դահլիճ մտաւ խիստ պատկառանքով.  
 Առջևը բացուեց մի նոր տեսարան,  
 Երբ այնտեղ գտաւ իւր պառաւ կնկան.  
 Նա հիմա ազատ թագունի դառած՝  
 Առօք ու փառօք ճաշի է նստած.  
 Մեծ-մեծ իշխաններ, խաներ ու բէգեր,  
 Ոտի են կանգնած՝ որպէս ծառաներ,  
 Թագունու համար գինի են ածում  
 Եւ ահուղողով աչք-ունքին նայում.  
 Չէմքում կանգնել են անեղ զինաւորներ,  
 Ուսերին բռնած կացնաձև սրեր.  
 Մենակ պառաւն էր սեղանին բազմել.  
 Ո՛վ կըյանդգնէր նրա հետ նստել.  
 Բայց կիրակուրներն այնքան շատ էին,  
 Որ հարիւր հոգի կըկշտացնէին.  
 Եւ քանի տեսակ անձանօթ բաներ,  
 Ի՛նչ անուշեղէն, ինչ տապականեր...  
 Պառաւն ուտում էր մեծ ախորժակով  
 Ու գինին դարտկում լիքը բաժակով.  
 Վերջն էլ մեղրահաց կերաւ բաւական,  
 Որ քաղցրացնէ շրթունք ու բերան:  
 Ծերն այս տեսնելով՝ մնաց շփոթուած,  
 Ընկաւ պառաւի ոտներն ու ասաց:

— Բարճով քեզ, բարճով, ահեղ թագուհի,  
 «Քո մեծութիւնը յաւիտեան լինի»:  
 Այս խօսքից յետոյ կամաց շշնջեց  
 Ու փսփսալով պառաւին հարցրեց.  
 — Հիմա որ բաղդի վերին ծայրումն ես,  
 «Խօս բաւական ես, ա՛ կնիկ, ի՛նչ կասես»:

Թագուհի դառած պառաւն այս անգամ  
 Մարդու երեսին շնայեց անգամ.  
 Հրաման մումուաց նա քթի տակին,  
 Որ դուրս վռնդեն մեր անկոչ հիւրին:  
 Հէնց որ լսուեցաւ թագուհու հրաման,  
 Հնազանդ երևալ ամենքն ուզեցան.  
 Մեծ-մեծ իշխաններ, խաներ ու թէգեր,  
 Ինչպէս որսորդի արնախում շներ,  
 Խփելով ծերի շինքակոթին,  
 Զքեղ դահլիճից դուրս վռնդեցին.  
 Զէմբումը կանգնած պահապաններն էլ  
 Իրանց կացիներն էին պատրաստել.  
 Վրայ վազեցին ամենքը մէկէն  
 Ու քիչ մնաց, որ խեղճին խողխողեն.

Ինչպէս որ եղաւ՝ մի կերպ դուրս պրծաւ,  
 Դուրսն էլ ամբոխի ծաղրի տակն ընկաւ,  
 Որ կարծես նրան լինէր սպասում  
 Անձրևի տակին, ցեխոտ փողոցում:  
 — «Ա՛յ թէ լաւ արին, ծերունկ դու անգէտ,  
 «Ո՛ւմ հետ ես մեկնում անճոռնի ոտներդ.  
 «Թող այս քեզ համար լինի լաւ խրատ,  
 «Որ էլ չցանես մանր կտաւատ»:

է.

Այս դէպքից յետոյ շատ օրեր շանցան,  
 Պառաւի այծերն էլի մօտ եկան.  
 Ուղարկում է նա իւր իշխաններին,  
 Որ գտնեն, բերին արտաքսուած ծերին:

Եկաւ ծերունին: Պառաւն սկսեց.  
 — Դու պէտք է գնաս ձկան մօտ, — ասաց.  
 «Գերթաս, խոր գլուխ կըտաս դու նրան  
 «Ու իմ փափագը կըյայտնես իրան.  
 «Գասես՝ չեմ ուզում մնալ թագուհի,  
 «Ուզում եմ լինել ծովի տիրուհի.  
 «Ուզում եմ Ովկեան ծովումը կենալ,  
 «Ոսկի ձկնիկին ծառայ ունենալ,  
 «Որ իմ հրամանին միշտ պատրաստ լինի  
 «Եւ ինչ ուզենամ, իսկոյն կատարի»:

Պառաւին լսեց ծերը լուռ ու մունջ,  
 Առանց յայտնելու որ և է տրտուջ:  
 Ծերունին դարձեալ ծովի ափ գնաց.  
 (Այս անգամ ծովը խիստ էր փոթորկուած.  
 Փրփրած ալիքներ սարեր դառնալով,  
 Իրար են զարկում ահեղ գոռալով):  
 Ողբաձայն կանչեց ոսկի ձկնիկին.  
 Զուկը լողալով՝ մօտեցաւ ծերին:  
 — Ի՛նչ ես կամենում, ծերունկ, — հարցրեց.  
 Ծերը գլուխ տուաւ ու պատասխանեց.  
 — Ողորմած լինիս, թագուհի-ձկնիկ,  
 «Իսպառ գժուել է իմ պառաւ կնիկ.  
 «Ի՛նչ անեմ արդեօք այդ նզովեալին,  
 «Մինչև երբ տանջուեմ քաւթառի ձեռին.  
 «Էլ չի կամենում թագուհի լինել,  
 «Այլ, տես, անիծածն ինչ միտք է արել.  
 «Իշխել է ուզում բոլոր ջրերին  
 «Եւ իշխանուհի դառնալ ծովային.  
 «Ուզում է Ովկեան ծովումը կենալ,  
 «Ոսկի ձկանդ ծառայ ունենալ,  
 «Որ իւր հրամանին միշտ պատրաստ կենաս  
 «Եւ ինչ ուզենայ, շուտ կատարում տաս»...:

Ոսկի ձկնիկը լուռ ու մունջ լսեց,  
Բայց էլ ծերունուն չպատասխանեց.  
Ջրի երեսին շրմիաց պոչով  
Ու անցաւ, գնաց դէպի խորին ծով...

Չատ մնաց ծերը և շատ նայեցաւ,  
Բայց ոսկի ձկնիկն էլ չերևեցաւ.  
Դարձաւ գլխակոր, որ յայտնէ կնկան,  
Թէ ինչ փորձանքի մէջ ձգեց իրան:

Եւ գնաց-տեսաւ... (բայց ինչ տեսնի լաւ,  
Որ արգար լինի և ո՛չ անիրաւ).  
Հին խուղի շէմքում պառաւը նստած,  
Կոտրած տաշտակը առաջնն ընկած...

Վ Ե Ր Ջ

Յ Ա Ն Կ

№№	Երես.	№№	Երես.	
1.	Ծոյլ աշակերտը . . . . .	3	24. 2ի . . . . .	22
2.	Տխուր երեխայ, Գ. Քաթիպա . . . . .	4	25. 2ին և էշը . . . . .	24
3.	Ջանասէր մանուկը . . . . .	—	26. Կով . . . . .	—
4.	Հրաւէր . . . . .	5	27. Կթեղ և հարեղ . . . . .	25
5.	Հայրը և որդիքը . . . . .	6	28. Կթու կով . . . . .	26
6.	Գիւղի գրագէտը . . . . .	7	29. Գառը գայլի մորթով, Կրիլով . . . . .	27
7.	Եղբայրները, Լ. Տօլստոյ . . . . .	—	30. Ագռաւ, փոխ Կրիլովից . . . . .	28
8.	Որրի պահանջը, Մ. Մամիկոնեան . . . . .	8	31. Փիղ, Լ. Տօլստոյ . . . . .	—
9.	Վատ ընկեր . . . . .	9	32. Փիղ և քոթոթ, Կրիլով . . . . .	37
10.	Գիր, Ա. Ծատուրեան . . . . .	10	33. Ոչխարներն ու գայլերը . . . . .	30
11.	Որդիական սէր . . . . .	—	34. Պառան ու գայլը . . . . .	—
12.	Օրորոցի երգ, Գամ.-Քաթիպա . . . . .	—	35. Արագիլ, Պ. Պոստեան . . . . .	31
13.	Հրաշալի խոտ . . . . .	12	36. Պանդուխտ զատանու երգը, Դոդոխեան . . . . .	33
14.	Պապը և թռնիկը . . . . .	—	37. Գայլը և շունը . . . . .	34
15.	Մեծեր և փոքրեր . . . . .	13	38. Լուսնահաշ, Ղ. Աղայեան . . . . .	35
16.	Չունն ու կատուն, Յովհ. Թու- մանեան . . . . .	14	39. Գայլ և սկիւռ . . . . .	—
17.	Ծիծեռնակներն ու ճնճուկը . . . . .	16	40. Պահպանեցէք ձեր բարեկամ- ներին . . . . .	36
18.	Ծիծեռնակի յիշողութիւնը, Ղ. Աղայեան . . . . .	17	41. Մեղուն և արջը, Կ. Մէլիք- Չահաղարեան . . . . .	37
19.	Առիւծը և մուկը Լ. Տօլստոյ . . . . .	18	42. Միջատների կերպարանափոխ . . . . .	38
20.	Մուկն ու կատուն, Խ. Աբովեան . . . . .	19	43. Մեղուն և արծիւր . . . . .	—
21.	Որսորդն ու կաքաւը, «Աղ- բիւրից» . . . . .	20	44. Սարգն ու շերամը, փոխ. Ղ. Աղայեան . . . . .	40
22.	Թութակն ու սոխակը, Ղ. Աղայեան . . . . .	21	45. Մարդը և օձը . . . . .	—
23.	Գերի թութակ, Բաֆֆի . . . . .	22	46. Պարտէղ . . . . .	43

№№	Երես.	№№	Երես
47.	Բոստանչի. Գամառ-Քաթիպա	43	70. Կենդանիների բնակարանները ձմեռ ժամանակ . . . . .
48.	Պարտիզայանն ու իւր որդիքը	44	71. Աղբատուլիւն . . . . .
49.	Ծառիկ. Սըրինգ . . . . .	45	72. Թուշուն. Բարկաս . . . . .
50.	Ծառերի վէճը . . . . .	—	73. Գարնան սկզբին. Տուրգենև . . . . .
51.	Ծառերն ու կացիները. Խ. Արովեան	46	74. Հրուէր գարնան. Գամառ Քաթիպա . . . . .
52.	Երկու խնձորենի . . . . .	—	75. Գարնանը . . . . .
53.	Խողը կաղնի ծառի տակ. Կըրիով	48	76. Հասոյի երգը. Բաֆֆի . . . . .
54.	Աշխատասիրութիւն. Թարգ. Բ. Սերովրեան . . . . .	49	77. Ապրիլ. Գ. Գոսչեան . . . . .
55.	Անտառը և առուակը . . . . .	50	78. Հատիկ Յ. Յովհաննիսեան . . . . .
56.	Առուակ. Զօկ . . . . .	51	79. Մայիսուայ առաւօտը . . . . .
X 57.	Ջրի ճանապարհորդութիւնը. Ուշինսկի . . . . .	52	80. Ամառ . . . . .
58.	Աղբիւր. Ս. Տէր-Մելիք . . . . .	54	81. Ամառը . . . . .
59.	Օդ և քամի . . . . .	55	82. Անձրևի կաթիլ. Ա. Ծատուրեան . . . . .
60.	Բարի գործ. Յովհ. Թումանեան	57	X 83. Երաշտ և անձրև. Ուշինսկի . . . . .
61.	Քամին և արևը . . . . .	—	84. Հունձ . . . . .
62.	Արև. Ղ. Աղայեան . . . . .	58	85. Օտարի օգնութիւնը . . . . .
63.	Կրակ . . . . .	58	86. Աշուն. Գամառ-Քաթիպա . . . . .
64.	Դարբին. Կ. Մ.-Չահնազարեան	60	87. Աշնանը . . . . .
65.	Երկու խոփ . . . . .	—	88. Չհնձած արտ . . . . .
66.	Երկու քոյր. Գամառ-Քաթիպա	61	Արևամանուկ. Ղ. Աղայեան . . . . .
67.	Ձիւն . . . . .	64	Ոսկի ձկնիկ. աղատ. Թարգ. Ղ. Աղայեանի . . . . .
68.	Ձմեռը . . . . .	—	
69.	Ձմեռ. Ղ. Աղայեան . . . . .	66	



« Ազգային գրադարան



NL0242021

## ՅՈՒՀԱՆՆԷՍ ԱՐԱՅԱՋԵԱՆԻ

- |   |         |
|---|---------|
| 1. ՄԱՅՐԵՆԻ ԼԵՂՈՒ ա. տարի (պատ.) . . . . . | 25 կոպ. |
| 2. ՄԱՅՐԵՆԻ ԼԵՂՈՒ բ. տարի (պատ.) . . . . . | 30 կոպ. |
| 3. ՄԱՅՐԵՆԻ ԼԵՂՈՒ գ. տարի (պատ.) . . . . . | 40 կոպ. |

## Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ր Ը

1. Գրքերն ուղարկում են կանխիկ փողով կամ վերադիրը վճարով:
2. Պատուէրները կատարում են առաջուած օրը:
3. Ճանապարհածախսը գնողներին վրայ է:
4. Գումարով գնողներին լինում է սովորական զիջումն:
5. Մեծ քանակութեամբ գնողներին աւելի ձեռնտու պայմաններ:
6. Ցանկացողներին գրքերն ուղարկում են կազմած, խաբանչիւր կազմի համար հաշուելով սւթը կօպէկ:

Դիմել հեղինակին.

Александрополь, Ованесу Арабаджяну.

Գլխաւոր պահեստը Տփլիսում, «Գուտտեմբերգ» զրաւաճառանոցում.  
Тифлисе, Книж. магаз. «Гуттенберг»

Գումարով վաճառում են նաև րոյոր յայտնի զրաւաճառանոցներում: